



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1

**ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՆԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**



999900

008(55)

✓

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՏՈՐ I

ԷԷ860711

**ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

(Ժողովածուն նվիրվում է պ.գ.դ., պրոֆ.
Վահան Բայբուրդյանի ծննդյան 80-ամյակին)

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2015



ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ НАН РА

ВОСТОКОВЕДЕНИЕ В АРМЕНИИ

ТОМ I

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ИРАНИСТИКИ

(Сборник посвящается 80-летию со дня рождения д.и.н,
профессора Ваана Байбуртяна)

ЕРЕВАН

ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА

2015

INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

ORIENTAL STUDIES IN ARMENIA

VOLUME I

TOPICAL ISSUES OF IRANIAN STUDIES

*(The Collection of papers in honour of Prof. Dr. Vahan
Bayburtyan on the occasion of his 80th birthday)*

YEREVAN

“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF NAS RA

2015

PUBLISHED BASED ON THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL OF
THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

Editor-in-Chief:

Ruben Safrastyan, Prof. Dr., Academician of NAS RA

Vice-Editor: Robert Ghazaryan, Assoc. Prof. PhD

Executive secretary: Nazeli Navasardyan, PhD

Editorial Board:

Nikolay Hovhannisyan, Prof. Dr., Corr. member of NAS RA

Vahan Bayburtyan, Prof. Dr.

Aram Kosyan, Prof. Dr.

Pavel Chobanyan, Dr.

Aleksan Hakobyan, Dr.

Lilit Harutyunyan, Assoc. Prof. PhD

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ա 862

**ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ**

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

**ԳԼԽ. ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՌՈՒԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ, պ.գ.թ., դոցենտ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, պ.գ.թ.**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

**ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ, պ.գ.դ., պրոֆ.**

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ, պ.գ.դ., պրոֆ.

ՊԱՎԵԼ ՉՈՒԲԱՆՅԱՆ, պ.գ.դ.

ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ, պ.գ.դ.

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պ.գ.թ., դոցենտ

Ա 862 Արևելագիտությունը Հայաստանում. – Եր.: «Գիտություն», 2015, հ. I:
Իրանագիտության արդի հիմնախնդիրները. 119 էջ :

Ժողովածուն ընդգրկում է 2014 թ. ապրիլի 16-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում անցկացված «Իրանագիտության արդի հիմնախնդիրները» գիտաժողովի նյութերը: Նվիրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ., մեծավաստակ իրանագետ, արևելագետ-պատմաբան Վահան Առաքելի Բայբուրդյանի ծննդյան 80-ամյակին:

ISBN 978-5-8080-1198-4

© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2015



ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ՀԱՅ ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՊԵՏԸ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արտակարգ և լիազոր դեսպան Վահան Բայբուրդյանը ծնվել է 1933 թ. սեպտեմբերի 11-ին Ախալցխա քաղաքում: Նրա մանկությունն ու պատանեկության վաղ շրջանն անցել են կրթական-մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող, հայահոծ և հայաշունչ այդ քաղաքում: Հայրական կողմից նրա նախնիները Կարին (Էրզրում) նահանգի Բաբերդ (Բաբուրդ) քաղաքից էին, մայրական կողմից՝ Էրզրումից: 1829 թ.՝ Ադրիանապոլսի ռուս-թուրքական պայմանագրի կնքումից անմիջապես հետո, չհանդուրժելով օսմանյան անագորույն լուծը, տասնյակ հազարավոր հայերի հետ Կարինի նահանգի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու գլխավորությամբ նրանք գաղթել են ռուսական զորքերի կողմից նոր նվաճված Ախալցխա քաղաքը և հաստատվել այնտեղ: Բայբուրդյանների բազմամարդ գերդաստանը Ախալցխայում հայտնի է եղել «բաբերդցունք» մականունով: Այդ ավանդապաշտ, քրիստոնեական հավատքին ջերմեռանդորեն նվիրված, խոնարհ ու աշխատասեր ընտանիքի անդամները եղել են տոհմիկ արհեստավորներ, որոնք թեև կարողացել են նոր բնակավայրում իրենց համար ապահովել բարեկեցիկ կյանք, սակայն մշտապես ապրել են «կորուսյալ երկրի» կարոտակեզ հուշերով՝ հայրենիքի նկատմամբ սիրո, ջերմության և նվիրվածության զգացումները փոխանցելով իրենց ժառանգներին:

1949 թ. Բայբուրդյանների ընտանիքը տեղափոխվեց Երևան: 1957 թ. ավարտելով Երևանի պետական պետական

համալսարանի բանասիրական ֆակուլտետի իրանական բաժինը՝ Վ. Բայբուրդյանը մեկնեց Մոսկվա՝ իր հետագա ասպիրանտական ուսումնառությունը շարունակելու համաշխարհային համբավ վայելող ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում: Այդ գիտական օջախում ստանալով արևելագիտական փայլուն պատրաստվածություն, հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը՝ 1965 թ. երիտասարդ արևելագետը վերադառնում է Երևան: Անմնացորդ նվիրվելով հայ արևելագիտությանը՝ Վ. Բայբուրդյանի գիտական հետաքրքրություններն ու հետագա ճակատագիրը սերտորեն կապվեցին Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի հետ, որտեղ նա աշխատում է մինչ օրս: Այստեղ բազմաշնորհ գիտնականն անց է կացրել իր ստեղծագործական կյանքի ամենաբեղուն կեսդարյա ժամանակահատվածը և անվիճելի ներդրում ունեցել ակադեմիական այդ բացառիկ կենտրոնի, սկզբում՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի սեկտորի (1958-1971 թթ.), այնուհետև Արևելագիտության ինստիտուտի ձևավորման ու կայացման գործում: Տաղանդաշատ գիտնականը վճռական և կարևոր դեր է խաղացել հայ արևելագիտության ինստիտուցիոնալ և ռազմավարական ուղղությունների ձևավորման ու զարգացման գործում՝ պատմագրությանը ժառանգելով մնայուն և մեծարժեք աշխատություններ իրանագիտության, քրդագիտության, թուրքագիտության, իսլամագիտության, Հայկական հարցի դիվանագիտական պատմության, հայ ժողովրդի քաղաքական պատմության, հայ գաղթօջախների պատմության և այլ գիտակարգերում: Պրոֆեսոր Վ. Բայբուրդյանն արդի հայ իրանագիտության անվիճելի առաջատարն է, ում գիտական մեծածավալ մենագրություններն ու հետազոտությունները հրատարակվել են նաև արտասահմանում տարբեր լեզուներով՝ նրան բերելով միջազգային ճանաչում: Ներկայումս պրո-

Ֆետորն իր ոլորտի ամենահեղինակավոր գիտնականներից է և հայ ժամանակակից արևելագիտության կարկառուն դեմքերից մեկը: Նրա ծանրակշիռ ներդրումն ու պատկառելի ժառանգությունը, ստանալով նաև միջազգային արձագանք, դասել են նրան համաշխարհային արևելագիտության ակադեմիական երկխոսության առանցքային մասնակիցների շարքերը:

Վ. Բայբուրդյանին հատուկ է գիտական ուսումնասիրությունների լայն տեսադաշտը: Նրա գիտական հետաքրքրությունները մշտապես տարբերվել են իրենց ինքնատիպությամբ և բազմակողմ ուղղվածությամբ՝ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների միջազգային հարաբերություններ, Իրանի և Թուրքիայի պատմություն, միջազգային հարաբերություններ, հայագիտություն (այդ թվում՝ նաև քաղաքական հայագիտություն), Հայկական հարցի պատմություն: Մշտապես ստանձնելով ամենաբարդ թեմաների ուսումնասիրությունն ու լուսաբանումը՝ պրոֆետորն իրեն հատուկ լայնախոհությամբ, անգամ գիտության գաղափարայնացվածության խորհրդային տարիներին իր յուրաքանչյուր հետազոտության հիմքում դրել է հայրենասիրությունը, ազգային շահի խոր գիտակցումն ու գիտականության բարձր պատասխանատվությունը, որոնք հատուկ են գիտահետազոտական աշխատանքում իմաստավորված և կայացած մասնագետին: Վ. Բայբուրդյանի ավելի քան կես դար շարունակվող գիտական անձնվեր և անդուլ գործունեության արդյունքն ու արգասիքն ամփոփվել են Հայաստանում և արտասահմանում հրատարակված 15 մեծածավալ մենագրություններում, 120-ից ավելի գիտական հոդվածներում և նրա խմբագրությամբ լույս ընծայված երկու տասնյակի հասնող գիտական աշխատություններում:

Վ. Բայբուրդյանի գիտական հետաքրքրությունների ոլորտում ի սկզբանե հայտնվել են երկու կարևոր թեմաներ՝ հայ առևտրական կապիտալի և Իրանի հայ համայնքի ու հայ-

կական գաղթօջախների պատմությունը: Ինչպես հայտնի է, հայ և հատկապես իրանահայ վաճառական-խոջաները XVI դարից մինչև XVIII դարի կեսերը Արևմուտքի և Արևելքի միջև միջազգային առևտրի կարևոր միջնորդներ էին՝ մրցակիցներ չունենալով հատկապես ցամաքային քարավանային առևտրի բնագավառում: 1969 թ. ռուսաց լեզվով լույս տեսավ պրոֆեսորի «Նոր Ջուղայի հայ գաղթօջախը XVII դարում (Նոր Ջուղայի դերը իրանա-եվրոպական քաղաքական և տնտեսական հարաբերություններում)» մենագրությունը, որը Մոսկվայում պաշտպանել էր որպես թեկնածուական ատենախոսություն: Տարիներ անց՝ 1996 թ., Թեհրանում հրատարակվեց «Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում» ծավալուն ուսումնասիրությունը, որը նույն թվականին Թեհրանում լույս ընծայվեց նաև պարսկերեն թարգմանությամբ: Ժամանակի իրանական մամուլը լայնորեն արձագանքեց այդ գրքին: Այս յուրօրինակ հետազոտությունն անմիջապես իր վրա հրավիրեց հայ և օտարազգի գիտնականների ուշադրությունը՝ արժանանալով նրանց բարձր գնահատականին: Գրքի վերաբերյալ տպագրվեցին մի շարք գրախոսականներ: Այնուհետև, 2004 թ. Հնդկաստանում՝ Նյու Դելի քաղաքում, անգլերենով հրատարակվեց պրոֆեսոր Բայբուրդյանի «Միջազգային առևտուրը և հայ վաճառականները XVII դարում» մեծածավալ աշխատությունը, որն արտասահմանյան գիտական հանդեսներում դարձյալ արժանացավ բարձր գնահատականի: Մասնավորապես ԱՄՆ-ում հանրաճանաչ պատմաբան Ռ. Հովհաննիսյանը, Սիրիայում՝ Թ. Թորոսյանը այդ գրքի մասին հանդես եկան գրախոսականներով: Իսկ գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ Լոս Անջելեսում՝ արժանանալով մի շարք անվանի ամերիկացի գիտնականների հատուկ ուշադրությանը: Վ. Բայբուրդյանի լայն կտավի այս աշխատությունները շարադրված են գիտական շրջանառության մեջ դրված նորահայտ բազմաթիվ աղբյուր-

ների, փաստերի և տարալեզու գրականության հիման վրա և ըստ էության խնդրի ուսումնասիրության բնագավառում միանգամայն ծանրակշիռ ավանդ են, հիրավի նոր խոսք թե՛ իրանագիտության, թե՛ հայագիտության ոլորտում:

Հատուկ ուշադրություն նվիրելով հայ գաղթօջախների և իրանահայ համայնքի հիմնախնդրին՝ 2007 թ. Վ. Բայբուրդյանը հրատարակեց նաև «Նոր Ջուղա» աշխատությունը, իսկ 2013 թ.՝ «Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ» մենագրությունները: Նշված աշխատություններում և խնդրին առնչվող բազմաթիվ հոդվածներում նա բացահայտում է Իրանի հայ գաղթօջախների և իրանահայ համայնքի կարևոր դերակատարումը հայ քաղաքական մտքի ձևավորման ու ազգային-ազատագրական գաղափարների վերելքի գործում, համոզիչ փաստերով ցույց տալիս, որ ուշ միջնադարում ու պատմության նոր շրջանում հայերն իրենց կարևոր ավանդն են ունեցել Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթությունների մշակութային շփումներում: Պատմաբանը հիմնավոր փաստերով զարգացնում է այն հայեցակարգը, որ պատմական ճակատագրի բերումով ապրելով օտար միջավայրում՝ իրանահայությունը կարևոր դեր է խաղացել հայության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում, իսկ Նոր Ջուղան ամբողջ XVIII դարի ընթացքում եղել է հայ մտավոր և տնտեսական կյանքի ամենաաչքի ընկնող կենտրոնը: Հիրավի, պրոֆեսոր Բայբուրդյանը թե՛ հայրենիքում, թե՛ Հայաստանից դուրս ձեռք է բերել հայ առևտրական կապիտալի և Իրանի հայ գաղթօջախների պատմության հմուտ գիտակի համբավ: Պատահական չէ, որ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հենց նրան էր վստահվել շարադրելու «Հայ ժողովրդի պատմություն» (1972 թ.), «Հայոց պատմություն» (2014 թ.) ակադեմիական բազմահատորյակների՝ Իրանի հայ գաղթօջախներին նվիրված բաժինները:

Վ. Բայբուրդյանի ուշադրության կենտրոնում են մշտապես եղել Իրանի և Օսմանյան կայսրության պատմության բազմաբովանդակ խնդիրները, որոնց վերաբերյալ հրատարակել է մեծ թվով խորքային ուսումնասիրություններ: Նա առաջինն է համակողմանի քննության ենթարկել XX դարի սկզբի թուրք-իրանական հարաբերությունները՝ բացահայտելով Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանում այդ երկու առաջատար պետությունների միջպետական հարաբերությունների առանձնահատկությունները: Նրա «Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914 թթ.» ծավալուն մենագրությունն (1974 թ.) իր բնույթով եզակի ուսումնասիրություն է, որը 1975 թ. նա հաջողությամբ պաշտպանել էր որպես դոկտորական ատենախոսություն և չափազանց մեծ ուշադրության արժանացել գիտական շրջանների կողմից: Այն թարգմանվել է պարսկերեն և 1989 թ. լույս ընծայվել Սպահանում՝ համառոտագրված տարբերակով՝ «Թուրքիայի քաղաքականությունը Իրանի նկատմամբ XX դարի սկզբներին» վերնագրով: Աշխատության առանձին բաժիններ լույս են տեսել Ստամբուլի մամուլում՝ թուրքերեն: 1999 թ. լույս տեսավ Վ. Բայբուրդյանի «Իրանն այսօր» մեծածավալ աշխատությունը: Նրանում առաջին անգամ լուսաբանվել են նաև նորանկախ Հայաստանի և Իրանի՝ երկու հարևան և ինքնիշխան պետությունների միջև միջպետական պաշտոնական հարաբերությունների հաստատման հիմքերը: Թեև Հայաստանի անկախության հռչակումից հետո երկար ժամանակ չէր անցել, այդուհանդերձ հեղինակը լավագույնս ներկայացրել է Հայաստանի համար տարածաշրջանային այդ առանցքային պետության հետ հարաբերությունների առաջնահերթություններն ու հեռանկարները՝ երկու դրացի պետությունների միջև քաղաքական, առևտրատնտեսական, մշակութային բնագավառների ռազմավարական կարևոր ծրագրերի շեշտադրմամբ, որոնք անկասկած կմնան հայ ժամանակակից իրա-

նագիտության հետագա ուսումնասիրությունների ուղեծրում: Գրքում առանձին տեղ է հատկացվել Իրանի հայ գաղթօջախի պատմությանը, համայնքային խնդիրների լուսաբանմանը: Վ. Բայբուրդյանը հանդես է եկել նաև մի շարք ուշագրավ հոդվածներով՝ նվիրված հայ-իրանական հարաբերություններին՝ Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո: Տասնամյակների գիտահետազոտական բովով անցած պատմաբանը, ով հիանալի պատկերացնում է Իրանի պատմության ամենախրթին ծալքերը, հայ արևելագիտության պատմության մեջ առաջինը նախաձեռնեց այդ երկրի ամբողջական պատմության շարադրումը: 2005 թ. ընթերցողի սեղանին դրվեց մեզանում նախատիպը չունեցող եզակի մի հիմնարար աշխատություն, որում հեղինակը խորամուխ է եղել Իրանի քաղաքական, տնտեսական, մշակութային բոլոր հանգուցային իրադարձություններին և զարգացումներին՝ ընդգրկելով Իրանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: 2006 թ. լույս տեսավ այդ աշխատության երկրորդ լրամշակված հրատարակությունը:

Վ. Բայբուրդյանն իր ուրույն տեղն ու ներդրումն ունի նաև հայ օսմանագիտության բնագավառում: 2011 թ. լույս տեսավ Բայբուրդյանի «Օսմանյան կայսրության պատմություն» ծավալուն մենագրությունը, որտեղ հեղինակը հանրագումարի է բերել այդ պետության պատմությանը վերաբերող վերջին տասնամյակում հայրենական և արտասահմանյան թուրքագետների կատարած հետազոտությունների արդյունքները: Գրքում շարադրված է Օսմանյան կայսրության պատմությունը՝ սկսած թյուրքալեզու ցեղերի՝ Փոքր Ասիա ներթափանցումից և թուրք-օսմանների պետության կազմավորումից մինչև այդ կայսրության կործանումը:

Վ. Բայբուրդյանը միաժամանակ քուրդ ժողովրդի պատմության և հատկապես հայ-քրդական հարաբերությունների բնագավառում համաշխարհային ճանաչում վայելող մասնա-

գետ է: Նա առաջիններից մեկն էր, ով ձեռնամուխ եղավ հայ-քրդական հարաբերությունների պատմության հարցերի ուսումնասիրությանը: Հիմնախնդրի շուրջ հետազոտություններն անվանի գիտնականի երկարամյա տքնաջան աշխատանքի արդյունքն են, և նրա ներդրումն այդ բնագավառում արժանացել է միջազգային գիտական հանրության ճանաչմանը: Նրա «Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին» (1989 թ.), «Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո» (2008 թ.) մենագրությունները լայն ընդգրկումով հիմնարար աշխատություններ են, որոնցում հսկայական փաստագրական նյութի բազմակողմ ուսումնասիրության հիման վրա առաջ են քաշվում հայ և քուրդ ժողովուրդների պատմության վիճելի կամ առհասարակ չհետազոտված հիմնախնդիրների և իրադարձությունների նորովի մեկնաբանություններ ու վերլուծություններ: Ի դեպ, «Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո» աշխատությունն արժանացել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ համատեղ սահմանված առաջին մրցանակի և «Դուրբես Ջոհրաբ Լիբման ֆոնդի» դրամաշնորհով թարգմանվել է անգլերեն և 2013 թ. հրատարակվել Կանադայում: Անկասկած կարելի է փաստել, որ Վ. Բայբուրդյանի քրդագիտական ուսումնասիրությունները խոշոր նպաստ են նաև հայագիտության բնագավառում: Դրանցում քննարկվում են Օսմանյան կայսրության, այնուհետև նաև հանրապետական Թուրքիայի կազմում քուրդ ժողովրդի քաղաքական և տնտեսական պատմության դրվագները, հայ-քրդական հարաբերությունների պատմությունը, հայկական ու քրդական հարցերի արձարձումները միջազգային դիվանագիտական աստիճաններում: Վ. Բայբուրդյանի քրդագիտական հետաքրքրություն-

ները ներկայացված են նաև բազմաթիվ ուշագրավ հոդվածներում, որոնցից են՝ «Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիներին», «XX դարի 20-30-ական թվականների քրդական ապստամբությունները և թուրք-իրանական հարաբերությունները», «Քրդական գործունը Հայկական հարցի, արևմտահայերի զանգվածային ջարդերի և Հայոց ցեղասպանության մեջ», «Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները 1918-1920 թթ.», «Քրդական հարցը հանրապետական Թուրքիայում» և այլն: Բեղմնավոր գրչի տեր գիտնականի տեսադաշտում են մշտապես եղել Հայկական հարցի, արևմտահայոց ցեղասպանության, հայ ժողովրդի պատմության բազում այլ հարցերին նվիրված հետազոտությունները: Հայկական հարցի ուսումնասիրությունը նրա կողմից կատարվել է յուրահատուկ ձևով՝ քուրդ ժողովրդի պատմության հետ սերտ առնչությամբ, քննարկվել են երկու դրացի ժողովուրդների պատմության աղբյուրները վերջին մի քանի դարերի ընթացքում: Դա միանգամայն արդարացված մոտեցում է, քանի որ Արևմտյան Հայաստանի տարածքում հայերն ու քրդերը կողքկողքի ապրել են մի քանի դար շարունակ, և նրանց քաղաքական պատմության զուգահեռ ուսումնասիրությունը հետազոտողի համար բացահայտում է նոր իրողություններ և փաստարկներ:

Վ. Բայբուրդյանի՝ պատմաբան-հետազոտողի և բարձր որակավորում ունեցող արևելագետի բնորոշ հատկանիշն է գիտական անխոնջ որոնումների ձգտումը: Նա իր հետազոտությունները շարադրում է լայն հայացքով, ծավալուն ընդգրկմամբ և գեղեցիկ հայերենով: Շնորհիվ իր լայնախոհության, վերլուծական ընդգրկուն հնարավորությունների՝ Վ. Բայբուրդյանի գիտական պրպտումների առարկա են դարձել նաև իսլամագիտությունը, մասնավորապես իսլամական գոր-

ծոնը Մերձավոր և Միջին Արևելքի արդի միջազգային հարաբերություններում:


Պրոֆեսորի անսպառ եռանդն ու աշխատասիրությունը դրսևորվել են նաև մանկավարժության և գիտակազմակերպչական գործունեության բնագավառներում: Նա զբաղեցրել է ակադեմիական ու բուհական բարձր պաշտոններ, արժանացել տարատեսակ շքանշանների և մրցանակների: Վ. Բայբուրդյանը երկար տարիներ եղել է Արևելագիտության ինստիտուտի գիտական քարտուղար, ավագ գիտաշխատող, աղբյուրագիտության պրոբլեմատիկային խմբի ղեկավար, Իրանի բաժնի վարիչ, Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, ռեկտորի պաշտոնակատար, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ:

Մեծ է Վ. Բայբուրդյանի վաստակը նաև հայ արևելագետների նոր սերնդի և միջազգայնագետ կադրերի ձևավորման գործում: Նա մոտ 50 գիտաշխատողների գիտական ղեկավար է եղել և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդրդի անդամ է: Նրա վաստակն ուսանելի փորձ է եկող սերնդի համար: Մեծանուն և բազմաշնորհ գիտնականը, տիրապետելով գիտահետազոտական հետաքրքրությունների տասնյակի հասնող և էապես իրարից տարբերվող ոլորտների, մոտ կես դար Երևանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդել է արևելագիտությանը, հայագիտությանը և միջազգային հարաբերություններին վերաբերող առարկաներ՝ իր հարուստ գիտելիքներն անմնացորդ նվիրելով իր սաներին: Ներկայումս էլ, շնորհիվ Վ. Բայբուրդյանի, հայ ուսանողների ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ այնպիսի հատուկ դասընթացներ, ինչպի-

սիք են՝ «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը», «Իսլամական գործունը արդի միջազգային հարաբերություններում», «Հայաստանի Երրորդ հանրապետության միջազգային հարաբերությունները և արտաքին քաղաքականության արդի խնդիրները», «Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները» և այլ կարևոր և ռազմավարական հիմնախնդիրներ:

Նա կոլեկտիվ կամ ընդհանրացնող շատ աշխատանքների համահեղինակ է, խմբագիր կամ գրախոս և գործուն մասնակցություն ունի հայագիտության, արևելագիտության բնագավառում գիտական հրատարակությունների գործում: Պրոֆեսոր Բայբուրդյանն արևելագիտական, հայագիտական, միջազգային հարաբերություններին վերաբերող զգալի թվով հրատարակություններ է գրախոսել և խմբագրել: Պրոֆեսորը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի խմբագրական խորհրդի և «Հայաստանի հարակից երկրների պատմություն» քառահատորյակի խմբագրական խորհրդի անդամ է և «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի պատասխանատու խմբագիրը: Տարիներ շարունակ նա եղել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհուրդների անդամ, մասնակցել և հայ արևելագիտական միտքը հաջողությամբ ներկայացրել է միջազգային և հայրենական տարբեր գիտաժողովներում:

Խորագետ տաղանդավոր պատմաբան լինելուց բացի, Վ. Բայբուրդյանը նաև հմուտ դիվանագետ է: 1992 թ. Արևելքի անվիճելի գիտակը, հմուտ իրանագետը նշանակվեց նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին գործերի հավատարմատար (1992-1994 թթ.), իսկ ապա նաև առաջին ար-



տակարգ և լիազոր դեսպանը (1994-1998 թթ.) Իրանի Իսլամական Հանրապետությունում: Իրանում նրա պաշտոնավարման ժամանակահատվածը ծայրահեղ դժվարին տարիներ էին Հայաստանի նորանկախ Հանրապետության համար: Արցախում կենաց-մահու պատերազմ էր, իսկ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից շրջափակման օղակի մեջ վերցված Հայաստանն ապրում էր տնտեսական ճգնաժամ: Նման պայմաններում Հայաստանի հարավային հարևան Իրանը մեր հանրապետության համար դառնալու էր արտաքին աշխարհի հետ կապ հաստատելու եզակի ուղի և առկա տնտեսական խնդիրները լուծելու կարևորագույն գործընկեր: Իզուր չէ, որ այդ տարիներին ժողովուրդն Իրանը Հայաստանին կապող ճանապարհն անվանեց «փրկության ճանապարհ»: Վեց տարի անընդմեջ դեսպան Վ. Բայբուրդյանն Իրանում իր դիվանագիտական առաքելությունն իրականացրեց ուժերի ծայրաստիճան լարումով, ներշնչմամբ և բարձր պատասխանատվությամբ, իսկ ամենակարևորը՝ մեծագույն արդյունավետությամբ, որն ակնհայտորեն դրսևորվել է հայ-իրանական բազմաբնույթ հարաբերություններում: Հաղթահարելով դժվարին ճանապարհ՝ նա մեծ նպաստ է բերել հայրենիքին ու հարազատ ժողովրդին՝ միաժամանակ նպաստելով հայ-իրանական միջպետական հարաբերությունների վերընթաց զարգացմանը: Լայն մտահորիզոնով, մտքի ճկունությամբ օժտված Վ. Բայբուրդյանն այս պատասխանատու աշխատանքում մշտապես դրսևորել է ոչ միայն դիվանագետի համար խիստ կարևոր գործնական խառնվածք, պրոֆեսիոնալ վարքագիծ, գործի հիանալի իմացություն, այլև իր հայրենիքի պետական շահի գիտակցման, նրա ռազմավարական առաջնահերթությունները հստակ գնահատող անձնվեր զավակի անմնացորդ նվիրվածություն:

Անկախ զբաղեցրած պաշտոնից ու դիրքից՝ գործընկերներն ու սաները նրան ճանաչում են որպես բարյացակամ,

պատրաստակամ, ընկերասեր անձնավորության: Նրա անձի մեջ համատեղված են ոչ միայն արտասովոր աշխատասիրության տեր ներհուն և տաղանդավոր գիտնականը, այլև ազնիվ ու բարեկիրթ մարդը: Վ. Բայբուրդյանին բնորոշ են իսկական մտավորականի բարձր հատկանիշները և մարդկային ազնիվ նկարագիրը:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի բոլոր աշխատակիցները մեծանուն գիտնականին ի սրտե ցանկանում են արևշատություն և հետագա գիտական բեղմնավոր գործունեություն:

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, դիվանագետ, արտակարգ և լիազոր դեսպան Վահան Առաքելի Բայբուրդյանի՝ այդ վառ անհատականության տեր մարդու անցած ուղին, հիրավի, հարազատ ժողովրդին, հայոց պետականությանը, գիտությանը, հայ երիտասարդության կրթության և դաստիարակության գործին անմնացորդ նվիրումով ծառայելու փայլուն օրինակ է:

Պրոֆեսոր Վ. Բայբուրդյանն իմ կյանքի ճանապարհին հանդիպած ամենահետաքրքիր անձնավորություններից մեկն է: Բազմակողմանիորեն զարգացած, գիտական բացառիկ ընդունակություններով օժտված, մարդկային ու քաղաքացիական հարուստ նկարագրի տեր, մտավորականի տիպար:

Որպես տաղանդավոր պատմաբան՝ չափազանց մեծ է նրա գիտական վաստակը արևելագիտության, հայագիտության, քրդագիտության, միջազգային հարաբերությունների այլևայլ հարցերի ուսումնասիրության բնագավառում: Առհասարակ նշանակալից է նրա վաստակը հայ գիտական մտքի զարգացման գործում: Չափազանց լայն ու ընդգրկուն են նրա գիտական մտահորիզոնը, ինչպես նաև գիտական հետաքրքրությունների շրջանակը: Պրոֆեսոր Վ. Բայբուրդյանը միջազգային լայն ճանաչում ունեցող գիտնական է: Նրա գիտական հետազոտություններն ամփոփված են Հայաստանում և արտասահմանյան տարբեր երկրներում (Ռուսաստան, Ֆրանսիա, Կանադա, Հնդկաստան, Իրան, ԱՄՆ և այլն) հրատարակված մենագրություններում և հոդվածներում, որոնք մնայուն և հիմնարար աշխատություններ են:

Ստեղծագործական խառնվածքի տեր այդ գիտնականի տաղանդավոր գրչով գրված աշխատությունները և առհա-

սարակ նրա առինքնող կերպարն առաջ են բերում մեր անկեղծ և խորը հարգանքի զգացումը:

Պրոֆ. Վ. Բայբուրդյանը գիտության ու կրթության հմուտ կազմակերպիչ է, նաև բեղուն մանկավարժ: 2001-2008 թվականներին, երբ նա ղեկավարում էր Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնը, այնտեղ մշտապես թևածում էին ստեղծագործական խոյանքի ոգին և գիտականության մթնոլորտը: Այդ տարիներին նրա ջանքերով ուղենշվեցին միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն մասնագիտության հիմնական ուղղությունները, կազմվեցին առարկայական ծրագրեր, մտցվեցին արդիականությամբ շնչող նոր առարկաներ և այլն: Անչափ մեծ է պրոֆ. Վ. Բայբուրդյանի ներդրումը մեր հանրապետությունում միջազգայնագետ կադրերի, ինչպես նաև ապագա դիվանագետների պատրաստման գործում: Առհասարակ նա երբեք չի զլացել իր հարուստ գիտելիքներն ու փորձն անմնացորդ նվիրելու իր սաներին: Վ. Բայբուրդյանի հմուտ ղեկավարությամբ բազմաթիվ ասպիրանտներ, հայցորդներ ու գիտական աշխատողներ պաշտպանել են ատենախոսություններ:

Այդ ընդունակ և օժտված մարդու տաղանդը փայլատակել է նաև դիվանագիտության բնագավառում: Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո Վ. Բայբուրդյանը եղել է Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության առաջին արտակարգ և լիազոր դեսպանը: Լինելով պրոֆեսիոնալ իրանագետ՝ նա կարողացավ իր այդ պատասխանատու պաշտոնը ծառայեցնել ի շահ սեփական ժողովրդի ու հայրենիքի: Նրա վիթխարի եռանդի, գործի, հիանալի իմացության և մտքի ճկունության շնորհիվ ոչ միայն նշանակալից չափով հաղթահարվեց Հայաստանի Հանրապետության տնտեսական մեկուսացումը, այլև դրվե-

ցին հայ-իրանական միջպետական հարաբերությունների զարգացման կայուն հիմքերը:

Վահան Բայբուրդյանը ջերմ հայրենասեր է, հայ ժողովրդի շահերի համոզված պաշտպան և ջատագով: Նա հայրենիքի գաղափարը բարձր է համարում ամեն ինչից: Երբեք չի զլացել հայրենիքի խորանին դնելու իր մեջ եղած լավագույնը: Որպես անհատականություն՝ հեռու է ազգային նեղմտությունից, լայնախոհ է և հաստատուն հայացքների տեր: Խստապահանջ է, բայց միևնույն ժամանակ մարդկայնորեն զգայուն: Ծայրաստիճան բարի, բարյացակամ և հմայիչ մարդ է, հոգով շռայլ, անբռնազբոսիկ: Ոգևորվում է այն ամենով, ինչ որ լավն է: Սիրում է ճշտապահությունն ու կարգապահությունը: Նա նաև կյանքի մարդ է, սրամիտ, աշխույժ խառնվածքի տեր, առինքնող իր անկեղծությամբ ու շիտակությամբ:

Անկասկած այդ մեծ մտավորականը, գիտնականը, ուսուցչապետը, դիվանագետը և բազում այլ արժանիքներով շռայլորեն օժտված հայորդին իր մշտամնա տեղն ունի մեր երախտավորների շարքում:

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
դեկան**

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳԾՈՎ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԽՈՍՔԸ

Հանուն Աստծո

Այս ժողովածուն, որը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողների տքնաջան աշխատանքի շնորհիվ է լույս ընծայվել, Իրան-Հայաստան դարավոր բարեկամության, նաև Մերձավոր և Միջին Արևելքում երկու ժողովուրդների նշանակալից դերակատարության խոսուն վկան է:

Բարձր գնահատանքի է արժանի այն փաստը, որ ժողովածուն նվիրվում է պրոֆեսոր Վահան Բայբուրդյանին, ով իր բեղմնավոր կյանքի ավելի քան 60 տարին նվիրել է Հայաստանի գիտական ոլորտի զարգացմանը, միևնույն ժամանակ մեծ դեր կատարելով Իրանի և Հայաստանի ժողովուրդների կապերի ամրապնդման գործում:

Պրոֆեսոր Վահան Բայբուրդյանն այս տարիների ընթացքում, օգտագործելով իր գիտական փորձը հատկապես արևելագիտության և իրանագիտության ոլորտում, ջանք չի խնայել Իրանի և Հայաստանի ժողովուրդների բարեկամությունն էլ ավելի սերտացնելու ուղղությամբ:

Անկարելի է մոռանալ մեծ գիտնականի դերը Իրան-Հայաստան կապերի ամրապնդման ուղղությամբ, երբ նա ստանձնեց Իրանում Հայաստանի առաջին դեսպանի պաշտոնը:

ՄԱՋԻԴ ՄԵՇԲԻ

کتاب حاضر که حاصل تلاش محققان و شناسی آکادمی ملی علوم اساتید دیارتمان شرق ای قابل تقدیری است که ارمنستان می‌باشد، مجموعه از روابط دیرینه‌ی دو کشور ایران و ارمنستان و نیز نقش مهم دو ملت ارمنی و ایرانی در منطقه‌ی آسیای مرکزی حکایت دارد.

بر اساس یک سنت دیرینه این گونه محصولات علمی به پیشکسوتان و بزرگان علمی همان رشته‌ها تقدیم می‌گردد و قرار است این مجموعه نیز به جناب آقای پروفیسور واهان بایبورتیان تقدیم گردد؛ کاری که به نوبه‌ی خود تحسین برانگیز است. پروفیسور بایبورتیان که بیش از شصت سال از عمر خود را در راه خدمت به علم و دانش ارمنستان سپری نموده، نقش مهمی در روابط ایران و ارمنستان ایفا کرده و با بهره‌مندی از دانش آکادمیک در زمینه‌ی شرق شناسی و بویژه ایران شناسی، در عرصه‌های عملی آموخته‌های خویش را در راه شکوفایی روابط دو کشور ایران و ارمنستان بکار بسته است. نقش ایشان در توسعه روابط دو کشور به عنوان اولین سفیر جمهوری ارمنستان در جمهوری اسلامی ایران و خدمات ایشان در شناساندن فرهنگ، اقتصاد، سیاست و حکومت ایران به جامعه ارمنستان فراموش ناشدنی است.

اینجانب ضمن سپاس و قدردانی از محققان و اندیشمندانی که در تهیه‌ی این مجموعه‌ی عالمانه نقش داشته‌اند، از جناب پروفیسور بایبورتیان برای خدمات صادقانه به جمهوری ارمنستان و نیز جمهوری اسلامی ایران تقدیر و سپاسگزاری می‌نمایم و برای ایشان عمری با عزت، سلامت و سربلندی از خدای متعال آرزومندم.

مجید مشکی

رایزن فرهنگی سفارت جمهوری اسلامی ایران -

ارمنستان

پاییز 1394

**ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՈՒ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ**

1933 թ. սեպտեմբերի 11-ին ծնվել է Վրաստանի Ախալցխա քաղաքում: Որդին է Առաքել Վահանի Բայբուրդյանի (արհեստագործ) և Թագուհի Հայկի Բայբուրդյանի (տնտեսուհի):

1940-1948 թթ. սովորել է Ախալցխայի հայկական միջնակարգ դպրոցում:

1951 թ. ավարտել է Երևանի 26 կոմիսարների անվան հայկական միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ:

1952-1957 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան (պարսկական) բաժինը: Եղել է Ա. Շիրվանզադեի անվան թոշակառու:

1959-1961 թթ. աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորի Իրանի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող:

1961-1964 թթ. սովորել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորի ասպիրանտուրայում՝ ուսումնառությունն անցկացնելով Մոսկվայում, ԽՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտում (ներկայումս՝ ՌԴ ԳԱ արևելագիտության ինստիտուտ):

1965 թ. Մոսկվայում՝ ԽՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտում, պաշտպանել է ատենախոսություն «Նոր Զուղայի հայկական գաղթօջախը XVII դարում (Նոր Զուղայի դերը Իրանի և եվրոպական երկրների միջև քաղաքական-տնտե-

սական հարաբերություններում)» թեմայով և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1965-1980 թթ. աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորում (1971 թ. Արևելագիտության ինստիտուտ)՝ սկզբում որպես գիտական աշխատող, 1966-1987 թթ.՝ նաև որպես գիտական քարտուղար, 1977-1980 թթ.՝ ավագ գիտական աշխատող, արևելյան աղբյուրագիտության պրոբլեմային խմբի վարիչ:

1966-1980 թթ. համատեղության կարգով սկզբում դոցենտի, այնուհետև պրոֆեսորի գիտական կոչումներով աշխատել է Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ընդհանուր պատմության ամբիոնում:

1975 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914 թթ.» թեմայով և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1979 թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

1980-1987 թթ. աշխատանքի է հրավիրվել Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտ՝ որպես ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ:

1987-1992 թթ.՝ Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1987-1989 թթ.՝ նույն ինստիտուտի ռեկտորի պաշտոնակատար:

1992-1994 թթ.՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար:

1994 թ. ստացել է արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան:

1994-1998 թթ.՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության առաջին արտակարգ և լիազոր դեսպան:

1998 թ. ՀՀ արտաքին գործերի նախարարի արտահաստիքային խորհրդական:

1998 թ. մինչև օրս՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ:

2000 թ. մինչև օրս՝ Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի պրոֆեսոր:

2001-2008 թթ.՝ Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ:

1999-2010 թթ. համատեղության կարգով Երևանի Հր. Աճառյան համալսարանում աշխատել է արևելագիտության և ռոմանագերմանական ֆակուլտետների դեկանի, արևելագիտության ամբիոնի վարիչի պաշտոններում:

1966-2015 թթ. Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում, Երևանի պետական համալսարանում, Երևանի Հր. Աճառյան համալսարանում վարել է «Ասիայի և Աֆրիկայի երկրների նոր և նորագույն պատմություն», «Վրաստանի պատմություն», «Իրանի պատմություն», «Հայ դիվանագիտության պատմություն», «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը», «Իսլամական գործոնը արդի միջազգային հարաբերություններում», «Իրանի երկրագիտություն», «Հայ-քրդական հարաբերությունների պատմություն», «Հայաստանի Երկրորդ հանրապետությունը միջազգային հարաբերություններում և արտաքին քաղաքականության արդի խնդիրները», «Իսլամագիտություն» դասընթացները: Ղեկավարել է երկու տասնյակ ասպիրանտների, որոնք պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ: Եղել է մի շարք գիտական, գիտա-

մեթոդական և խմբագրական խորհուրդների անդամ, ՀՀ
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և Խ. Աբովյանի ան-
վան Հայկական պետական մանկավարժական համալսա-
րանի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական
խորհուրդների անդամ: Մասնակցել է բազմաթիվ արևելագի-
տական, հայագիտական միջազգային գիտաժողովների,
կոնգրեսների, ինչպես նաև դիվանագիտական «կլոր սեղան-
ների» քննարկումների:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԻ
ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1964 թ.

1. Посредническая роль новоджувльфинских купцов в дипломатических отношениях Ирана с западноевропейскими странами в начале XVII в. “Краткие сообщения Института Народов Азии АН СССР”, 1964, 77, с. 84-100.
2. Торговый договор английской Ост-Индской компании с армянскими купцами Новой Джульфы (1688 г.) “Тезисы и планы докладов конференции аспирантов и научных сотрудников Института Народов Азии АН СССР”, 1964 г., с. 87-89.
3. Նոր Զուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, 9, էջ 39-52:

1965 թ.

4. Армянская колония Новой Джульфы (Роль Новой Джульфы в ирано-европейских экономических взаимоотношениях). Автореферат кандидатской диссертации, Москва, 1965 г., с. 1-18.

1966 թ.

5. Նոր Զուղայի վաճառականությունը և արևմտաեվրոպական կապիտալի տնտեսական էքսպանսիան Իրանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, 3(34), էջ 215-220:

1968 թ.

6. Արևելագիտությունը Հայաստանում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, 11 (306), էջ 43-53:

1969 թ.

7. Армянская колония Новой Джульфы в XVII в. (Роль Новой Джульфы в ирано-европейских экономических связях), Изд. АН АРМ. ССР, Ереван, 1969, 166 с.

8. Իրանում իմպերիալիստական Գերմանիայի քաղաքականության հարցի շուրջը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 1969, IV (Իրան), էջ 5-42:

1970 թ.

9. Թուրքիայի քաղաքականությունը Իրանի նկատմամբ XIX դարի սկզբին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, V (Թուրքիա), 1970, էջ 319-356:

10. Արևելագիտություն, համահեղինակ՝ Հ.Գ. Ինճիլյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, 4 (51), էջ 145-158:

1972 թ.

11. Նոր Զուղայի հայ գաղթօջախը, Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1972, էջ 324-337:

1973 թ.

12. Օսմանյան Թուրքիայի ինտերվենցիան Իրանում 1905-1911 թթ., «Պատմա-բանասիրական հանդես», 1973, 4(63), էջ 92-104:

13. ՀԽՍՀ Արևելագիտության ինստիտուտը, «Խորհրդային Հայաստան» ամսագիր, 1973, 6, էջ 11-19:

1974 թ.

14. Թուրք-իրանական հարաբերությունները 1900-1914 թթ., ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974, 384 էջ:

15. Թուրքական քաղաքացիական վարչությունը Իրանի օկուպացված տերիտորիաներում 1909-1912 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, 1, էջ 119-134:

16. Իրանը երիտթուրքական կառավարության պլաններում (1913-1914 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, 2, էջ 21-30:

1975 թ.

17. Հայ իրանագիտությունը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, VII (Իրան), 1975, էջ 116-165:

18. Автореферат на соискание ученой степени доктора исторических наук, "Турецко-иранские отношения в 1900-1914 гг.", изд. АН Арм. ССР, Ереван, 1975, с. 1-78.

1976 թ.

19. Սիասաթ-ե թորքիե ներքաթ բե Իրան դար ավալ-ե դարն-ե բիւթոմ (պարսկերեն), Սպահան, 1976 թ., 81 էջ:

1977 թ.

20. Գրախոսություն Հ. Գ. Ինճիկյան, Օսմանյան կառավարության բուրժուազիան, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, 6, էջ 111-113:

21. Գրախոսություն Исмаил Раин, Всеобщее избиение армян в период господства Османских султанов, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, 1, էջ 100-103:

22. **Գորդլևսկի Վ.Ա.**, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, էջ 165:

1978 թ.

23. Քրդական պրոբլեմը թուրք-իրանական հարաբերություններում XIX դարի վերջին XX դարի սկզբին, Իրանագիտության հարցեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, էջ 48-54:

24. Գրախոսություն. Ives TERNON. Les arme' niens, histoire d'un genocide, Paris, 1977, 315 p., **Իվ Տերնոն**, Հայերը. մի ցեղասպանության պատմություն, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, 2, էջ 107-110 (համահեղինակ՝ Հովհաննես Թովուզյան):

25. Հայերը Իրանում (համահեղինակ՝ Ռ. Կոզմոյան), Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, էջ 450-452:

26. Հայերը Թավրիզում, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, էջ 143:

27. Հայերը Թեհրանում (համահեղինակ՝ Ռ. Կոզմոյան), Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, էջ 164:

1979 թ.

28. Գրախոսություն. Զ.Ս. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, 2, էջ 102-104:

29. Գրախոսություն. Jean-Marie Garzou, Un Genocide exemplaire, Armenie, 1915, Paris, 1975, 243 p., **Ժան Մարի Գարզու**, Մի իսկական ցեղասպանություն, Հայաստան, 1915, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, 1, էջ 89-96 (համահեղինակ Հովհ. Թոփուզյան):

30. Խոշայություն, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, էջ 76:

1980 թ.

31. Հայ գաղթավայրեր, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, էջ 171-173:

32. Հայկական առևտրական ընկերություն, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, էջ 169:

1981 թ.

33. Ղաջարական դինաստիա, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, էջ 25-26:

34. **Մինորսկի Վ.Ֆ.**, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, էջ 561:

1982 թ.

35. Իրանական հարցը ռուս-գերմանական դիվանագիտական հարաբերություններում 1905-1911 թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XI (Իրան), 1982, էջ 23-66:

36. Թուրք-իրանական հարաբերությունները XIX դարի առաջին երեսնամյակին և մեծ տերությունները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XI (Իրան), 1982, էջ 120-190:

37. Նոր Զուղա, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, էջ 366-367 (համահեղինակ՝ Մ. Հարությունյան):

1983 թ.

38. Հայ-քրդական հարաբերությունների պատմությունից (XIX դարի 80-90-ական թվականներին), Արևելագիտության հարցեր, պրակ 1-2, 1983, էջ 120-138:

39. Արևմտյան Հայաստան. հայ-քրդական հարաբերությունների պատմությունից թանգիմաթի առաջին շրջանում 1839-1856 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 1983, 3, էջ 123-138:

40. Գրախոսություն. Զ.Ս. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, 7, էջ 91-94:

41. Պանդխտություն, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, էջ 119:

42. Պաշտպան հայրենյաց, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, էջ 126:

43. Պետրուշևսկի Ի.Պ., Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, էջ 268:

44. Պատրիարքություն հայոց Թուրքիո, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, էջ 177:

45. Չորանյանները, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, էջ 58:

46. Ջելալիդյանները, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, էջ 484:

47. Ջիզիե, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, էջ 513-514:

1984 թ.

48. Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին, ՀՍՍՀ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրություն, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, Երևան, 1984, 55 էջ:

49. Իրանահայերի մասնակցությունը իրանա-եվրոպական

հակաթուրքական դաշինք ստեղծելու փորձերում (XVI-XVII դարեր), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, 9, էջ 19-36:

50. Գրախոսություն. Геноцид армян в Османской империи, под редакцией проф. М.Г. Нерсисяна, «Հայրենիքի ձայն», 1984, 25 ապրիլ:

51. Ռուբրուք, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, էջ 12:

52. Սիմեոն Երևանցի, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, էջ 372:

1985 թ.

53. Հայերը և լեանտյան առևտուրը XVII դարում, «Պատմա-բանասիրական հանդես», 1985, 2 (109), էջ 103-117:

1986 թ.

54. Հայկական բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում և հայ-քրդական հարաբերությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1986, 1, էջ 47-60:

55. Հայերի դերը ռուս-իրանական քաղաքական հարաբերություններում XVII դարում, Հայաստանի պատմական կապերը հարևան երկրների և ժողովուրդների հետ, Գիտական աշխատությունների թեմատիկ ժողովածու, Երևան, 1986, էջ 3-36:

1987 թ.

56. 1905-1911 թթ. իրանական հեղափոխությունը և Թուրքիան, Արևելագիտության հարցեր, պրակ 3-4, 1987, էջ 243-263:

57. Միջերկրածովյան առևտրական ճանապարհը և հայ վաճառականների առևտուրը Արևմտյան Եվրոպայի երկրների հետ XVII դարում, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, 3 (118), էջ 104-118:

58. Գրախոսություն. Հր. Ռ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, «Սովետական Հայաստան», 1987, 8, էջ 28-30:

59. Գրախոսություն. Ք.Գ. Саакян, Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923 гг., «Պատմա-քանասիրական հանդես», 1987, 1 (116), էջ 215-219:

1988 թ.

60. Մեծ Հոկտեմբերը և Արևելքի երկրները, «Նորագույն պատմության հարցեր» (գիտական աշխատությունների թեմատիկ ժողովածու), ՀԽՍՀ Բարձրագույն և միջնակարգ կրթության մինիստրություն, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, Երևան, 1988, էջ 23-49:

61. Գրախոսություն. Զ. Ս. Կիրակոսյան, Ա.Կ. Զիվելեգովը և նրա պատմա-հրապարակախոսական ժառանգությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, 11, էջ 90-94:

1989 թ.

62. Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, «Հայաստան» հրատ., Երևան, 1989, 359 էջ:

63. Հայաստանի ազատագրման խնդիրները և ջուղայահայ առևտրական բուրժուազիան XVI-XVII դարերում, «XVI-XVII դարերի ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը» (հոդվածների ժողովածու), Երևան, 1989, էջ 97-116:

64. Իրանահայ վաճառականության առևտուրը Հնդկաստանի հետ XVII դարում, «Հայաստանի պատմական կապերը հարևան երկրների և ժողովուրդների հետ», Գիտական աշխատությունների թեմատիկ ժողովածու, Երևան, 1989, էջ 19-42:

1990 թ.

65. Իսլամական գործոնը ժամանակակից Թուրքիայում, «Լեւինյան ուղիով», 1990, 7, էջ 54-62:

66. Պանթյուրքիզմը գործողության մեջ, «Գարուն», 1990, 11-12, էջ 58-62:

1995 թ.

67. Armenia Today, Iran News, 1995, 11 April.

1996 թ.

68. Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան, 1996, 247 էջ:

69. Նաղշ-ե արամանե-ե Իրանի դար թաջերաթ-ե բեյնոլմե-լալի թա փայանե սադե-ե XVII միլադի (պարսկերեն), Թեհրան, 1996, 211 էջ, Իրանի հայերի խաղացած դերը միջազգային առևտրում XVII դարում:

1997 թ.

70. Իրանշենասի դար մենաբ-ե արմանի (պարսկերեն), «Փեյման», 5-6, Թեհրան, 1376 (1997թ.), էջ 44-72, Հայ իրանագիտությունը:

1998 թ.

71. Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVII, 1998, էջ 5-20:

1999 թ.

72. Իրանն այսօր (Տեղեկատու), Երևան, 1999 թ., 336 էջ:

73. Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ., Իմամ Խոմեյնուն նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ, Երևան, 1999, էջ 55-56:

74. Գրքի առաջաբան, **Հայկազուն Գալստյան**, Հանրապետական Թուրքիայի կառավարության քաղաքականությունը Արևելյան վիլայեթներում (1920-1960-ական թվականներին), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 1999:

75. Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի Առաջին հանրապետության գոյության տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, 2001, էջ 5-40:

76. Գրախոսություն. **Հ.Ղ. Միրզոյան**, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Երևանի համալսարանի հրատարակչություն,

2001, 271 էջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (105),
2001, էջ 193-197:

2002 թ.

77. «Իսլամական գործունը» արդի միջազգային հարաբերու-
թյուններում, 2002, 4 (106), «Բանբեր Երևանի համալսարա-
նի», էջ 14-24:

78. XX դարի 20-30-ական թվականների քրդական ապստամ-
բությունները և թուրք-իրանական հարաբերությունները,
Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXI,
2002, էջ 5-27:

79. Հայաստանի Հանրապետության տեղը և դերը Իրանի
Իսլամական Հանրապետության տարածաշրջանային քաղա-
քականության ոլորտում, Պատմություն, հանդես, 2002, 1, էջ
34-44:

80. Արմանեսթան վա Իրան, Համսաեգան վա դոսթան-ե դի-
րին (պարսկերեն), Հայաստան և Իրան. Հարևաններ և դա-
րավոր բարեկամներ, «Փեյման», Թեհրան, 1379, 11-122, էջ
16-25:

2003 թ.

81. Իրան-Ադրբեջան. Հարևաններ, թե՛ աշխարհաքաղաքա-
կան և աշխարհատնտեսական ախոյաններ, Մերձավոր և Մի-
ջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXII, 2003, էջ 7-38:

82. Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները
1918-1920 թթ., «Հայագիտության արդի վիճակը և նրա զար-
գացման հեռանկարները», հայագիտական միջազգային ժո-
ղովածու, զեկուցումների դրույթներ, 2003 թ., էջ 15-16:

83. Մանասեբաթ-ե Իրանիան վա արմանիան (պարսից լեզ-
վով), Հայերի և պարսիկների փոխհարաբերությունները,
«Լոյս» հանդես, Թեհրան, 1378, 14-15, էջ 6-7:

2004 թ.

84. International Trade and the Armenian Merchants in the Seventeenth century, published by Sterling Publishers P., New Delhi, 2004, 261 p.

85. Հայաստանի Հանրապետության տեղը և դերը Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության ոլորտում, «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները», միջազգային համաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2004 թ., էջ 143-149:

86. Քեմալական շարժման շրջանում թուրք-ամերիկյան հարաբերությունների պատմությունից՝ կապված Հայկական հարցի զարգացումների հետ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, 2004, էջ 20-38:

87. The Volga-Caspian Transit Rout: East-West International Trade and Armenians (XVI-XVIII century), ICANAS-37 (Արևելագետների համաշխարհային կոնգրեսի ժողովածու), Moscow, 2004, pp. 248-256.

88. Իսլամական հեղափոխության քառորդ դարը. Քաղաքակրթությունների երկխոսություն՝ Հայաստան-Իրան, «Միհր» հանդես, 2(46), 2004, էջ 21-40:

89. Գրախոսություն. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 2, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, ՀՀ ԳԱԱ հրատ., «Պատմա-բանասիրական հանդես», 2004, 1(165), էջ 280-285:

2005 թ.

90. Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), «Զանգակ», Երևան, 2005, 783 էջ, 2-րդ հրատ., Երևան, 2006 թ.:

91. Էջեր իրանահայության պատմությունից, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, 2005, էջ 17-46:

92. Քրդական գործունը Հայկական հարցի, արևմտահայերի զանգվածային ջարդերի և Հայոց ցեղասպանության մեջ, «Հայոց Մեծ Եղեռն-90» հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2005, էջ 55-74:

93. Թուրքիայում հայկական և քրդական հարցերի քաղաքական աղերսների պատմությունից միջազգային դիվանագիտության լույսի ներքո (Առաջին համաշխարհային պատերազմից մինչև Լոզանի կոնֆերանսը), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, 2005, էջ 46-76:

94. Պարսիկ պատմաբանները Հայոց ցեղասպանության մասին, «Միհր», 2(53), 2005, էջ 24-32:

95. Լայն մտահորիզոնի և բեղմնավոր գրչի տեր նորարար գիտնականը, «Պատմա-բանասիրական հանդես», 2005, 3 (170), էջ 277-283:

96. Գրախոսություն. Նոր խոսք ցեղասպանագիտության մեջ, Ն. Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագրության քննական լույսի ներքո» գրքի մասին, «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 2005, մարտի 11, 43 (3659):

2006 թ.

97. Իսլամը և նրա գաղափարական-քաղաքական դրսևորումները մահմեդական պետությունների քաղաքականության մեջ և միջազգային հարաբերություններում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXV, 2006, էջ 26-54:

98. Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի «քրդականացման» քաղաքականությունը XVI դարում, «Պատմա-բանասիրական հանդես», 2006, 3 (173), էջ 67-84:

99. Նվիրվածություն իր սիրելի հայրենիքին և ժողովրդին, «Միհր», 4 (61), 2006, էջ 11-15:

2007 թ.

100. Նոր Զուղա, «Զանգակ», Երևան, 2007, 152 էջ:

101. Participation of Iranian Armenians in World Trade in the 17th century, Les "Arme'niens dans le commerce asiatique au Le'bute de L'ère modern", Paris, 2007, pp. 43-51.

102. Քրդերը և հայկական հարցը պատմության լույսի ներքո, «Գիտահետազոտական աշխատանքի ուղեծրում», Հր. Աճառյան համալսարանի գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 2007, էջ 231-243:

103. Իրանի ժամանակակից պատմության ամենակարկառուն քաղաքական գործիչը, «Միհր», 4 (67), 2007, էջ 17-20:

104. Գրախոսություն. Ջ.Ս. Կիրակոսյանի Ալեքսեյ Ջիվելեգովի մասին գրքի վերաբերյալ, Գիրք մեծանուն պատմաբան Ալեքսեյ Ջիվելեգովի մասին, «Հայոց աշխարհ», 27 հունիսի 2007 թ., 119 (2427):

2008 թ.

105. Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2008, 421 էջ:

106. Քրդական հարցը Թուրքիայում ու անկախ Քրդստանի ստեղծման ծրագրերը միջազգային դիվանագիտության լույսի ներքո, «Պատմա-բանասիրական հանդես», 2008, 1 (177), էջ 34-58:

107. Թուրքական հարցը իրանա-եվրոպական քաղաքական հարաբերություններում (XVI-XVII դարերում), Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, V, 2008, էջ 12-35:

2009 թ.

108. Թուրք-օսմանների կողմից Կոստանդնուպոլսի գրավումը և դրա համաշխարհային պատմության հետևանքները, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, VI, 2009, էջ 32-57:

2010 թ.

109. Քրդական հարցը հանրապետական Թուրքիայում, «Բանբեր Երևանի համալսարանի», 131.6, Երևան, 2010, էջ 5-36:

2011 թ.

110. Օսմանյան կայսրության պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 718 էջ:

111. Ուշ միջնադարում հայերի շփումների պատմությունից Հարավային և Հարավարևելյան Ասիայի ու Հեռավոր Արևելքի երկրների հետ, Արևելաասիական ուսումնասիրություններ, 2, 2011, էջ 57-71:

112. Իրանական հեղափոխության ֆենոմենը, Իրանի Իսլամական հեղափոխությունը համեմատական կոնտեքստում, միջազգային գիտաժողովի հոդվածների և զեկուցումների ժողովածու, Երևան, 2011, էջ 11-24:

113. Ականավոր արևելագետ-հայագետը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2011, 1-2, էջ 415-421:

2012 թ.

114. Գրախոսություն. Г. Петросян, Отношения Республики Армении с Россией (1918-1920 гг.), Ереван, 2012, «Պատմաբանասիրական հանդես», 2012, 2 (187), էջ 276-279:

115. Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ., Հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, «Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով», միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 15-54:

2013 թ.

116. The Kurds, the Armenian Question and the history of Armenian-Kurdish relations, Ottawa, 2013, 418 p.

117. Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, 212 էջ:

118. Պարթևական պետությունը, Հայաստանի հարակից երկրների պատմություն, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, հ. I, Երևան, 2013, էջ 344-384:

119. Հայերը և լեանտյան առևտուրը XVII դարում, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» զեկուցումների դրույթներ, Երևան, 2013, էջ 8-10:

2014 թ.

120. Քրդական հարցի արձարձումները միջազգային դիվանագիտության կողմից 1916-1923 թվականներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIX, 2014, էջ 186-214:

121. Հայկական գաղթավայրերը միջնադարում, Իրան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմություն, հ. II, Երևան, 2014, էջ 686-691:

122. Հայերը և լեանտյան առևտուրը XVII դարում, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» զեկուցումների ժողովածու, Երևան, 2014, էջ 74-76:

2015 թ.

123. «Թուրքիայի Հանրապետության պատմություն», բուհական դասագիրք, ԵՊՀ հրատարակչություն, 2014, Եր., «Բանբեր հայագիտության», N 1, 2015, էջ 177-190 (գրախոսություն):

124. Ուշագրավ հետազոտություն Հայոց ցեղասպանության մասին: **Յաիր Աուրոն**, Անընդունելի անտարբերություն: Սիոնիզմը և Հայոց ցեղասպանությունը, «Չանգակ» հրատ., Երևան, 2013, 582 էջ, Եր., «Բանբեր հայագիտության», N 2, 2015, էջ 228-240:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XIII ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԴԱՐԵՀ II-Ի
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Համաձայն Դարեհ II-ի ժամանակաշրջանին (մ.թ.ա. 423-404 թթ.) վերաբերող բաբելոնական փաստաթղթերից մեկի՝ եփրատյան Նիպպուրի ափին Շամաշ-բարաքքուի ղեկավարությամբ գտնվել է «ուրաշտացիների և միլիդուացիների» ռազմական գաղութը¹: Անդրադառնալով այս տեղեկությանը՝ Ի. Դյակոնովը, ելնելով հայ ժողովրդի կազմավորման գործընթացի վերաբերյալ սեփական վարկածից, ժամանակին այն կարծիքն է հայտնել, թե Հայաստան (Արմինա) երկրի անվանը փոխարինել է Մելիդ քաղաքի անունը, որն իբր եղել է Արմինայի՝ XIII սատրապության մայրաքաղաքը²: Սակայն սկզբնաղբյուրների բազմակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Աքեմենյան տիրապետության դարաշրջանում Հայաստանի տարածքը բաժանված չի եղել երկու վարչական միավորների՝ XIII և XVIII սատրապությունների միջև. մ.թ.ա. VI-IV դարերում Հայաստանը գտնվել է XIII սատրապության կազմում, իսկ ահա XVIII-ը իրականում եղել է Կուր

¹ Clay A.T., Business documents of Murashû Sons of Nippur dated in the reign of Darius II, Philadelphia, 1904, p. 62, 107: 3, 6, Lo E: Unger E., Urartu. Reallexikon der Vorgeschichte, ed. M. Ebert, XIV, Berlin, 1928, S. 32. Հմմտ. Дандамаев М.А., Луконин В.Г., Культура и экономика древнего Ирана, Москва, 1980, с. 294: Дандамаев М.А., Клинописные данные об армянах, Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей (Сборник докладов), Ереван, 1990, с. 105: Дандамаев М.А., Месопотамия и Иран в VII-IV вв. до н.э., Социальные институты и идеология, Санкт-Петербург, 2009, с. 341, 362.

² Дьяконов И.М., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 238.

գետի և Կովկասյան լեռների միջև³: Հետևաբար վերը բերված բաբելոնական փաստաթուղթը պետք է քննել այլ տեսանկյունից:

Աքեմենյան ժամանակաշրջանի բաբելոնական տեքստերում Ուրաշտուի կամ ուրաշտացիների անվան տակ, անշուշտ, պետք է նկատի ունենալ Հայաստանը և հայ ժողովրդին: Ինչ վերաբերում է միլիդուացիներին, ապա սրանք համապատասխանում են Եփրատից արևմուտք գտնվող մելիտիներին: Ասսուրական Մելիդու, ուրարտական Մելիտեա քաղաքը (ներկայումս՝ Մալաթիա), որի շրջանում հարակից տարածքներով տեղադրվում է «Տուն Թորգոմայ» երկիրը⁴, Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ողջ ժամանակաշրջանում մտնում էր Սատրապական Հայաստանի կազմի մեջ: Այս իրողությունը հաստատվում է Հերոդոտոսի և՛ XIII սատրապության սահմանների, և՛ պարսից «արքայական ճանապարհի» երթուղու քննությամբ⁵: XIII սատրապության մաս կազմող Պակտյուիկեն (Կեսարիա-Մաժաքի շրջանը⁶) մ.թ.ա. V դարի կեսերին անցնում է Կապադովկիային⁷: Արևմտյան սահմանում մ.թ.ա. V դարի կեսերին Հա-

³ Տե՛ս Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1999, 1-12, էջ 45-114: Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2014, էջ 81-114:

⁴ Քոսյան Ա., Տուն Թորգոմայ, Երևան, 1998:

⁵ Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ.թ.ա. VI-IV դարերում, «Պատմաբանասիրական հանդես», 2005, 3, էջ 173-192:

⁶ Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.), Երևան, 1998, էջ 78-79: A Commentary on Herodotus Books I-IV, Oxford, New York, 2007, p. 489.

⁷ Խորիկյան Հ., Կապադովկիայի տարածքը և սահմանները Աքեմենյան Պարսկաստանի կազմում, «Լրաբեր հասարակական գիտությունների»,

յաստանի սատրապությունը կորցրել էր նաև իր սևծովյան տիրույթները՝ Թերմոդոնտ գետի և Յասոնի հրվանդանի միջև: Այդուհանդերձ Հայաստանի սատրապության մեջ արևմուտքում մտնում էին Գայլ և Հալիս գետերի վերին հոսանքների շրջանը, Եփրատի վտակ Կավկավա գետի հոսանքը, Կոմմագենեն մինչև Մարաշ և Ջևգմա: Հետևաբար, բաբելոնական տեքստի՝ միլիդուացիների մասին հիշատակությունը գալիս է կրկին հաստատելու Մելիտինեի՝ Սատրապական Հայաստանի կազմում գտնվելու իրողությունը: Սակայն միլիդուացիների հիշատակությունը հայերի հետ թույլ է տալիս ենթադրել, որ Միլիդուին կամ միլիդուացիներին աշխարհագրական առումով հատկացված է ավելի ընդարձակ տարածք, քան միայն Մելիտինեի շրջանը: Մեր կարծիքով, Միլիդուն լայն առումով համապատասխանում է Պակտյուիկեին և վերջինիս բաբելոնական համարժեքն է: Ամենայն հավանականությամբ, Եփրատից արևմուտք ընկած տարածքները, ներառյալ հետագա Փոքր Հայքը, մտել են XIII սատրապության մասը կազմող Արևմտյան Հայաստան հյուպարքիայի մեջ, որի գոյության մասին գրեթե նույն ժամանակաշրջանում հիշատակում է հույն պատմիչ Քսենոփոնը⁸: Ուրեմն, կարող ենք եզրակացնել, որ Միլիդուն Արևմտյան Հայաստանի հյուպարքոսի նստավայրն էր: Շամաշ-բարաքքուն էլ պարզապես հայերից և միլիդուացիներից կազմված Նիպպուրի մոտ գտնվող ռազմական գաղութի կառավարիչն էր: Հետևաբար, ռազմական գաղութներում զինվորական կազմակերպությունը նույնպես ձևավորվում էր միևնույն սատրապության մեջ մտնող հարևան ժողովուրդների միավորումից: Հնարավոր է, որ «Ուրաշտուի և Միլիդուի (լայն առումով՝ Պակտյուիկեի)

2010, 1-2, էջ 115:

⁸ Xenophon, *Anabasis* (with an English translation by Carleton L. Brownson), Books IV-VII, Cambridge, Massachusetts, London, 1947, IV, 4, p. 38.

մարդկանց կառավարիչ»⁹ հորջորջումը եղել է ռազմական բնույթի տիտղոս:

Եփրատից արևմուտք ընկած տարածքները Հայաստանի մեջ էին նաև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի ժամանակ: Հայտնի է, որ Կապադովկիան ենթարկվեց Ալեքսանդրին, սակայն կապադովկիացիները զարմանալիորեն մի դեպքում հայերի, մյուս դեպքում՝ Մեծ Հայքի հայերի, կադուսիների, սիրիացիների ու մարերի հետ մասնակցում էին Գավգամելայի ճակատամարտին¹⁰: Այս տեղեկությունն ունի երկու բացատրություն. Գավգամելայի ճակատամարտին մասնակցել են կամ հյուսիսային կապադովկիացիները, որոնց երկիր Ալեքսանդրը չարշավեց¹¹, կամ էլ հայերի հետ նույն թևում կապադովկիացիների առկայությունը խոսում է այն մասին, որ Պակտյուիկեն կամ նրա արևելյան հատվածը կրկին միավորվել էր Հայաստանի սատրապությանը, և էթնիկական առումով կապադովկիացիներին ազգակից պակտյուացիները ճակատամարտում հանդես են գալիս կապադովկիացիներ անունով:

Կոռնելիոս Նեպոտի տեղեկություններից պարզվում է, որ մ.թ.ա. IV դարի 60-ական թվականներին Կատաոնիան չէր ենթարկվում պարսից թագավորին: Կատաոնիայի կառավարիչ Ասպիսը հարձակումներ էր գործում հարևան երկրների վրա և թալանում արքայական գումակները¹²: Այս դեպքերից

⁹ Šaknu եզրը (նշանակության մասին տե՛ս The Assyrian Dictionary, vol. 17, Š., Part. I, Chicago, Illinois, 1989, p. 180) տվյալ տեղեկության մեջ ունի ռազմական բնույթի նշանակություն:

¹⁰ Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, Ալեքսանդրի Մակեդոնացի, Երևան, 1987, էջ 97, 101: Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, Ալեքսանդրի Մակեդոնացի, Երևան, 1987, էջ 351:

¹¹ Խորիկյան Հ., Կապադովկիայի տարածքը և սահմանները Արեմենյան Պարսկաստանի կազմում, էջ 114:

¹² Cornelius Nepos, London, Cambridge, Massachusetts, 1960, Datames, XIV, III, 4, p. 514.

առաջ Կատաոնիան չի եղել առանձին վարչական միավոր և, ամենայն հավանականությամբ, դատելով այլ աղբյուրների տեղեկությունների համադրումից անջատվել էր հայկական սատրապությունից՝ լինելով վերջինիս ենթաշրջաններից մեկը: Պակտյուիկեի արևելյան հատվածը մ.թ.ա. IV դարից աղբյուրներում սկսում է հիշատակվել Կատաոնիա անվանումով, և արդեն մ.թ.ա. II դարի սկզբին տեսնում ենք, որ կատաոնները գրավել էին Հայաստանի արևմտյան շրջանները¹³, որոնք ազատագրվում են Ջարեհի և Արտաշես Ա-ի կողմից: Դատամեսը գերեվարում է Ասպիսին, սակայն Կատաոնիայի հետագա վարչական կացության մասին Նեպոտը տեղեկություններ չի տալիս¹⁴: Հնարավոր է, որ Աքեմենյան արքունիքի համար խառնակ այդ ժամանակաշրջանում Կատաոնիան Դատամեսի ենթակայության տակ էր: Արտաքսերքսես Բ-ն Դատամեսի դեմ ուղարկում է Ավտոփրոդատեսին, որի բանակում հիշատակվում է նաև տասհազարանոց հայկական զորագունդը¹⁵: Կատաոններն Ավտոփրոդատեսի բանակի կազմում չեն հիշատակվում, հետևաբար կարելի է ենթադրել, որ կատաոնները կրկին Սատրապական Հայաստանի կազմի մեջ էին:

Հետաքրքիր է, որ համաձայն Ռուփոսի՝ Գավգամելայի ճակատամարտին մասնակցում են նաև կատաոնները՝ Պակտյուիկեի արևելյան հատվածը բնակեցրած ժողովուրդը, ինչն, անշուշտ, կրկին վկայում է այն մասին, որ կատաոնները, լինելով Կապադովկիայի էթնոսներից մեկը, կամ հյուսիսային կապադովկիացիների հետ, կամ էլ թերևս արդեն Հայաստանի սատրապության կազմում մասնակցում են ճակատամարտին: Կատաոնների մասին հիշատակությունը թույլ է

¹³ Страбон, География в 17 книгах (перевод, статья и комментарии Г.А. Стратановского), Ленинград, 1964, с. 498.

¹⁴ Cornelius Nepos, Datames, XIV, III, 4, p. 516.

¹⁵ Անդ, XIV, VI, 8, էջ 524:

տալիս մտածել, որ Եփրատից արևմուտք ընկած տարածքները մինչև Կորմանդոն (Որոմանդոն) և Ջիգոն-Բասիթոն (Բազեի թևք) լեռները Աքեմենյան Պարսկաստանի մայրամուտին շարունակում էին մնալ Հայաստանի կազմի մեջ:

THE ADMINISTRATIVE DIVISION OF XIII SATRAPY OF ACHAEMENID PERSIA IN THE PERIOD OF DARIUS II

Khorikyan Hovhannes

(Institute of Oriental Studies of NAS RA)

One of the Babylonian documents of the period of Darius II also proves that Melitine was part of Armenia where Shamesh-barakku, the governor of the people of Urashtu (Urartu) and Melidu is mentioned. Urashtu-Urartu corresponds with Armenia, and Melidu-Melitine, mentioned with the latter, was an indivisible part of Satrapic Armenia and Herodotus' data prove this. In our opinion the separate mentioning of Melidu is because of the fact that Melidu becomes the centre of Pactyica after Darius I's administrative reforms, also one of the centers of XIII Satrapy which remained part of Armenia in spite of new administrative changes, and its ruler, i.e. the satrap, continued having the title of "the Governor of the people of Urashtu and Melidu (in broad sense Pactyica)". So, we can state that Melitine and the other parts, being to the west of the Euphrates, the territory of later Armenia Minor were an indivisible part of Armina-Armenia country during the whole period of Achaemenid reign.

ԱՐՑԱԽԻ ԱՌԱՋԱԶՈՐ ԳՅՈՒՂԻ XVII-XVIII ԴԱՐԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ

Արցախն Արևելյան Հայաստանի այն շրջաններից է, որի պատմության սկզբնաղբյուրների մեջ մեծ խումբ են կազմում պարսկերեն վավերագրերը: Սեֆյան Իրանի տիրապետության շրջանում Արցախը մտնում էր Գանձակի կամ Ղարաբաղի բեկլարբեկության մեջ, իսկ Նադիր շահի օրոք նրա տարածքը որպես առանձին վարչական միավոր, որ կոչվում էր «Խամսայի մահալ», դրվում է Ատրպատականի փոխարքայի ենթակայության տակ: Պարսկերենն է եղել նաև Նադիր շահի մահից հետո նրա տարածքն ընդգրկող Ղարաբաղի խանության պաշտոնական գրագրության լեզուն: Այսպիսով, պատահական չէ, որ պահպանվել են Արցախի պատմությանը վերաբերող մեծ թվով պարսկերեն վավերագրեր ինչպես Հայաստանի, այնպես էլ Այսրկովկասի մյուս հանրապետությունների արխիվային հավաքածուներում:

Արցախի պատմությանը վերաբերող պարսկերեն վավերագրերի հարուստ հավաքածու ունի նաև Երևանի Մատենադարանը, որտեղ այդ կարևոր պատմական փաստաթղթերը Սյունիքին վերաբերող վավերագրերի հետ առանձնացված են կաթողիկոսական դիվանի 2ա և 2բ թղթապանակներում: Այդ փաստաթղթերի մի ստվար խումբ վերաբերում է Արցախի Առաջաձոր բնակավայրի XVII-XIX դարերի պատմությանը:

1885 թ. Արցախում հետազոտական ճանապարհորդություն կատարած Հայկունին (Եղիշե ավագ քահանա Գեղամյանցը) նշում է, որ Առաջաձոր գյուղում երեցկին Խորիշան Տէր-Պետրոսեան այրու մոտ տեսել է մեծ թվով հայ և օտար

վավերագրեր¹⁶: Ավելի ուշ Արցախի Առաջաձոր ու Քուլատակ գյուղերի մոտակայքում հնագիտական պեղումներ էր կատարում Խաչիկ վարդապետ Դադյանը: Վերջինս այդ ընթացքում հավաքում է տեղի հայկական շրջաններում մասնավոր անձանց մոտ գտնվող հնությունները, ձեռագրերն ու վավերագրերը, որոնք 1894 թ.¹⁷ էջմիածնի վանքի վարդապետ դառնալուց հետո, հանձնում է նրա գրադարանին: Վերոհիշյալ վավերագրերն ամենայն հավանականությամբ հենց նրա ջանքերով են հայտնվել Երևանի Մատենադարանում:

Գյուղի հայկական անվանումը՝ Առաջաձոր, Սարգիս Ջալալյանը կապում է տեղանքի առանձնահատկությունների հետ¹⁷. «[այն] անկանի 'ի լանջակողմն տեղուջ 'ի միում ձորամիջի, շրջապատեալ յանմատչելի ժայռից, հեռի 'ի վանացն Գանձասարայ միով ժամաւ յարևելս կոյս»: Նույն գյուղի (Առաջաձոր կամ Առջաձոր, Արջաձոր) աշխարհագրական դիրքը Մակար Բարխուդարյանցը հետևյալ կերպ է նկարագրում. «Արցախի Խաչեն գավառում, դեպի Արծաթասար ձգվող լեռնաշղթայի հարավային ստորոտում, անդնդախոր ձորի եզրին»¹⁸:

Առաջաձորը եղել է Խաչենի Հասան-Ջալալյան տոհմի ժառանգների հայրենական կալվածքներից: Հասան-Ջալալյան տոհմի երկու պայազատների՝ Ջալալի թոռ ու Մեջլիսի որդի Ուլուբեկի և Արղուբինի թոռ Մեհրապի որդի Շահանշեհի միջև հայրենական կալվածքների շուրջ վեճ էր ծագել, որի ժամանակ Ուլուբեկի ենթակա մարդկանցից մեկը սպանվում է¹⁹: Այդ վեճը լուծելու համար կողմերը գնում են Աղաբաստի

¹⁶ Հայկունի Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց, Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010, էջ 77:

¹⁷ Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն 'ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփիսիս, 1858, էջ 240:

¹⁸ Բարխուդարյանց Մ., Արցախ, Երևան, 1996, էջ 119:

¹⁹ Նույն տեղում, էջ 120:

մոտ, որը լուծում է տալիս նրանց վեճին և սահմանում յուրաքանչյուրի հայրենաբաժին հողամասերի սահմանները, որոնք բոլորը գտնվում էին Առաջաձոր գյուղի մոտակայքում²⁰: Հետագայում ևս Հասան-Ջալալյանների տոհմի մի ճյուղի ներկայացուցիչները բնակվում էին Առաջաձոր գյուղում՝ վարելով այնտեղի հողերը իշխանությունը և անգամ երբեմն զբաղեցնելով Աղվանից կաթողիկոսության գահը, ինչպես օրինակ՝ 1554 թ. Դավիթ Առաջաձորեցին, նաև XVII դարի սկզբին Եսայի Հասան-Ջալալյանը, որին Առաջաձորցի էին կոչում²¹: Ըստ Հայկունու՝ XIX դարում Առաջաձորի բնակչաց մեջ 60 հոգի Շահեշանեան ազգանուն կրողներ կան, որը ծագել է Շահանշահ կամ վերը նշված Շահանշե անունից, անուն, որը, նշանակելով «թագավորաց թագավոր, արքայից արքա», շատ ընդունված էր Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցիչների մոտ²²:

Ամենայն հավանականությամբ հենց այս հանգամանքի հետ է կապվում բնակավայրի պարսկերեն վավերագրերում նշվող անվանումը՝ Դոշանլու կամ Դովշանլու, որը թերևս ծագում է արաբերեն «պատվավոր, պատվարժան, մեծատուն ذوشان - բառից», որին կցվել է թուրքերեն որակ ցույց տվող لու - ածանցը: Կարծում ենք՝ այս անվան հիմքում ընկած է եղել մի օտարալեզու վավերագիր, որտեղ գյուղի անվան հետ կամ առանց նրա հանդես է եկել հիշյալ բառը՝ «պատվարժան-Ջուշանլու կամ Դուշանլու»՝ ցույց տալու համար այդ գյուղի պատկանելությունը Հասան-Ջալալյանների ազնվականական տոհմի ներկայացուցիչներին: Քանի որ պարսկերեն փաստաթղթեր կազմելիս մշտապես հաշվի էին առնվում նախկին

²⁰ Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 307:

²¹ Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 377:

²² Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 111-112:

փաստաթղթերը, ուստի և այդ բառը ևս շարունակել է գործածվել, իսկ ձ տառի վերին կետը, ինչպես հաճախ է լինում, դադարել է գրվել հետագա շրջանի վավերագրերում՝ ամրագրելով գյուղի նախնական անվան հետ Դուշանլու կամ Դովշանլու տարբերակը:

Մեր ձեռքի տակ եղած պարսկերեն վավերագրերից ամենահինը վերաբերում է Շահ Աբաս Ա-ի իշխանության ժամանակաշրջանին և տրվել է շահի կողմից 1620 թ. ոմն Սարուխան Սուլթան Ղաջարին ի հաստատումն այդ գյուղից ստացվող թաֆավութ-ե ջիզյա հարկի²³ գանձման իրավունքի²⁴:

Առաջաձորի մոտակայքում գտնվում էր երկանաքարի հանք, որից տեղի բնակիչները երկանաքարեր ու ջրաղացքարեր էին արդյունահանում²⁵: Պարսկերեն վավերագրերից շատերը ձեռք են բերվել այդ հանքի շահագործման հետ ծագած տարբեր խնդիրների կապակցությամբ: Մասնավորապես, 1633 թ. Գանձակի բեկլարբեկի կողմից տրված հրամանագրում նշվում է, որ այնտեղի թիուղարներից²⁶ ոչ ոք չպետք է խոչընդոտի Դուշանլու գյուղի բնակիչների՝ մոտակա սարից

²³ Թաֆավութ-ե ջիզյա - تفاوت جزیه - Բառացի «ջիզյայի տարբերություն»: Հայերից գանձվող գլխահարկի կամ «ջիզյայի» վրա ժամանակի ընթացքում բարդված գումարներն էին, որոնք հարկային մատյաններում գրանցվում և հաշվվում էին առանձին՝ դիտելով որպես առանձին պարտավորություն (Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Ա, Երևան, 1956, էջ 109):

²⁴ Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, վավ. 13:

²⁵ Բարխուդարյանց Մ., Արցախ, էջ 13:

²⁶ Թիուղար - تیولدار (թուրք.-պարսկ.) - Այսպես էին կոչվում այն բարձրաստիճան գինվորականները, պետական պաշտոնյաներն ու ամիրները, որոնք ոռճիկի դիմաց ստանում էին շրջանից, գյուղերից կամ առանձին գյուղից գանձվող ամբողջ պետական հարկերի կամ նրանց մի մասի գանձման իրավունքը, որպես «թիուլ» (Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ Ա, էջ 109):

քար արդյունահանելը և քարտաշությանը զբաղվելը²⁷: 1666 թ. Գանձակի բեկլարբեկի կողմից նույն բովանդակությամբ տրված հրամանագիրը հրապարակվել է Դուշանլու և Բազարքենդ²⁸ գյուղերի բնակիչների խնդրագրի հիման վրա, որը կրկնվում է նաև 1693 թ. հրամանագրում²⁹: Այս վավերագիրը հուշում է, որ հիշյալ հանքից օգտվում էին նաև հարևան Բազարքենդ (կամ Ծմակահող) գյուղի բնակիչները: Բնակավայրը ծանր հարկերից ազատելու նպատակով գեղջավազները նրա հարկաբաժինը մուղաթթա՝ են անում 2 թումանի չափով: Այդ մասին իմանում ենք Գանձակի բեկլարբեկին 1698 թ. գեղջավազ Բահարի կողմից ներկայացված մի խնդրագրից, որում բողոք էր հայտնվում այդ մուղաթթա՛ին հակառակ այլ հարկ նշանակված լինելու դեմ³⁰: Մուղաթթա՛ն (արաբ. - կտրված, որոշված), որոշակի չափով հաստատված գումար էր, որը պաշտոն կամ եկամտաբեր հաստատության տնօրինության իրավունքը ձեռք բերելու համար հանձն էին առնում կանոնավոր մուծել պետական գանձարան³¹: Հիշյալ Բահարի (կամ Պհարի) անունն առկա է նաև 1668 թ. գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու շինության մասին վկայող արձանագրության մեջ, որը խոսում է հիշյալ անձնավորության՝ որպես գյուղի կարիքների համար հոգ տանող մարդու մասին³²:

²⁷ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 236:

²⁸ Պազարքենդ կամ Բազարքենդ գյուղը Առաջածորից մեկ մղոն հեռավորության վրա գտնվող հայկական Վաճառ գյուղն էր (Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 2003, էջ 80), որը Մ. Բարխուդարյանցի վկայությամբ Խաչենի Ծմակահող գյուղի հին անվանումն էր (Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 118):

²⁹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 60, թղթ. 2բ, վավ. 92, 124ա:

³⁰ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, 124ե:

³¹ Փափագյան Հ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Բ, Երևան, 1959, էջ 225:

³² Բարխուդարյանց Մ., Արցախ, էջ 120:

Ինչպես հայտնի է դառնում մյուս վավերագրերից, հետագայում ևս ավելորդ հարկապահանջությամբ շարունակում են նեղել զանազան պաշտոնյաներ կամ հարևան բնակավայրեր, մի հանգամանք, որ բնորոշ է տարածաշրջանում Սեֆյան տիրապետության անկման շրջանին: Մասնավորապես, 1711 թ. նման բողոք է ներկայացվում Յայջի (կամ Հնձախոտ) գյուղի և Սարուջալու Խողավերդի յուզբաշու դեմ, որին համապատասխան Գանձակի Ուղուրլու խան Ջիադողլին կարգադրում է իր պաշտոնյա (իշիք աղասի) Նադդ Ալի բեկին դատարանում կողմերի ներկայությամբ քննել այդ հարցը և լուծում տալ³³:

Պարսկերեն մեկ այլ վավերագրի բովանդակությունից իմանում ենք նաև, որ գյուղի բնակիչները տաշում ու մշակում էին երկանաքարերը և վաճառում դրանք ոչ միայն հարևան բնակավայրերի բնակիչներին, այլև վաճառքի համար տանում իրենցից բավական հեռու գտնվող շրջաններ, ինչպես օրինակ՝ Ղարադաղ, որը գտնվում է Արաքսից հարավ³⁴:

Ղարաբաղի խանության վերջին շրջանում, երբ խանի ազգականներն ու պաշտոնյաները զանազան ճանապարհներով յուրացնում էին թուլացած հայ մելիքների ու մյուս սեփականատերերի կալվածքները, այդ հանքի սեփականատիրության իրավունքն իր ձեռքն է վերցնում Գանձասարի կաթողիկոսությունը, որպեսզի այն չընկնի մահմեդական պաշտոնյաների ու խանի ազգականների ձեռքը³⁵:

Վավերագրերից մի քանիսի բովանդակությունից հայտնի է դառնում նաև, որ գյուղում բացի հայերից բնակվել են նաև մահմեդականներ, որոնք, մասնավորապես XVIII դարի սկզբին լինելով 25 հոգի, հրաժարվում էին իրենց հողագործության համար հարկ վճարելուց: Գանձակի բեկլարբեկը

³³ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, 124դ:

³⁴ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 154:

³⁵ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 45, 212:

խնդրի իրողությունը պարզելու և նրան լուծում տալու հանձնարարական է տալիս իր պաշտոնյա Շահիջան բեկին³⁶: XIX դարի 80-ականներին գյուղ այցելած Հայկունին ևս նշում է, որ բնակիչներից 12 ընտանիք «թիրք են, որոնք թիրքերէնից լաւ հայերէն են իմանում և միշտ այդ լեզուով խօսում»³⁷:

Առաջաձորի երեցների պաշտոնը, որը հաճախ զուգակցվում էր տանուտերի պաշտոնի հետ, ժառանգաբար փոխանցվում էր: Մատենադարանի պարսկերեն վավերագրերից մի քանիսը վերաբերում են Առաջաձոր գյուղի ավագերեց Դավթին: Նա այդ գյուղի ավագերեց էր նշանակվել 1715 թ. Գանձասարի Եսայի կաթողիկոսի կողմից³⁸: Նադիր շահի զորքերի՝ Ղարաբաղում գտնվելու շրջանում հիշյալ Դավիթը հարևան մի շարք գյուղերի (Չորման, Բազարքենդ, Ներքին Քոլատակ, Համզա, Ղզղայա, Ղոզլու, Բալլուղայա, Սահերգահ, Դուշանլու, Խնզիրստան, Սարուքեշիշ, Թամվալ, Վանք, Խորամորթ, Շալվա) ներկայացուցիչների կողմից ընտրվում է առաջնորդ ու մելիք՝ ամենայն հավանականությամբ իրանական կողմի հետ շփումն իրականացնելու համար³⁹: Հաջորդաբար 1734 թ. Նադիր շահի կողմից հրապարակվել է երեք հրովարտակ, նախ՝ ի հաստատումն գյուղի քահանա Դավիթի ավագության և մելիքական իրավունքների, ապա՝ նաև նրան ենթակա գյուղերից սոյուրսաթ (կամ սուրսաթ) կոչված հարկի⁴⁰ հավաքման կապակցությամբ⁴¹:

³⁶ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 157:

³⁷ Հայկունի Գեղամյանց, նշվ. աշխ., էջ 77:

³⁸ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 9:

³⁹ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 177:

⁴⁰ Սոյուրսաթ կամ սուրսաթ - MDvoβiv - Ռայաթների կողմից տվյալ վայրում գտնվող զորքի ապահովումը մթերքով, նաև ընդհանրապես բանակի գլխավոր ուժերի համար պարենի ու մթերքի մատակարարումը, որը հաստատված էր հատուկ մատյաններով:

⁴¹ Կոստիկյան Բ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ IV, Երևան, 2008, վավ. 1, 2, 3:

Հիշյալ վավերագրերից մեկի խնդրագրի մասում նկարագրելով իրեն ենթակա շրջանի աղետալի դրությունը՝ մեկիք Դավիթը նշում է, որ իրեն ենթակա շրջանում. «ընդամենը չորս գյուղ կա, յուրաքանչյուրում՝ 10-15 ընտանիք... և այդ գյուղերից մեկի՝ Խնձիրստանի տանուտեր Պողոսը գիշերով ամբողջ գյուղի հետ փախել է...»⁴²:

Հայտնի է, որ Խաչենի շրջանը XVIII դարում մասնատված էր Հասան-Ջալալյանների տոհմի ժառանգների՝ մի քանի մեկիքների միջև: Այդ տոհմի անդամ Մուլքի Բեկի (մահ. 1716 թ.) որդիներ Մեկիք Գրիգորն ու Մեկիք Ալլահվերդին շահական ու սուլթանական հրովարտակներով, որ հրապարակվել էին 1126 (1714), ի 1131 (1718/19), ի 1141 (1728/29), ի 1148 (1735/36) թվականներին, նույնպես իշխում էին Խաչեն գավառում⁴³: Ինչպես նշվում է Նադիր շահի՝ 1736 թ. հրովարտակի տեքստում, շահին ներկայացած Խաչենի Մեկիք Գրիգորի խնդրանքով նրան ենթակա տարածքում գտնվող Դուշանլու և Ղաբարթու (Կավարտ) գյուղերի պետական հարկերը գանձելու իրավունքը հանվում է Բարդայի կառավարիչների իրավասության շրջանակներից և տրվում Մեկիք Եգանին, որպեսզի վերջինս այդ հարկերը փոխանցի Ատրպատականի փոխարքա Մուհամմադ Իբրահիմին⁴⁴:

Այսպիսով, պատահական չէ, որ հիշյալ ժամանակաշրջանի վավերագրերում, բացի Խաչենի մեկիքներ Գրիգորի⁴⁵ ու Ալլահվերդու անուններից, հաճախ նրանց անունների հետ

⁴² Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 181:

⁴³ Մաղալյան Ա., Արցախի մեկիքական տների տոհմաճառերը. Խաչեն գավառի տիրակալ Հասան-Ջալալյանների տոհմը ԺԷ-ԺԹ դարերում, 2006, Բազմավեպ, թիվ 1-4, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 270, հղում՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 9, թ. 18:

⁴⁴ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 188:

⁴⁵ Պատմական փաստաթղթերում Մեկիք Գրիգորը հաճախ հանդես է գալիս որպես Խաչեն մահալի վեքիլ, այսինքն՝ այդ շրջանի լիազոր ներկայացուցիչ (տե՛ս Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 167, 198):

միաժամանակ նշվում են Առաջաձորի Մելիք Դավիթի և Քուլատակի Մելիք Ուլուխանի անունները⁴⁶:

Սկսած 1745 թվականից՝ պարսկերեն վավերագրերում սկսում է նշվել Առաջաձորի Մելիք Դավիթի որդի Կիրակոս քյոխվայի անունը⁴⁷, որը վկայում է այն մասին, որ այդ թվականին հիշյալ Դավիթն արդեն մահացել էր, իսկ նրա որդին դարձել էր գյուղի տանուտերը՝ քյոխվան: Այդ պաշտոնով է նշվում Դավիթի որդի Կիրակոսը նաև հայերեն վավերագրերում⁴⁸: Ստորև թարգմանաբար ներկայացնում ենք այդ գյուղի պատմությանն առնչվող մի կալվածագիր, որը հետաքրքիր է նաև այն առումով, որ նրա վրա դրոշմված են Արցախում խանության հաստատման նախօրեին այնտեղ իշխող Դիզակի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Գյուլիստանի հայ մելիքների, Սարգիս Յուզբաշու և ազդեցիկ հոգևորականների կնիքները: Այդ փաստաթուղթը, կազմված լինելով 1745 թ. Նադիր շահի կենդանության օրոք, Խամսայի հայոց մելիքությունների՝ որպես Իրանի տիրապետության տակ գտնվող վարչական առանձին միավորի, վերջին շրջանի վավերագրերից է և մատնացույց է անում հայ մելիքների միասնական մասնակցությունն Արցախի խնդիրների լուծմանը:

Ինչպես տեսնում ենք, պարսկերեն վավերագրերը լրացնում ու հաստատում են Արցախի հիշյալ բնակավայրին վերաբերող մինչ այժմ առկա նյութերը և տվյալները, հարստացնում նրա պատմությունը տնտեսական ու քաղաքական բնույթի տեղեկություններով: Եզակի ու անփոխարինելի են նրանց բովանդակած տվյալները բնակավայրի հարկերի, էթնիկ կազմի, իրանական իշխանությունների հետ նրա հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների փոխհարաբերությունների մասին: Արցախի բնակավայրերից մեկի պատմության այս կարճ

⁴⁶ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 198, 199:

⁴⁷ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 199:

⁴⁸ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 115, 117, 118:

ակնարկն իսկ մատնացույց է անում պարսկական վավերագրերի՝ հրովարտակաների ու կալվածագրերի կարևորությունն Արևելյան Հայաստանի պատմության համար: Այստեղ կցանկանայինք մի փոքր շեշտադրում անել հատկապես պարսկերեն կալվածագրերի ներգրավման անհրաժեշտության վրա: Նշենք, որ Մատենադարանի պարսկերեն կալվածագրերի ուսումնասիրության բնագավառում մինչ այժմ որոշ աշխատանք կատարել է միայն Հ. Փափագյանը՝ «Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը» ժողովածուի մեջ թարգմանաբար հրատարակելով XIV-XVI դարերի 23 պարսկերեն կալվածագրեր: Հետագա ժամանակաշրջանի պարսկերեն կալվածագրերը հիմնականում ուսումնասիրված չեն և գրեթե ընդգրկված չեն գիտական հետազոտություններում:

*Երևանի Մադենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ.
2բ, վավերագիր 198*

Համաձայն Խաչենի մահալի մելիք Ուլուխանի ու մյուս քյադիխուդաների մոտավոր հաշվարկի, բացի դիվանին կանխիկ ու բնամթերքով վճարվող հարկերից, ինչ լրացուցիչ հարկեր ու ավարիզաթ⁴⁹, որ օլքայի վրա հրամանով դրվեն, Դուշանլու և Ներքին Քուլատակ գյուղերը պետք է միմյանց հավասար վճարեն, և թող նրանց միջև տարբերություն չդրվի: Երկու կողմերն էլ՝ մելիքն ու քյադիխուդաները, այս հարցում համաձայն են: Այսուհետև այս հարցում եթե նորից վեճ տեղի ունենա, մեղավոր են և պետք է բարձրագույն դիվանին դիմեն: Այս երկու խոսքը ի նշան իրական համաձայնության գրի առնվեց:

Գրվեց 1158 թ. ջումադի երկրորդ ամսի 26-ին⁵⁰:

[Կնիք՝ արաբատառ]. Հիսուս աստծո ծառա Ուլուխան,
Վկայում է Դիզակի մելիք, Մելիք Եսային. [կնիք]. ՔՐԻՍՏՈՍԻ
ԾԱՌԱ ԵՍԱԻ,

Նվաստիս ծանուցմամբ համաձայնությունը կնքվեց, [կնիք՝
արաբատառ]. /// Սեֆի,

[կնիք՝ արաբատառ]. Աստծո ծառա Մելիք Գրիգոր,
Վկայում է Թալիշի մելիք Մելիք Թահմուրասը, [կնիք՝ արա-
բատառ]. Աստծո բարեհաճության մարմնավորում Թահմու-
րաս,

Վկայում է Մուհամմադ Նադին [կնիք՝ արաբատառ]. ///,

Վարանդայի Մելիք Հուսեյն [կնիք՝ արաբատառ]. ///,

Մելիք Հաթամ, [կնիք՝ արաբատառ]. Աստծո ծառա Հաթամ,

⁴⁹ Ավարիզաթ - عوارضات - այս եզրի տակ հասկացվում էր ուայաթների պարտադիր աշխատանքը զանազան արտակարգ պատահարների ժամանակ: Այս պարտավորությունը ևս շատ հաճախ փոխարինվում էր դրամական տուրքով:

⁵⁰ 1745 թ. հուլիսի 26:

Սարգիս Յուզբաշի [կնիք՝ արաբատառ]. Աստծո ծառա Սար-
գիս,
Մելիք Բեկ, [կնիք՝ արաբատառ]. Մելիք Բեկ,
Վկայում է Պետրոս քահանան, [կնիք]. ՊԵՏՐՈՍ ՎԱՐ-
ԴԱՊԵՏ,
Վկայում է Գրիգոր քահանան [կնիք]. ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ,
Վկայում է Չալեբերդի (Ջրաբերդ) մելիք Մելիք Ալլահղուլին
[կնիք՝ արաբատառ]. Աստծո ծառա Ալլահղուլի 1153,
Եղիազար քյոխվա [կնիք]. ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱ ԵՂԻԱԶԱՐ:

مشروط بر آنکه ملک اولو خان ملک محال خاچین و سایر کدخدایان خاچین بر آورد نموده
اند سیوای متوجهات نقد و جنس مال دیوانی آنچه صادرات و عوارضات در میان الکای
حکم حسابی صادر شود قریه دوشانلو و قریه کلادک سفلی بهم برابر بدهند که تفاوت در
باب صادرات ندارد هر دو طرفین و ملک و کدخدایان راضی اینمعنی شده اند هر گاه من
بعد اینمعنی را تجدید دعوی نمایند مجرم و مخاطب دیوان اعلی باشد این دو کلمه جهة
مقرر وقعه مهم قلمی شد.

تحریرا" فی 26 جمادی الاخر سنه 1158 .

[مهر]: بنده خدای عیسی الوخان

شده فیہ ملک عیسی ملک دیزاق ԲԻ ԾՌ ԵՍԱԻ

باطلاع کمترین مشروط گردید [مهر]: ... صفی

[مهر]: عبده ملک گریگور

شده فیہ ملک طهمورث ملک طالیث [مهر]: مظهر لطف الهی طهمورث

شده فیہ محمد نقی ///

ملک حسین ورنده [مهر]: ///

ملک حاتم [مهر]: عبده حاتم

سرکیس یوزباشی [مهر]: بنده خدا سرکس

ملک بیک [مهر]: عبده ملک بیک

شده فیہ بدروس مهراسیه [مهر]: ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ

شده فیہ کیرکور مهراسیه [مهر]: ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ

ملک الله قلی ملک چاله بربدلو [مهر]: عبده الله قلی 1153

یغیزار کوخا [مهر]: ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱ ԵՂԻԱԶԱՐ

HISTORY OF ARACHADZOR VILLAGE OF ARTSAKH IN XVII- XVIII CENTURIES ACCORDING TO THE PERSIAN DOCUMENTS OF THE MATENADARAN

Kostikyan Kristine

(Institute of Oriental Studies of NAS RA)

A number of the Persian historical documents (about 20 units) preserved in the Yerevan Matenadaran refer to the history of Arachadzor village of Artsakh-Karabagh. These documents contain the orders of the local governors concerning various problems of the Armenian settlement and they throw light upon different questions in its long history. According to the Persian historical documents, the inhabitants of the village had mainly been stone-masons who were preparing stones for mills from the stone-mines being in its neighborhood. The major part of the documents was received to protect the rights of the inhabitants upon the stone-mines, taxes received from the village and other problems referring to the production of mill-stones and their sale. The Persian sources use the name Dovshanlu (or Dushanlu) for the village which is supposed to be connected with the noble family of Hasan Jalalians of Artsakh as it may have derived from the word *دوشانلو* a word in Arabic meaning 'honourable'. The representatives of a branch of this noble family lived in the village, had there estates and sometimes also ran the post of the catholicoses of Aghvank. The Persian documents have kept the names of the religious leaders, the meliks and village elders of the village who were the persons who kept connection between the village community and the Persian government in XVII - XVIII centuries and implemented the decisions of the beglarbeks as regards many of the local problems. The article also represents the Armenian translation,

the Persian text and the photo of a Persian document of the Matenadaran Archive referring to its history, dated 1745. The document comprises the seals and signatures of the Armenian meliks of Dizak, Varanda, Khachen, Jraberd and Gulistan in Karabagh combined in a separate administrative unit of Khamsa, under the direct rule of Nader Shah.

Պ.գ.թ. Նավասարդյան Նազելի
(ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ.
ՌՈՒՍ-ԻՐԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ (XIX ԴԱՐ)

XIX դարի սկզբից Ռուսական կայսրությունն ուժեղացրեց իր ռազմաքաղաքական և տնտեսական ներթափանցումն Արևելք, մասնավորապես Իրան: Սակայն տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ձեռք բերելու Ռուսաստանի հավակնությունները բախվեցին նրա վաղեմի աշխարհաքաղաքական հակառակորդ Մեծ Բրիտանիայի հակազդեցությանը: Ռուս-բրիտանական հակամարտությունը, որը պատմագրության մեջ հայտնի է «Մեծ խաղ» (“The Great Game”) անվամբ, վերաճեց Իրանում գերակայության համար մղվող երկարատև մրցապայքարի: Ռուսական կայսրության և Մեծ Բրիտանիայի միջև մրցակցությունն Իրանում դրսևորվեց միմյանց դիմակայելու սկզբունքայնությամբ և ընթանում էր փոփոխական հաջողությամբ:

Իրանի ռազմավարական նշանակության ճանապարհները, բնական պաշարները, արտահանման և հումքային շուկաները վերահսկելու գերտերությունների նկրտումները պարբերաբար հանգեցրել են նրանց միջև սուր հակամարտությունների ձևավորմանը: Իրանը երբեք չի կորցրել իր կարևոր աշխարհաքաղաքական դերակատարումը Ռուսաստանի և Արևմտյան տերությունների համար: Այսօր էլ տարածաշրջանում ազդեցության ոլորտների համար մղվող պայքարը կարելի է որակել որպես նոր «Մեծ խաղ»՝ զուգահեռներ անցկացնելով ավելի քան հարյուրամյա վաղեմության իրադարձությունների և մերօրյա իրողությունների միջև:

Հողվածի շրջանակներում փորձել ենք ուրվագծել այն պատմական նախադրյալներն ու զարգացումները, որոնք նպաստեցին Իրանի՝ Ռուսական կայսրության աշխարհաքաղաքական առաջնահերթությունների առանցքում հայտնվելուն:

Ռուսաստանի քաղաքական և տնտեսական հետաքրքրություններն Իրանի նկատմամբ բավականին հին և խոր արմատներ ունեն: Հին սլավոններին Իրանի հետ կապող Վոլգա-Կասպյան ճանապարհը հայտնի էր դեռևս վաղնջական ժամանակներից: Այն ոչ միայն աշխույժ առևտրային տարանցիկ ճանապարհ էր, այլև արևմտյան և արևելյան պետությունների միջև միջազգային կապերի հաստատման կարևորագույն ուղի: Մոնղոլ-թաթարական արշավանքների արդյունքում (XIII-XIV դդ.) Ռուսաստանի տնտեսական կապերն Իրանի հետ ընդհատվեցին, սակայն 1552 թ. Կազանի, այնուհետև 1556 թ. Աստրախանի խանությունների գրավումը Ռուսաստանի (Մոսկովյան պետության) համար կրկին ազատ ելք ապահովեց դեպի Կասպից ծով: Այս ժամանակաշրջանից ռուսական տիրապետության տակ վերջնականապես անցած քաղաքական և տնտեսական մեծ կարևորություն ներկայացնող Վոլգա-Կասպյան ճանապարհը նոր հնարավորություններ ստեղծեց Միջին Արևելքում Ռուսաստանի դիրքերն ամրապնդելու համար⁵¹: Տարբեր դիվանագիտական առաքելություններ ուղևորելով Իրան՝ ռուս ցարերը տևական ժամանակ փորձում էին սեֆյան շահերից ստանալ առևտրային բարենպաստության այնպիսի արտոնություններ, որոնք վերջիններս շնորհել էին բրիտանացիներին: Իրանի հետ առևտրային հարաբերություններն ամրապնդելու համար և բրիտանական մրցակցությանը դիմակայելու նպատակով արդեն

⁵¹ Kotilaine J. T., *Russia's Foreign Trade and Economic Expansion in the Seventeenth Century. Windows on the World*, Brill, Leiden-Boston, 2005, pp. 56-58.

1572 թ. ռուսական իշխանությունները սահմանափակեցին Ռուսաստանի տարածքով տարանցիկ առևտրի արտոնություններն օտարերկրացիների համար⁵²: Իրանա-ռուսական առևտրատնտեսական կապերի ընդլայնումն իր դերակատարումն ունեցավ տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի ամրապնդման համար:

Իրանի հետ հարաբերությունները սերտացնելու Ռուսաստանի ձգտումը հատկապես կարևորվեց Օսմանյան կայսրության քաղաքականության հետևանքով, որը, նպատակ ունենալով դիմագրավելու Կովկասյան լեռնաշղթային մերձեցող Մոսկովյան պետությանը, տիրանալու Վոլգա-Կասպյան ճանապարհին, խզելու ռուս-իրանական առևտրական կապերը, հսկողություն սահմանելու Կասպից ծովի արևմտյան շրջաններում, օգտվելով Իրանի ժամանակավոր թուլացումից, ընդլայնեց իր նվաճողական քաղաքականությունը Կովկասում և Ատրպատականում⁵³:

Իրանը Ռուսաստանի համար Հնդկական օվկիանոս դուրս գալու ճանապարհ էր, սակայն մինչև XIX դարի սկիզբ կովկասյան շրջափակումը ճեղքելու Ռուսաստանի բոլոր ջանքերն ուղղված էին տարածաշրջանում լիարժեքորեն ամրապնդվելու հիմնարար մոտեցումների որոնմանը և կրում էին էպիզոդիկ և ոչ հետևողական բնույթ: Հայտնի է, որ դեռևս Պետրոս I-ի «արևելյան քաղաքականության» հիմնական նպատակներն էին՝ հաստատել ռուսական տիրապետությունը Կասպից ծովի ափերին, նպաստել ռուսական առևտրային կապիտալի ներթափանցմանն արևելյան շուկաներ և թույլ չտալ Օսմանյան կայսրության տիրապետությունը

⁵² Kagarlitsky B., Empire of the Periphery: Russia and the World System, London, 2008, pp. 82-111: Шкунов В., История внешней торговли Российской империи с государствами Востока в XVII-XIX вв., в исследованиях и документах, том 1, Самара, 2008, с. 12.

⁵³ Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2005, էջ 310-311:

Կովկասում⁵⁴: Ինչպես հայտնի է, այս խնդիրներն իրենց տրամաբանական շարունակությունը գտան նաև Եկատերինա II-ի արտաքին քաղաքական ծրագրերում:

XVIII դարի երկրորդ կեսին մինչ Իրանում շարունակվում էին ներքին երկպառակությունները և գահակալական արյունոտ ընդհարումները, Ռուսաստանը վերստին սկսեց բուռն հետաքրքրություն ցուցաբերել Կովկասի նկատմամբ: Մի քանի տասնամյակ շարունակ Իրանը ներքաղաքական անկայուն իրավիճակի պատճառով դուրս մնաց Կովկասում Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև անընդմեջ ընթացող պայքարից: Սակայն XVIII դ. վերջին տասնամյակում և XIX դ. սկզբին ռուս-իրանական հարաբերություններում կրկին սկսեց կարևորվել Հարավային Կովկասը: Ռուսական պետության հարավային սահմանների ընդլայնումը Կենտրոնական Կովկասից աստիճանաբար տարածվեց դեպի ծայրամաս՝ Կասպից և Սև ծովեր: Այսպիսով, արդեն XIX դարի սկզբից Ռուսական կայսրությունը սևծովյան-կասպիական տարածաշրջան ներգրավվածությունն ուժեղացնելու ռազմաքաղաքական համալիր ծրագիր ձեռնարկեց՝ առաջնային կարևորություն տալով կայսրության հարավային սահմանների անվտանգության ապահովմանը, տարածաշրջանում աշխարհաքաղաքական հակառակորդ Մեծ Բրիտանիային դիմագրավելուն և Իրանում քաղաքական ու տնտեսական գերակայություն հաստատելու խնդիրներին, որոնց կենսագործման համար անցավ տարածքային ձեռքբերումների: Կովկասյան ամբողջ տարածաշրջանի և Կենտրոնական Ասիայի վերջնական միակցումը Ռուսաստանին դարձավ կայսրության արևելյան քաղաքականության բաղկացուցիչներից մեկը, որն ընթացավ ռազմաքաղաքական բարդ և լարված իրադրության մեջ՝ մի կողմից ռուս-պարսկա-թուրքական պատերազմ-

⁵⁴ Под стягом России. Сборник архивных документов, Москва, 1992, с. 197-200.

ների, իսկ մյուս կողմից՝ ռուս-բրիտանական սուր հակամարտությունների պայմաններում⁵⁵:

XIX դարի սկզբին ղաջարական պետությունն առանցքային դարձավ եվրոպական առաջատար տերությունների աշխարհաքաղաքական ծրագրերում, մասնավորապես Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի⁵⁶: Հենց այս ժամանակաշրջանում օրինաչափորեն աճեց նաև Իրանին հարակից Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի շրջանների նկատմամբ Ռուսաստանի հետաքրքրությունը, որտեղ խաչվում էին ասիա-եվրոպական առևտրային և ռազմավարական ճանապարհները, իսկ իրանական ազդեցությունը աստիճանաբար ձևական բնույթ էր կրում:

Նշված ժամանակաշրջանից սկսած՝ Ռուսաստանը նոր քաղաքական դիրքորոշում որդեգրեց Հարավային Կովկասի նկատմամբ: Այն կրկին սահմանափակումներ մտցրեց Կասպից ծովով Իրանի հետ առևտուր անելու օտարերկրյա տերությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի համար: Թուրքիայի և Իրանի նկատմամբ ձեռք բերված ռազմական հաջողությունները թույլ տվեցին ռուսական իշխող վերնախավին իր ողջ ներուժն ուղղորդելու Հարավային Կովկասը Ռուսաստանի կազմ ընդգրկելու գաղափարին: Ռուսաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասում անխուսափելիորեն հանգեցրեց ռուս-իրանական ռազմական բախման և Իրանի կողմից սեփական տիրապետությունն այստեղ վերահաստատելու նոր փորձերի: Հարավային Կովկասն իրեն

⁵⁵ Մուրադյան Մ., Մինասյան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Երևան, 2005, էջ 238-242: Coene F., The Caucasus. An Introduction, London & N.York, 2010, pp. 125-127.

⁵⁶ Ст'ю Lambton A., Qajar Persia, Eleven Studies, London, pp. 9-22: Алиев С., История Ирана XX век, Москва, 2004, с. 29. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 400-408:

միակցելու ձգտումը Ռուսաստանի համար ռազմաքաղաքական կարևոր նշանակություն ուներ: Այս միջոցառումն ապահովելու էր վերջինիս սահմանների անվտանգությունը հարավից և նոր ուղիներ էր հարթելու դեպի արևելյան շուկաներ: Այսպիսով, XVIII դարի երկրորդ կեսից ընդհուպ մինչև XX դարի սկիզբ՝ Եկատերինա II-ից մինչև Նիկոլայ II, Ռուսական կայսրությունն ակտիվորեն սկսեց պայքարել հարավային (արևելյան) առևտրային, մասնավորապես սևծովյան և կասպյան ճանապարհների և չսառչող նավահանգիստ ձեռք բերելու ուղղությամբ:

Կասպիական ուղղությամբ կայսրության աշխարհաքաղաքական ծրագրերի կենսագործումը կարելի է պայմանականորեն բաժանել երկու փուլի: Առաջինը (XV-XVIII դդ.) նշանավորվեց Կասպից ծովի հյուսիսային և հյուսիսարևմտյան ափերին ամրապնդմամբ, այսինքն՝ ներկայիս Ռուսաստանի Դաշնությանը պատկանող շրջաններում: Երկրորդը՝ (XIX դ.) նշանավորվեց կասպիական հարավարևմտյան և արևելյան շրջանների միակցմամբ, հարավկովկասյան ու միջինասիական տարածքներում, որոնք պահպանվեցին մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը:

Ռուս-պարսկական առաջին պատերազմի ընթացքում արդեն իսկ պարզ դարձան Մեծ տերությունների կողմից Իրանի համար քաղաքական մրցապայքարի միտումները և այն, որ Ռուսաստանն Իրանում այսուհետև հանդես էր գալու ռազմաքաղաքական և տնտեսական իր դիրքերի հզորացման հարթակից:

1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին անցավ Իրանի կովկասյան տարածքների մեծ մասը (Վրաստանը՝ Շուրաֆյայի շրջանով, Իմերեթիան, Գուրիան, Մինգրեթիան, Աբխազիան, Դաղստանը, Ղարաբաղի, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունները, ինչպես նաև Արևելյան Հայաստա-

նի Լոռիի, Շամշադինի, Ջանգեզուրի և Շորագյալի գավառները, բացառությամբ Նախիջևանի և Երևանի խանությունների): Ռուսաստանը բացառիկ իրավունք ստացավ Կասպից ծովում ռազմական նավատորմ պահելու, որից Իրանը և յուրաքանչյուր այլ պետություն զրկվում էին⁵⁷: Գյուլիստանի պայմանագրով սահմանված ռուս-իրանական սահմանին վերաբերող որոշ հոդվածների ոչ հստակ ձևակերպումները երկու պետությունների միջև մշտական լարվածության առիթ դարձան, ինչից ակտիվորեն փորձում էր օգտվել Մեծ Բրիտանիան: Դեռևս 1814 թ. 1812 թ. կնքված պայմանագրի հիման վրա կնքվեց անգլո-իրանական նոր պայմանագիրը, որով Մեծ Բրիտանիան փորձեց ոչ միայն կասեցնել Ռուսաստանի հետագա առաջխաղացումը Կովկաս, այլ նաև Կենտրոնական Ասիա: Ըստ պայմանագրի՝ Իրանը պարտավորվում էր թույլ չտալ իր տարածքների վրայով եվրոպական որևէ պետության զորքերի շարժը դեպի Բրիտանական Հնդկաստան: Ավելին՝ շահը պարտավորվում էր Խորեզմի, Բուխարայի և Սամարղանդի կառավարիչներից նույնպես համապատասխան պարտավորություններ ձեռք բերել: Պայմանագրի երրորդ հոդվածի համաձայն՝ Ռուսաստանի և Իրանի միջև սահմանները պետք է որոշվեին ոչ միայն Իրանի, Ռուսաստանի համաձայնությամբ, այլև Մեծ Բրիտանիայի⁵⁸:

Թեև Գյուլիստանի պայմանագիրը գոյություն ունեցավ

⁵⁷ Трактат заключенный в Гюлестане, 12 октября 1813 г., Договоры России с Востоком, политические и торговые, собрал и издал Т. Юзефович, СПб, 1869, с. 208-214: Appendix V, Treaty of Gulistan between Persia and Russia, dated 12st October 1813, Collection of Treaties, Engagements and Sanads. Relating to India and Neighbouring Countries, Compiled by C.U. Aitchison, vol. X, Calcutta, 1892, pp. X-XIII.

⁵⁸ Treaty Concluded with the Shah of Persia for Adjustment of the Term of Definitive Treaty of 1812, dated 25-th November 1814, Collection of Treaties, Engagements and Sanads. Relating to India and Neighbouring Countries, Compiled by C.U. Aitchison, vol. X, Calcutta, 1892, pp. 53-56.

ավելի քան քսան տարի, սակայն գործնականում արտացոլում էր այն քաղաքական անհավասարակշռությունը, որն արդեն իսկ ձևավորվել էր պայմանագրի ստորագրման պահին: Նշված պայմանագիրը ոչ այլ ինչ էր, քան զինադադար, քանի որ այդ մշուշոտ համաձայնությունն իր մեջ կրում էր դիվանագիտական բարդությունների և նոր պատերազմի սաղմերը: Երկրորդ ռուս-իրանական պատերազմի (1826-1828թթ.) արդյունքում 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի հաշտության պայմանագրով հստակեցվեց Ռուսաստանի և Իրանի միջև սահմանը Արաքս գետով⁵⁹: Ռուսաստանի տիրապետությունն էր հաստատվում նաև նախկինում գրավված տարածքների վրա: Իրանցիները, կենտրոնանալով պայմանագրով սահմանված ռազմատուգանքի և տարածքային կորուստների վրա, ժամանակին չգնահատեցին Ռուսաստանին ընձեռած տնտեսական և քաղաքական այն զիջումները, որոնք շուրջ մեկ դար կարևոր և շրջադարձային դեր խաղացին Իրանի քաղաքական պատմության մեջ:

Ռուսաստանի քաղաքական և տնտեսական հետաքրքրություններն Իրանի նկատմամբ հատկապես ակտիվացան Ղրիմի պատերազմում (1853-1856 թթ.) կրած ծանր պարտությունից հետո: Սև ծովում նավատորմ պահելու իրավունքից զրկված Ռուսաստանը, որի դիրքերը բավականին թուլացան Եվրոպայում, իր հավակնություններն ուղղեց դեպի Կենտրոնական Ասիա և ղաջարական Իրան: Իրանը դիտարկելով իր կենսական շահերի ոլորտներից մեկը՝ Ռուսաստանը հաստատակամորեն սկսեց քայլեր ձեռնարկել Կասպից ծո-

⁵⁹ Трактат заключенный в Туркменчае, 10 февраля, 1828 г., Договоры России с Востоком, собрал и издал Т. Юзефович, СПб, 1869, с. 214-227: Appendix VI, Treaty of Turkmanchai between Persia and Russia, dated 21st February 1828, Collection of Treaties, Engagements and Sanads. Relating to India and Neighbouring Countries, Compiled by C.U. Aitchison, Calcutta, 1892, vol. X, pp. XIV-XXXI.

վում գերիշխող դիրք գրավելու և Բրիտանական Հնդկաստանի, Պարսից ծոցի հետ առևտուրն Իրանի վրայով դեպի Ռուսաստան շրջելու ուղղությամբ:

Կենսական նշանակություն ձեռք բերեց նաև ամբողջ Կովկասի վերջնական միակցումը Ռուսաստանին: 1857-1861 թթ. ընթացքում Ռուսաստանին միացվեց նաև Հյուսիսային Կովկասը՝ Չեչնիան, Դաղստանը, ապա Հյուսիսարևմտյան Կովկասը⁶⁰: Կովկասի միացումով Ռուսաստանը համեմատաբար չեզոքացրեց ներքին և արտաքին լարվածության օջախները Հարավում, որտեղ բախվում էին Ռուսաստանի, Բրիտանիայի և Օսմանյան կայսրության շահերը: Շուրջ երեսուն տարի ձգվող կովկասյան պատերազմի ավարտը բարձրացրեց Ռուսաստանի միջազգային վարկանիշը: Թիկունքում ունենալով հարաբերականորեն կայուն կովկասյան տարածաշրջան՝ Ռուսաստանը զարգացրեց իր նվաճողականությունը Կասպից ծովից արևելք՝ դեպի Կենտրոնական Ասիա, և ամրապնդեց դիրքերն Իրանում⁶¹: Ռուսաստան-Մեծ Բրիտանիա հակասությունների բովանդակությունն ընդլայնվեց: Ռուսաստանին հաջողվեց վիճարկել տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի գերակայությունը:

Հստակ սահմաններ Իրանի և կենտրոնասիական թուրքմենական հողերի միջև չկային, դրանք չկային նաև Ռուսաստանի և կենտրոնասիական խանությունների միջև: Քաղաքական անկայունությունը և տնտեսական հետամնացությունը բախտորոշ նշանակություն ունեցան Կենտրոնական Ասիայի տնտեսական և քաղաքական առումով ոչ կենսունակ պետությունների և միմյանց միջև անընդմեջ պատերազմող տոհմացեղային միավորների համար:

⁶⁰ Покровский Н., Кавказские войны и имамат Шамиля, 2-ое издание, Москва, 2009, с. 530-540.

⁶¹ История внешней политики России, вторая половина XIX в., Золотухин М., Мелихов Г., Рыбаченко И., Москва, 1997, с. 68.

1864-1895 թթ. ընկած ժամանակահատվածում Ռուսաստանի արտաքին քաղաքական ուղեծրում ձևավորվեց հստակորեն սահմանված «միջինասիական ուղղությունը»: XIX դարի երկրորդ կեսին թափ հավաքող ռուսական արդյունաբերական խոշոր բուրժուազիան, որը նոր հումքային և սպառողական շուկաների կարիք ուներ, սկսեց մեծ հետաքրքրություն ցուցաբերել կենտրոնասիական բնական հարստությունների, հատկապես բամբակի նկատմամբ⁶²: Անհրաժեշտ է նշել, որ դեպի Միջին Ասիա Ռուսաստանի առաջխաղացման կարևոր գործոններից էր աշխարհագրականը: XVI դ. Սկսած՝ Աստրախանի խանության միակցումով Ռուսաստանն իր հարավարևելյան մատույցներում դուրս էր գալիս տափաստանային գոտի, որը ձգվում էր Վոլգայի գետաբերանից մինչև Ալթայ և փաստացի չուներ բնական արգելքներ, որոնք ի վիճակի կլինեին պաշտպանելու ռուսական պետության սահմանները և առևտրական ճանապարհները: Քաղաքական նոր զարգացումներին զուգընթաց, Ռուսաստանում առաջ եկան նաև բազմաթիվ նախագծեր, տարատեսակ գիտական հրատարակություններ, որոնք հիմնավորում էին Ռուսաստանի և ասիական պետությունների միջև կապերի ընդլայնման անհրաժեշտությունը⁶³:

Համեմատաբար կարճ ժամանակահատվածում (1865-1873 թթ.) Ռուսաստանին միակցվեցին հսկայածավալ Կոկանդի, Բուխարայի և Խիվայի խանությունները: 1867 թ. Թաշքենդ կենտրոնով հիմնվեց Թուրքեստանի նահանգը (գեներալ-նահանգապետությունը)⁶⁴: 1869 թ. Ռուսաստանի և Իրանի միջև կնքված համաձայնագրով թեև Ռուսաստանն իր

⁶² Տե՛ս Մուրադյան Մ., Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 400-449:

⁶³ История внешней политики России, вторая половина XIX в., նշվ. աշխ., էջ 89-90:

⁶⁴ Волков И., Религиозные аспекты переселенческой политики Царизма в Туркестанском крае: 1867-1917 гг., Бишкек, 2007, с. 4-5.

ազդեցության գոտին սահմանեց մինչև Ատրեկ գետը և պարտավորվում էր այդ տարածքում չստեղծել ոչ մի ռազմական հենակետ, այդուհանդերձ շարունակեց իր առաջխաղացումը: 1881 թ. Ռուսաստանն ավարտեց Ախալ-Թեքե օազիսի գրավումը: Հիմնվեց Ռուսաստանի Անդրկասպյան նահանգը՝ Աշխաբադ կենտրոնով⁶⁵: Առաջ եկավ ռուսական նոր տարածքների և Իրանի հյուսիսարևելյան նահանգների միջև սահմանագոտու հստակեցման հարցը⁶⁶: 1881 թ. դեկտեմբերի 21-ին Թեհրանում կնքվեց ռուս-իրանական համաձայնագիրը, որով Իրանի հետ Ռուսաստանի սահմանը հաստատվեց Ատրեկ գետի հոսանքից վերև (Կասպից ծովի արևելյան ափերից՝ Հասան-Ղուլի նեղուցից)՝ մինչև Հիրի-Կուլ լեռնաշղթան: Համաձայնագրի հավելյալ գաղտնի հոդվածով Ատրեկն իրանական կողմի խնդրանքով մինչև 1886 թ. պետք է մնար որպես չեզոք գոտի: 1881 թ. համաձայնագրում տեղ գտան նաև ռուս-իրանական տնտեսական համագործակցությանը, ինչպես նաև սահմանագոտու ջրային պաշարների օգտագործմանը վերաբերող հատուկ կետեր: Իրանական Խորասան նահանգի հյուսիսարևելյան մասը համաձայնագրի կնքման պահին անմիջապես չէր միանում Ռուսաստանի միջինասիական տարածքներին և բաժանվում էր թուրքմենական ցեղերով բնակեցված Ատեկի և Մերվի օազիսներով, և կողմերը պարտավորվում էին իրենց ազդեցությունը չտարածել Մերվի և Ատեկի վրա⁶⁷: Այդ իսկ պատճառով համաձայնագրում չամրագրվեց Ռուսաստանի և Իրանի սահմանագծից արևելք մինչև Աֆղանստան ընկած սահմանը՝ դառնալով ռուս-բրիտանական դիվանագիտական առճակատման

⁶⁵ Халфин Н., Присоединение Средней Азии к России (60-90 годы XIX в.), Москва, 1965, с. 353.

⁶⁶ Մանրամասն տե՛ս Маннанов Б., Из истории русско-иранских отношений конца XIX-начало XX века, Ташкент, 1964, с. 24-36.

⁶⁷ Նույն տեղում, էջ 73-76:

պատճառ⁶⁸: 1884 թ. մայիսին Ռուսաստանն ավարտին հասցրեց Կենտրոնական Ասիայի միակցման գործընթացը՝ վերջնականապես միացնելով նաև Մերվն ու Ատեկը⁶⁹: Հաստատվելով Թուրքմենստանում՝ կայսրությունը զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը նաև իրանական էտրասան նահանգում:

Այսպիսով, Ռուսաստանն առաջին անգամ ընդհուպ մոտեցավ Իրանի արևելյան սահմաններին, բրիտանական ազդեցության ոլորտում գտնվող Աֆղանստանին՝ մեծացնելով Հնդկաստանի համար «ռուսական սպառնալիքի» բրիտանական մտավախությունները: Այս բոլորի տրամաբանական արդյունքը ռուս-բրիտանական հարաբերությունների սրումն էր: Նրանց թեժ մրցակցության օբյեկտ դարձան նաև Աֆղանստանը և Իրանի արևելյան շրջանները: 1884-1885 թթ. անգլո-ռուսական հակամարտությունը Կենտրոնական Ասիայում հասավ իր գագաթնակետին և ռուս-պարսկական սահմանների խնդիրն ընդհանուր առմամբ միահյուսվեց Պամիրում ռուս-աֆղանական սահմանային հարցի հետ⁷⁰: 1885 թ. երկու պետությունները բախվեցին Քուշքայում՝ խախտելով դեռևս 1873 թ. ձեռք բերված Աֆղանստանի ամբողջականության պահպանման վերաբերյալ անգլո-ռուսական համաձայնագիրը⁷¹: Սակայն նույն 1885 թ. սեպտեմբերի 10-ին Թուրքմենստանից արևելք ռուս-աֆղանական սահմանագատման մասին Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև արձանագրություն ստորագրվեց, որով սահմանը հաստատվեց

⁶⁸ Մանրամասն տե՛ս **Хвостов В.**, История дипломатии в новое время (1871-1914), т. 2, Москва, 1963, с. 202-204.

⁶⁹ Firuz Kazem-Zadeh, Russian and Britain in Persia, 1864-1914. A Study of Imperializm, New Haven and London, 1968, pp. 87-91: Хвостов В., նշվ. աշխ., էջ 202:

⁷⁰ **Жигалина О.**, Великобритания на Среднем Востоке XIX-начало XX в.. Анализ внешнеполитических концепций, Москва, 1990, с. 117-119.

⁷¹ **Мальтатули П.**, Внешняя политика императора Николая II (1894-1917), Москва, 2013, с. 140-141.

Ջուլֆաղարի կիրճից Թեջեն գետով (Հերիռուդ) մինչև Ամուդարյա (Բուխարայի խանություն)⁷²:

Խուսափելով Մեծ Բրիտանիայի հետ քաղաքական նոր բարդություններից՝ Ռուսաստանը վերանայեց Միջին Արևելքում հետագա առաջխաղացման մարտավարությունը և նախապատվությունը սկսեց տալ տնտեսական ներթափանցմանը: Իրանական խնդրում ռուս-բրիտանական խորացող հակամարտությունը հնարավորինս կարգավորվեց 1888 թ. ձեռք բերված պայմանավորվածությամբ, որով Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան պարտավորվեցին հարգել Իրանի տարածքային ամբողջականությունը⁷³: Ռուս-իրանական վերջնական սահմանն ամրագրվեց 1893 թ. մայիսի 27-ի Ռուսաստանի և Իրանի միջև կնքված համաձայնագրով, որի V հոդվածով հստակեցվեց նաև ռուս-իրանական սահմանի մնացած հատվածը՝ Բաբա-Դերմեզից մինչև Աֆղանստան⁷⁴: Ռուսաստանի և Իրանի միջև սահմանի հարավարևելյան ուղղությունը հաստատվեց մինչև Ջուլֆաղարի կիրճը, որտեղ խաչվում էին Ռուսաստանի, Աֆղանստանի և Իրանի սահմանները մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը:

Ռուս-իրանական սահմանագատման ընթացքում հաշվի չէին առնվում սահմանամերձ շրջաններում ապրող բնակչության էթնո-կրոնական և կենսակերպային առանձնահատկությունները: Առանձին ազգություններ և էթնիկ միավորներ ներկայացնող բնակչությունը հայտնվեց սահմանի տարբեր կողմերում, ինչը բնականաբար իր ազդեցությունն ունեցավ նրանց քաղաքական, տնտեսական և մշակութային հետագա զարգացման վրա:

Շուրջ մեկ դար ձգվող ռուս-իրանական սահմանների

⁷² Сборник договоров России с другими государствами 1856-1914 гг., под редакцией Е.А. Адамова, Москва, 1952, с. 264-266.

⁷³ АВПРИ, ф. 144, “Персидский стол”, оп. 488, д. 603, л. 54.

⁷⁴ Кулагина Л., Россия и Иран (XIX-начали XX в.), Москва, 2010, с. 93.

ձևավորման գործընթացի արդյունքում Իրանն ու Ռուսաստանը սահմանակից դարձան ոչ միայն Հարավային Կովկասում, այլև Կասպից ծովի արևելյան շրջաններում: Ռուս-իրանական ջրային և ցամաքային սահմանն անցնում էր Կասպից ծովից արևմուտք՝ Արաքսի երկայնքով, Մուղանի տափաստանով դեպի Թալիշյան լեռներ, իսկ Կասպից ծովից արևելք՝ Ատրեկ գետով և Թուրքմենախորասանյան լեռներով: Չնայած նրան, որ ռուս-իրանական սահմանն ամրագրվեց մի շարք իրավական փաստաթղթերում, Ռուսաստանի և Իրանի միջև սահմանագոտու մի շարք խնդիրներ վերջնականապես չկարգավորվեցին: Դա են վկայում այն պայմանագրերը և սահմանագատող հանձնաժողովները, որոնք տեղ գտան նաև խորհրդրդա-իրանական հարաբերություններում⁷⁵:

XIX դ. 90-ական թթ. Ռուսաստանը նաև բրիտանական ազդեցության գոտում գտնվող Պարսից ծոց ներթափանցելու գործնական քայլեր ձեռնարկեց՝ իր դիրքերն ամրակայելու միջոցներից կարևորելով առևտուրը, նավագնացությունը, նավահանգստի, ռազմածովային հենակետի և նոր հյուպատոսությունների հիմնումը: Առաջնահերթություն էր դիտվում նաև ապագայում անդրիրանական երկաթգծի տարբերակով դեպի վերոնշյալ շրջաններ առևտրաշրջանառություն ապահովելու և Կասպից ծովից Պարսից ծոց նավթային խողովակաշարի կառուցման անհրաժեշտությունը⁷⁶:

Նպատակ ունենալով սահմանափակել ռուսական հավակնությունները՝ Մեծ Բրիտանիան դեռևս 1898 թ. ռուսական կառավարությանն առաջարկում էր Կ.Պոլսից մինչև Պեկին ազդեցության գոտիների բաժանման ընդհանուր համաձայնագիր կնքել: Այս համատեքստում բրիտանացիների

⁷⁵ Նույն տեղում, էջ 94-95:

⁷⁶ Մանրամասն տե՛ս **Նավասարդյան Ն.**, Ռուսաստանի քաղաքականությունն Իրանում (XIX դարի վերջ- XX դարի սկիզբ), ատենախոսություն, Երևան, 2013 թ., էջ 57-73:

կողմից իրատեսական էր համարվում Միջին Արևելքը, մասնավորապես Իրանը, ազդեցության գոտիների բաժանելու փոխզիջումային տարբերակը, որով Իրանի հյուսիսային շրջանները կլինեին ռուսական ազդեցության ոլորտում, իսկ հարավայինը՝ բացառապես բրիտանական⁷⁷: Սակայն մինչև 1905 թ., այսինքն՝ մինչև ռուս-ճապոնական պատերազմում պարտություն կրելը և կայսրությունում ծագած հեղափոխությունը, Ռուսաստանի քաղաքական նպատակներն Իրանում դրսևորվում էին հստակ ձևաչափով. «Պահպանել Պարսկաստանի ամբողջականության և անձեռնմխելիության սկզբունքը, չհավակնել տարածքային նոր ձեռքբերումների, թույլ չտալ որևիցե երրորդ պետության գերակայությունն այստեղ՝ աստիճանաբար ենթարկելով այն ռուսական ազդեցությանը: Առանց խափանելու այդ երկրի ինչպես արտաքին ինքնուրույնության սկզբունքները, այնպես էլ ներքին կարգը՝ Ռուսաստանի հիմնական խնդիրն է նրան դարձնել հնազանդ և օգտակար: Այլ կերպ ասած՝ հզոր գործիք Ռուսաստանի ձեռքբերում՝ պարսկական լայնածավալ շուկան պահպանելու և ընդլայնելու նպատակով»⁷⁸:

Այսպիսով, ընդլայնելով իր սահմանները դեպի հարավ՝ Ռուսաստանն առաջնային էր դիտարկում Կովկասում և Կենտրոնական Ասիայում ռազմավարական դիրքերի ամրապնդումը՝ նպատակ չհետապնդելով իրանական պետականության փլուզումը, որի փոխարեն անմիջապես կարող էին ի հայտ գալ Մեծ Բրիտանիայի գաղութային միավորները: Տնտեսապես և ռազմաքաղաքական առումով թույլ Իրանը, որտեղ Ռուսաստանն ակտիվորեն սկսեց ամրապնդել իր քաղաքական և տնտեսական դիրքերը, վերածվեց միջանկյալ գոտու՝ նվազեցնելով շփման եզրերն ու տարածքային սահ-

⁷⁷ Նույն տեղում:

⁷⁸ АВПРИ, «Персидский стол», ф. 144, оп. 488, д. 603, л. 54-55.

մանակցությունը Բրիտանական Հնդկաստանի, Օսմանյան և Ռուսական կայսրությունների միջև:

**THE GEOPOLITICAL PRIORITIES OF RUSSIAN EMPIRE
IN IRAN: FORMATION OF THE RUSSIAN-IRANIAN BORDER
(XIX CENTURY)**

Navasardyan Nazeli

(Institute of Oriental Studies of NAS RA)

In article is briefly discussing the process of formation of Russian-Iranian border during entire 19th century and the geopolitical role of Iran as a “mediate” (a buffer) state in the outskirts of the British India and Ottoman Empire, where Russia, aiming to gain both geo-political and geo-economical positions. From the beginning of the XIX century the Russian Empire strengthened its political and economic penetration towards the East, particularly Iran. To enhance the engagement in the Black Sea-Caspian region Russian Empire initiated a comprehensive military program of primary importance to the security of the southern borders of the empire. For challenging with geopolitical rival Great Britain and approving economic and political supremacy in Iran the realization of which passed territorial conquests. The final fusion of the Caucasus and Central Asia regions to Russia Empire became one of the Russian East policy components, which went through a complicated military situation: from one hand with the Russian-Persian wars, on the other Russian-British sharp acute conflicts, which is known in historiography as “The Great Game”.

Պ.գ.թ. Փաշայան Արարս
(ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ)

ԻՐԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ
1991 Թ. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Գտնվելով իսլամական աշխարհի հարևանությամբ՝ Ադրբեջանն անկախություն ձեռք բերելուց հետո թիրախ դարձավ արտաքին իսլամական ներթափանցումների համար: Ադրբեջանում իրենց քաղաքական և կրոնական ազդեցությունը տարածեցին մի շարք ուժային կենտրոններ, առաջին հերթին՝ Իրանը, Թուրքիան, Ծոցի սուննիական որոշ արաբական միապետություններ, մասնավորապես Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Քաթարը (որոնց ազդեցությունն Ադրբեջան ներթափանցեց առաջին հերթին Դաղստանի ու Չեչնիայի, նաև Կենտրոնական Ասիայի միջոցով):

Արտաքին ազդեցությունները (թուրքական-սուննիական, իրանական-շիայական և արաբական-սալաֆիական) նպաստեցին ոչ միայն Ադրբեջանում, այլև ընդհանրապես ԽՍՀՄ մուսուլմանական շրջաններում իսլամական վերածննդի խթանմանը և որոշակիորեն վերածնեցին «ազգային իսլամը»: Կրոնական հոսանքներն Ադրբեջան էին ներթափանցում ամենատարբեր ճանապարհներով⁷⁹:

Իրանի և Թուրքիայի համար նորանկախ Ադրբեջանը դարձավ ոչ միայն ավանդական մրցակցության դաշտ, այլև շիա և սուննի իսլամի քարոզչության պարարտ հող, իսկ սուննիական առանձին միապետությունների համար՝ սուննի-սալաֆիականության արտահանման երկիր: Թե՛ Թեհրանը,

⁷⁹ Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus, Carnegie Endowment, http://carnegieendowment.org/files/022212_transcript_poli-islam-12.pdf

թե՛ Անկարան և թե՛ Ծոցի որոշ պետություններ Ադրբեջանում սկսեցին ներդնել ֆինանսական ծավալուն միջոցներ՝ մզկիթների նորոգման և կառուցման, կրթական և մշակութային հաստատությունների ստեղծման, կրոնական կադրերի պատրաստման, ինչպես նաև ադրբեջանցի փախստականներին օգնելու համար՝ Ադրբեջան ուղարկելով սեփական քարոզիչներին, զուգահեռաբար կազմակերպելով ադրբեջանցի ուսանողների կրթությունն արտերկրում: Միջազգային իսլամական կենտրոնները հատկապես ակտիվ էին մարգինալ և սոցիալապես անապահով խավերի շրջանում:

1989-2010 թթ. Ադրբեջանում կառուցվել է 595 մզկիթ, որից 150-ը՝ օտար դրամաշնորհներով: Նրանցից 63-ը բաժին է ընկնում Քուվեյթին, 24-ը՝ Թուրքիային, մնացածները՝ Սաուդյան Արաբիային, Իրանին, Քաթարին և այլն⁸⁰:

Փաստորեն անկախությանը հաջորդած շրջանում արտաքին իսլամական ներթափանցումների հարցում Ադրբեջանը կարծես վարում էր «բաց դռների» քաղաքականություն, որին նպաստեցին անկախությանը հաջորդած շրջանին բնորոշ քաղաքական վայրիվերումները, ղարաբաղյան պատերազմը, փախստականների խնդիրը և այլն⁸¹: Անկախությունից հետո Ադրբեջանի դռները բացվեցին իսլամական երկրների առաջ, որոնց հետ Ադրբեջանը համագործակցում էր ամենատարբեր, այդ թվում՝ կրոնական ոլորտում:

Ադրբեջանի անկախացումից հետո Իրանը ցանկանում էր ամեն գնով իր ազդեցությունը տարածել Ադրբեջանում՝ հաշվի առնելով այս երկրամասի հետ ունեցած պատմական, կրոնական և մշակութային դարավոր կապերը: Ադրբեջանի հետ հարաբերությունների սերտացումը հնարավորություն

⁸⁰ Юнусов А., Исламская палитра Азербайджана. Институт Мира и Демократии, Баку, 2012, с. 13.

⁸¹ Heyat F., The Resurgence of Islam in a Post-Soviet Azerbaijan, Azerbaijan in the World, Azerbaijan Diplomatic Academy, 2008, 1 (13).

կտար Իրանին նվաճելու նոր շուկա, շահեկանորեն համագործակցելու Կասպից ծովի խնդիրների շուրջ, ի դեմս Ադրբեջանի ձեռք բերելու քաղաքական նոր դաշնակից՝ ուժեղացնելով շիայական տանդեմը, տարածաշրջանի համար Թուրքիայի հետ ունեցած մրցակցության մեջ առավելություն ձեռք բերելու, սերտացնելու կապերն Ադրբեջանի իրանական ծագում ունեցող ժողովուրդների՝ թալիշների ու թաթերի հետ, տարածելու խոմեյնիական⁸² գաղափարները, նաև հակազդելու Իրանական Ադրբեջանի (Ատրպատականի) հարցի շուրջ շահարկումներին⁸³:

Նշենք, որ դեռևս ԽՍՀՄ տարիներին Ադրբեջանում առանձին շրջաններ (թե՛ շիայական, թե՛ սուննիական) աչքի են ընկել որոշակի կրոնամոլությամբ, ինչպես, օրինակ, Մասալին, Բիլասուվարը, Ջալիլաբադը, Լենքորանը: Այստեղ նամազ էին անում, կրոնական հիշարժան օրերն էին նշում, ինչպես օրինակ՝ Աշուրան, սակայն բացառապես տներում, երբեմն էլ սրբատեղիներում՝ գաղտնի կերպով: Այս միտումը տարածված էր նաև Ղազախի, Թովուզի, Շամխորի, Եվլախի,

⁸² Խոմեյնիզմի հիմնադիրն այաթոլա Ռուհոլլա Խոմեյնին (1902-1989 թթ.) է, որի ղեկավարությամբ Իրանում 1979 թ. իրականացվեց իսլամական հեղափոխություն: Խոմեյնիզմի հիմքում ընկած է շիայական աստվածապետության կամ *velāyat-e faqih*-ի (բառացի՝ ֆակիհների իշխանություն) գաղափարը, որը ենթադրում է պետության օրենսդրական, գործադիր և դատական համակարգերում իսլամական աստվածաբան-իրավագետների՝ ֆակիհների իշխանությունը և շարիաթական նորմերի ներդրումը, որը կապահովի սոցիալական արդարություն: Պետության մեջ պետք է գործադիր նաև ընտրովի խորհրդարան, որի անդամները կարող են լինել թե՛ աշխարհիկներ, թե՛ կրոնավորներ: *Velāyat-e faqih*-ի գաղափարը դարձավ 1979 թ. Իրանի սահմանադրության հենքը: Այն արտացոլված է Խոմեյնիի *Hokumat-e Islami. Velayat-e faqih* («Իսլամական կառավարում. ֆակիհների իշխանությունը») գրքում, որը հրատարակվեց 1971 թ.:

⁸³ Кулиев Э., Азербайджан: иранский вектор религиозного возрождения, *Центральная Азия и Кавказ*, 2005, 5 (41), с. 165.

Դիվիզիոնի և Քուսարի շրջաններում⁸⁴:

Արդեն Խորհրդային Միության վերջին տարիներին Ադրբեջանում նկատվեց իսլամական գործոնի որոշակի ակտիվացում, ինչը հիմնականում պայմանավորված էր 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությամբ, որի առաջնորդը՝ իմամ Խոմեյնին (1902-1989 թթ.), Ադրբեջանում որոշակի ժողովրդականություն էր վայելում: Արդեն 1980-ականների սկզբներին կրոնասեր շրջանակներ ունեցող Բաքվում, Նախիջևանում և Լենքորանում (այսպես կոչված՝ իսլամական գոտում) բավական ակտիվ էին իրանցի քարոզիչները: Մասնավոր տներում ու փոքր խանութների ապակիներին կարելի էր տեսնել իմամ Խոմեյնիի լուսանկարները և իսլամական շիայական այլ խորհրդանիշներ⁸⁵:

Ադրբեջանի անկախությունից հետո, չնայած ամենատարբեր ոլորտներում Իրանի հետ ձևավորված բազմակողմ համագործակցությանը, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ երկկողմ հարաբերություններում ի հայտ էին գալիս լարվածության օջախներ: Իրանը դիտարկվում էր որպես ոչ վստահելի գործընկեր, որը ոչ միայն ձգտում էր Ադրբեջանում տարածել իր կրոնական և քաղաքական ազդեցությունը, այլև համագործակցում էր Հայաստանի հետ այն պարագայում, երբ Ադրբեջանն ու Թուրքիան շրջափակման մեջ էին պահում Հայաստանը՝ Ղարաբաղյան հարցում ճնշումներ գործադրելու նպատակով:

Ադրբեջանում Իրանի կրոնական ազդեցությունն առավելապես ուժեղ էր 1990-ականների առաջին կեսին: Այս փուլում Իրանի համար ավելի հեշտ էր ներթափանցել և գործել

⁸⁴ Абасов А., Ислам в современном Азербайджане: образы и реалии. В сборнике Азербайджан и Россия: общества и государства, Москва, 2001.

⁸⁵ Полонский А., Ислам в контексте общественной жизни современного Азербайджана. Особенности мусульманского возрождения в Азербайджане, История, 1999, 28.

Ադրբեջանում՝ կապված անցումային շրջանի խնդիրների հետ: Նշված ժամանակահատվածում Ադրբեջանը, կարելի է ասել, հեղեղված էր իրանցի միսիոներներով, իրանական բարեգործական և կրոնական կազմակերպություններով: 1993 թ.-ից Ադրբեջանում ակտիվորեն գործում էր «Իմամ Խոմեյնիի բարեգործական հիմնադրամի» (Imam Xomeyni adina İmdad Komitəsi) մասնաճյուղը: Նշենք, որ 2001 թ. տվյալներով հիմնադրամն Ադրբեջանի տարածքում ունեցել է 145 գրասենյակ⁸⁶: 2005 թ. տվյալներով Իրանը նշված հիմնադրամի միջոցով մոտ 25 միլիոն դոլարի մարդասիրական օգնություն է տրամադրել Ադրբեջանին՝ օգնելով կարիքավոր մարդկանց, ուսանողներին, փախստականներին, գործազուրկներին և այլն: Հիմնադրամը գործել է Ադրբեջանի 19 քաղաքներում⁸⁷:

Սակայն արդեն 2014 թ. հունվարին «Իմամ Խոմեյնիի բարեգործական հիմնադրամը», այդ թվում՝ «Իմամ Ալի» բարեգործական հիվանդանոցը, դադարեցրին իրենց գործունեությունն Ադրբեջանում, քանի որ, ինչպես հայտարարեց իրանական կողմը, Ադրբեջանն այլևս չունի սոցիալական այնպիսի խնդիրներ, ինչպես անկախությունից հետո: Ադրբեջանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մոհսեն Փաքայենը նշեց, որ հիմնադրամը 20 տարվա ընթացքում Ադրբեջանում ծախսել է 43 միլիոն դոլար⁸⁸:

Հետանկախության շրջանում Իրանն աջակցում էր նաև իրանամետ կրոնաքաղաքական կառույցների ստեղծմանն ու գործունեությանը, որոնցից ամենահանգուցայինն Ադրբեջա-

⁸⁶ Valiyev A., Azerbaijan: Islam in a Post-Soviet Republic. Middle East Review of International Affairs, 2005, 9 (4).

⁸⁷ Кулиев Э., նշվ. աշխ., էջ 166:

⁸⁸ Imam Khomeini Relief Foundation Representation Closes in Azerbaijan (by Jafarov, Temkin), <http://www.trend.az> (28.01.2014).

նի իսլամական կուսակցությունն էր: Կառույցը ստեղծվել է 1991 թ. շիայական արմատական տրամադրություններով հայտնի Նարդարան ավանում: Առաջնորդն Ալի Աքրամ Ալին էր, ով աչքի էր ընկնում կրոնաքաղաքական պահպանողական հայացքներով, ծնունդով Նարդարանից էր: Կուսակցությունը գրանցվեց 1992 թ.: Այն, ըստ իր կանոնադրության և ծրագրերի, հավատարիմ էր ժողովրդավարական արժեքներին, կողմ էր այլ կուսակցությունների հետ համագործակցությանը, նաև ծրագրում էր ակտիվորեն մասնակցել երկրի հասարակական-քաղաքական կյանքին⁸⁹:

Ադրբեջանի իսլամական կուսակցությունն իրականում աչքի էր ընկնում իրանամետ կեցվածքով՝ իր վրա կրելով խոմեյնիզմի ազդեցությունը⁹⁰: Նրա գաղափարախոսության մեջ հստակ էին հակաամերիկյան, հակախրայելական և հակասիոնիստական շեշտադրումները⁹¹: Կուսակցությունը թյուրքականությունը համարում էր միասնական իսլամական ազգին՝ Ումմային հակասող գաղափարախոսություն, իսկ ազգայնականությունը դիտարկվում էր իսլամի միաստվածության սկզբունքը ոտնահարող երևույթ՝ բազմաստվածություն (շիրք)⁹²: Կուսակցությունը հետամուտ էր պետության և հասարակության մեջ իսլամական արժեքների ամրապնդմանն ու քաղաքական գործընթացներին կրոնական գործիչների մասնակցությանը՝ համարելով, որ իսլամը կարող էր կառուցողական դեր խաղալ Ադրբեջանի անկախ պետության կայացման գործում: Ղարաբաղյան հարցի լուծումը, ըստ ԱԻԿ-ի,

⁸⁹ Гасанов Р., Ислам в общественно-политической жизни современного Азербайджана, Социологические исследования, 2003, 3.

⁹⁰ Гаджи-Заде Хикмет, Свобода совести в Азербайджане. Центральная Азия и Кавказ, 1998, 16.

⁹¹ Նույն տեղում:

⁹² Полонский А., նշվ. աշխ.:

հնարավոր էր միայն ռազմական ճանապարհով: Կուսակցությունն Ադրբեջանում լայն հեղինակություն չէր վայելում:

Արդեն Հեյդար Ալիևի նախագահության առաջին շրջանում Ադրբեջանի ազգային անվտանգությունը փորձեց հակազդել իրանական կրոնական և քաղաքական քարոզչությանը: 1995 թ. Ադրբեջանի իշխանությունները կասեցրին Ադրբեջանի իսլամական կուսակցության գործունեությունը՝ Իրանի հետ ունեցած կապերի, լրտեսության և այնտեղից ֆինանսավորվելու մեղադրանքով: Լուրջ հակահարված հասցվեց Ադրբեջանում Իրանի աջակցությամբ ստեղծված «Հիզբալլահին», որին 2000 թ. իշխանությունները մեղավոր համարեցին ադրբեջանցի հայտնի գիտնական Ջիա Բունիաթովի սպանության (1997 թ. փետրվար) մեջ⁹³: 2001 թ. փակվեցին իրանական բոլոր մեդրեսեները⁹⁴:

Հարկ է նշել, որ Ադրբեջանում Իրանի կրոնական և քաղաքական ազդեցության նվազման կամ չեզոքացման համար, բացի պետության իրականացրած կոշտ մեթոդներից, այլ պատճառներ ևս կային, նախևառաջ՝ ադրբեջանական հասարակության առավելապես աշխարհիկ բնույթը, հասարակության շրջանում խոմեյնիզմի գաղափարների ոչ լայն ժողովրդականությունը, Բաքվի թուրքամետ և արևմտամետ կողմնորոշումը, իրանական կրոնական ազդեցության դեմ «պաշտոնական իսլամի» հակազդեցությունը, որին, բնականաբար, աջակցում էր պետությունը⁹⁵:

Չնայած այն հանգամանքին, որ Ադրբեջանի ազգային

⁹³ «Հիզբալլահը» Ջիա Բունիաթովի նկատմամբ մահվան դատավճիռ էր սահմանել դեռևս 1996 թ.՝ նրան մեղադրելով իսրայելական Մոսադի գործակալ լինելու և Ադրբեջանում սիոնիզմը տարածելու մեջ:

⁹⁴ International Crisis Group (2008) Azerbaijan. Independent Islam and the State. IGG Europe Report 191.

⁹⁵ Балджи Байрам, Судьбы шиизма в постсоветском Азербайджане. Этнографическое обозрение, 2006, 2, с. 84.

անվտանգությանը հաջողվեց չեզոքացնել Իրանի կրոնական և քաղաքական ազդեցությունը, ամեն պարագայում իրանական գործոնը շարունակում է այսօր էլ որոշակի դերակատարություն ունենալ Ադրբեջանի հասարակական-քաղաքական և կրոնական դաշտում: Իրանը կարողացավ Ադրբեջանում հենք ստեղծել շիայական չափավոր և արմատական կրոնա-քաղաքական ակտիվության և ընդհանրապես «քաղաքական իսլամի» զարգացման համար: Շիայական արմատական տրամադրությունների հենակետն ու կենտրոնը դարձավ Ապշերոնի թերակղզում գտնվող Նարդարան ավանը (նշենք, որ, բացի Ապշերոնից, շիայական ավանդույթներն ամուր հիմքեր ունեն նաև հարավային շրջաններում և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում)⁹⁶:

Ադրբեջանի հասարակական որոշ շրջանակներում շարունակում են մեծ հեղինակություն վայելել իրանցի որոշ այաթուլաներ, ինչպես, օրինակ, Իրանի հոգևոր առաջնորդ, ազերիական ծագմամբ Ալի Խամենեին⁹⁷: Ադրբեջանում ոչ պակաս հեղինակություններ էին նույնպես ազերիական ծագմամբ և արմատական հայացքներով աչքի ընկնող այաթուլաներ Մուհամեդ Ֆազիլ Լենքորանին (1931-2007 թթ.), Ջավադ Թաբրիզին (1926-2006 թթ.) և այլք: Շատ ու շատ ադրբեջանցիներ իրենց կրոնական կենտրոնը համարում են Իրանը:

Իրանական քարոզչությունն Ադրբեջանում շարունակում է տարածվել նաև իրանական լրատվամիջոցներով: Ասվածի ապացույցը քարոզչական նշանակություն ունեցող իրանա-

⁹⁶ Dobroslawa W.-M., *Competing Islamic Traditions an Anthropological Perspective*. Doctoral Dissertation. Faculty of Philosophy. Jagiellonian University, Cracow, 2010, p. 85.

⁹⁷ *Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus*, Carnegie Endowment, http://carnegieendowment.org/files/022212_transcript_poli-islam-12.pdf

կան «Սահար II» հեռուստաալիքի հեռարձակումն է ադրբեջաներենով ու թալիշերենով: Հեռուստաընկերությունը պարբերաբար անդրադառնում է Ադրբեջանում առկա էթնիկ ու դավանական, մարդու իրավունքների և այլևայլ խնդիրների: Հեռարձակվում է մասնավորապես հարավային՝ թալիշական շրջաններում⁹⁸:

2014 թ. հունվարի 15-ին Բրյուսելում ՆԱՏՕ-ի կենտրոնականյան կատարած այցի ժամանակ Իլհամ Ալիևը նշել է, որ Իրանի հետ Ադրբեջանի հարաբերությունները վերջին շրջանում բարելավվել են, քանի որ Իրանը նախկինի պես չի միջամտում Ադրբեջանի ներքին գործերին (հավաքագրում Ադրբեջանի քաղաքացիներին, պատրաստում Իրանում և այդուհետև ուղարկում Ադրբեջան՝ լրտեսելու կամ ծայրահեղ կրոնականություն քարոզելու նպատակով): Ամեն պարագայում Իրանի կրոնաքաղաքական ազդեցությունն Ադրբեջանում այլևս իրողություն է: Այն նպաստեց նաև Ադրբեջանում շիայական քաղաքացիական ակտիվության զարգացմանը: Ասվածի ապացույցներից է նաև «Դավանանքի պաշտպանության և խղճի ազատության կենտրոն»-ի (DEVAMM) տնօրեն, Բաքվի Ջումա մզկիթի նախկին իմամ, իրավապաշտպան Իլքար Իբրահիմօղլուի գործունեությունը, ով հոգևոր կրթություն է ստացել Իրանում⁹⁹:

Իրանը, ըստ ամենայնի, կշարունակի ապագայում ևս օգտագործել շիայական գործոնը թե՛ իրանական ծագում ունեցող էթնիկ փոքրամասնությունների և թե՛ Ադրբեջանի սոցիալական ու քաղաքական դաշտում:

⁹⁸ Kotecha Hema, Islamic and Ethnic Identities in Azerbaijan: Emerging trend and tensions. A Discussion Paper. OSCE. Baku, 2006, p. 28.

⁹⁹ Մանրամասն տե՛ս Փաշայան Ա., Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Երևան, 2014, էջ 119-124 :

IRAN'S RELIGIOUS INFLUENCE ON AZERBAIJAN SINCE INDEPENDENCE 1991

Pashayan Araks

(Institute of Oriental Studies of NAS RA)

The paper deals with the nuances of Iranian religious influence on Azerbaijan since 1991. After gaining its independence several Islamic movements began in Azerbaijan that was stimulated by external religious (especially, Iranian Shi'a, Turkish Sunni and Arab Salafite) factors. The Azeri authorities did their best to neutralize the external religious treats. They prevented a penetration into Azerbaijan of Iranian Shi'a influences, as well as Khomeinism. Both Heydar Aliyev and his son Ilham have been successful enough in keeping national security away from the new challenges, maintaining by this a secular nature of their regime. The state tried to assist the institutes representing the "official Islam" against "non-official islamic" especially Iranian religious penetrations. Despite the fact, Iran managed to stimulate "political Islam" and Shia activism in Azerbaijan. Tehran has resources to use Shia factor in social, ethnic and political fields in Azerbaijan.

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ

Հայաստանի անկախության հռչակումից հետո (1991 թ. սեպտեմբերի 21-ին) Իրանի Իսլամական Հանրապետությունն առաջիններից էր, որ ընդունեց Հայաստանի անկախության փաստը (1991 թ. դեկտեմբերին): ՀՀ առաջին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանն այսպես է ներկայացնում ստեղծված իրավիճակը. «Արտգործնախարարության և գործող նախագահի համար էլ հայ-իրանական հարաբերություններն ունեցել են առաջնային և ռազմավարական նշանակություն, ինչով էլ պայմանավորված էր իմ՝ որպես արտգործնախարարի, առաջին այցը ԻԻՀ»¹⁰⁰:

Այցի ընթացքում՝ 1992 թ. փետրվարի 9-ին, Թեհրանի «Էսթեղլալ» հյուրանոցում ստորագրվեց հռչակագիր Հայաստանի և Իրանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ¹⁰¹: Նույն օրը ստորագրվեց մեկ այլ փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև «Հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը», որով կողմերը հավաստում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատելու մասին՝ խարսխվելով երկուստեք տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի և միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքների:

¹⁰⁰ Հարցազրույց ՀՀ արտաքին գործերի նախարար (1991-1992 թթ.) Րաֆֆի Հովհաննիսյանի հետ, մայիսի 3, 2013, Երևան:

¹⁰¹ Հռչակագիր ԻԻՀ-ի և ՀՀ-ի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 239:

վրա: Վերոհիշյալ փաստաթղթերի ստորագրումից մեկ ամիս անց Թեհրանում և Երևանում բացվեցին դեսպանատներ՝ համաձայն նախօրոք պայմանավորվածության¹⁰²:

Հատկանշական է, որ Հայաստանի ղեկավարությունը շատ արագ կողմնորոշվեց, և հայ-իրանական հարաբերություններին տրվեց ամենաբարձր մակարդակը, ինչն ապացուցվում է ՀՀ արտգործնախարարի՝ Իրան կատարած առաջին այցելությամբ, ինչպես նաև ստեղծված հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նախագահի պաշտոնը վստահվեց Գագիկ Հարությունյանին, ով այդ պահին զբաղեցնում էր երկրի փոխնախագահի պաշտոնը: Այսինքն՝ «...հայ-իրանական հարաբերությունները գտնվում էին փոխնախագահի ամենօրյա ուշադրության կիզակետում: Փոխնախագահի մակարդակով Իրանի հետ աշխատանքների համակարգումը հարաբերություններին բարձր պետական նշանակություն էր տալիս: Իրանական կողմից աշխատանքները համակարգում էր ԻԻՀ կենտրոնական բանկի նախագահը»¹⁰³:

Սակայն, միանշանակ պարզ էր, որ անհնար էր զարգացնել հարաբերություններն Իրանի հետ՝ չունենալով ցամաքային ճանապարհ: Մինչ այդ բոլոր տեսակի այցերը տեղի էին ունենում՝ կամ օգտվելով այլ երկրների օդային ծառայություններից կամ այլ երկրների տարածքը հատելով: Երկու երկրները ձեռնամուխ եղան հայ-իրանական ճանապարհի կառուցմանը և ամենակարևորը՝ Արաքս գետի վրա կամրջի կառուցման ծրագրին:

Երկար քննարկումներից ու բանակցություններից հետո ի վերջո հայկական կողմը գտավ խնդրի թեկուզ և ժամանակավոր լուծման եղանակը. դա լաստակամուրջն էր: «Այո՛, Հա-

¹⁰² Դիվանագիտական բանբեր, Վենետիկ, 1993, էջ 19:

¹⁰³ Հարցազրույց ՀՀ փոխնախագահ, հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (1992-1996 թթ.) Գագիկ Հարությունյանի հետ, հուլիսի 12, 2013, Երևան:

յաստան-Իրան կամրջի ծրագիրը դարձել էր Հայաստանի համար կենսական խնդիր, - նշում է Գագիկ Հարությունյանը: Սկզբնական շրջանում որոշվեց ժամանակավորապես օգտագործել պանտոնային նավակամուրջ, որը պետք է ծառայեր երկու ամիս, սակայն իրականում այն ծառայեց երկու տարի, և Իրանի հետ առևտուրը այդ պանտոնային կամրջով խիստ կարևոր էր»¹⁰⁴: ԱՊՀ զինված ուժերի գլխավոր հրամանատար Եվգենի Շապոշնիկովը կարգադրեց 3,5 միլիոն ռուբլի տրամադրել Հայաստանին՝ Մեդրիում՝ Արաքս գետի վրա, մեկ նավակամուրջ տեղադրելու համար: Սակայն կողմերը գիտակցում էին, որ այն լուրջ ժամանակավոր բնույթ կարող է կրել, և հենց այդ պահից սկսած՝ աշխատանքներ էին տարվում հիմնական կամրջի կառուցման ուղղությամբ:

1992 թ. փետրվարի 28-ին առաջին անգամ պաշտոնական այցով Երևան ժամանեց ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին: Նրան ընդունեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, և Վելայաթին նախագահին հանձնեց ԻԻՀ այցելելու պաշտոնական հրավեր: Վելայաթին առաջին հերթին ժամանել էր միջնորդական առաքելությամբ՝ ղարաբաղյան թնջուկի խաղաղ կարգավորման հնարավորություններն ուսումնասիրելու և քաղաքական նախաձեռնությունների շուրջ փոխըմբռնման եզրեր գտնելու նպատակով: Իրանի միջնորդությամբ փետրվարի 27-ից եռօրյա զինադադար էր, որի ընթացքում կողմերն իրականացրել էին դիակների փոխանակություն: Նախարարն այդ հանդիպման ժամանակ, ի թիվս այլ հարցերի, կարևորեց նաև Իրանի համար Հայաստանի՝ որպես իր անմիջական և հուսալի հարևաններից մեկի հետ լուրջ հարաբերություններ ստեղծելու անհրաժեշտությունը: Նա հանդես եկավ առաջարկությամբ, որով հավաստում էր Իրանի պատրաստակամությունը՝ միջնորդական

¹⁰⁴ Նույն տեղում:

առաքելությանը ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հնարավոր եզրերն ուսումնասիրելու համար: Այդ քննարկումների ժամանակ իրանական կողմը խոստացավ օժանդակել շրջափակման մեջ գտնվող Հայաստանին՝ իր տարածքով աշխարհի հետ հաղորդակցվելու համար: Իրանի արտաքին գերատեսչության ղեկավարը շեշտեց, որ Հայաստանին այլևս չեն սպառնա ցամաքային շրջափակումները¹⁰⁵:

Թեհրան վերադառնալով՝ ԻԻՀ արտգործնախարարը Մեհրաբադ օդանավակայանում տեղի ունեցած ճեպագրույցի ժամանակ տեղեկացնում է, որ «...շուտով Իրանը հակամարտության գոտի է ուղարկելու հատուկ բանազնացի՝ տեղում համադրություններ անելու և հարցերը կարգավորելու համար»: Վելայաթին մի նամակ է հղում ՄԱԿ-ի նախագահ Բուդրոս-Բուդրոս Ղալիին և տեղեկություններ հայտնում Իրանի միջնորդական առաքելության կազմավորման մասին: Նամակում ԻԻՀ արտգործնախարարը մտահոգություն է հայտնում բախումների տարածման և հակամարտության արմատավորման խնդրի շուրջ և առաջարկում, որ ՄԱԿ-ը պահանջի հակամարտող կողմերի հարևան երկրներից և հզոր տերություններից ձեռնպահ մնալ կողմերին զենք մատակարարելու հարցում: Վելայաթին նամակում նշում է նաև, որ «Իրանը ՄԱԿ-ի հետ ժամանակին լավ համագործակցություն է ծավալել Աֆղանստանի ճգնաժամի և Պարսից ծոցի տագնապի վերացման հարցերի շուրջ և հուսով է, որ Ղարաբաղի հարցում ևս Հայաստանի և Ադրբեջանի միջև ձեռք կբերվի հրադադար հաստատելու պայմանավորվածություն, քանի որ

¹⁰⁵ Բայբուրդյան Վ., Իսլամական Հեղափոխության քառորդ դարը: Քաղաքակրթությունների երկխոսություն՝ Հայաստան-Իրան, «Միհր», 2004, 2 (46), էջ 37:

Իրանը ցանկանում է տարածաշրջանում տեսնել կայուն և հարատև խաղաղություն»¹⁰⁶:

Հարկ է նշել, որ դեռևս 1991 թ. վերջերին ԻԻՀ Ազգային անվտանգության խորհուրդը քննարկման թեմա էր դարձրել Լեռնային Ղարաբաղի խնդիրը, և ԱԽ-ի ներկայացուցիչները հանգել էին այն եզրակացության, որ Իրանը պետք է անմիջական մասնակցություն ունենա խնդրի կարգավորման գործընթացում:

1992 թ. ԻԻՀ փոխարտգործնախարար Մահմուդ Վայեզին մի քանի անգամ այցելեց տարածաշրջան, երկու անգամ եղավ Ղարաբաղում, հանդիպումներ ունեցավ ԼՂ ղեկավարության հետ, ինչն աննախադեպ քայլ էր:

1992 թ. մայիսի 6-8-ը ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը պաշտոնական այցով մեկնեց ԻԻՀ, որտեղ պետք է քննարկվեին ինչպես հայ-իրանական հարաբերություններում առկա խնդիրների և դրանց լուծման ճանապարհների հարցերը, այնպես էլ նախատեսված էր մի կարևոր հանդիպում. հանդիպելու էին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յաղուբ Մամեդովը, ովքեր Հ. Ռաֆսանջանիի միջնորդությամբ փորձելու էին զինադադարի շուրջ համաձայնության գալ:

Սակայն Իրանի ջանքերն ապարդյուն անցան զինադադարի շուրջ համաձայնության հասնելու գործում, քանզի Ղարաբաղյան ճակատում տեղի ունեցան լուրջ խմորումներ, ինչի արդյունքում ազատագրվեց Շուշին, որի մասին պարզ դարձավ հենց փաստաթղթերի ստորագրման պահին: Իրանի միջնորդական առաքելությունը տապալվեց:

Հայաստանի ղեկավարությունը, հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը և ստեղծված քաղաքական իրավիճակը, Իրանի՝ տարածաշրջանի հզոր տերություն-

¹⁰⁶ Բադայան Գ., Հայ-իրանական հարաբերությունները 20 տարեկան են, Երևան-Թեհրան, 2012, էջ 46-47:

ներից մեկի հետ հարաբերություններին տվեց ռազմավարական նշանակություն: Սակայն ամեն ինչ այդքան հեշտ չէր. Արցախյան ճակատում ձեռք բերված հաջողությունները բավական լուրջ լարվածություն էին առաջացրել իրանական հասարակության որոշ շրջանակների մոտ, որոնք էլ հանդես էին գալիս կտրուկ և հաճախ բավական կոշտ գործելաոճով: Իրանի թյուրքախոս բնակչությունը կառավարությանը մեղադրում էր, որ նորաստեղծ Հայաստանի հետ առավել ջերմ հարաբերություններ են հաստատվել, և պակաս կարևորություն է տրվել դավանակից Ադրբեջանին: Սակայն, մեր կարծիքով, դա չի համապատասխանում իրականությանը, քանզի Իրանը հավասար մոտեցում է ցուցաբերել երկու հարևանների նկատմամբ: Այլ հարց է, որ Ադրբեջանը գերադասել է հարաբերությունները խորացնել Թուրքիայի հետ՝ երկրորդական մոտեցում ցուցաբերելով Իրանի հանդեպ: Ադրբեջանը նաև գտնում էր, որ անկախ իր վերաբերմունքից, պաշտոնական Թեհրանը միանշանակ պետք է սատարի դավանակից «եղբորը» և, չստանալով այն, ինչ ակնկալում էր, մեկը մյուսի հետևից գործեց սխալներ, որոնք Իրանի կառավարությանը մեղմ ասած անհանգստացնում էին:

Արցախյան ճակատում արձանագրած պարտությունները և ռազմարվեստում իրենց ապիկարությունը քողարկելու նպատակով Ադրբեջանը մի շարք մեղադրանքներ հնչեցրեց Իրանի հասցեին և նեղացած կեցվածք որդեգրելով՝ սառեցրեց հարաբերությունները: Բայց դա բավական չէր, Ադրբեջանին անհանգստացնում էր Իրանի և Հայաստանի հարաբերությունների բարձր մակարդակը, ինչն էլ դրդեց նրան ձեռնարկելու մի շարք սադրանքներ՝ այդ հարաբերությունները ստվերելու նպատակով: Առաջինը թերևս Իրանի թյուրքախոս բնակչության՝ ՀՀ դեսպանատան վրա հարձակվելու սադրանքն էր: «Ղարաբաղի պատերազմի ժամանակ մահմեդական բնակչության կողմից այն ընկալվում էր իբրև «խալա-

մական հողերի գրավում՝ անհավատների կողմից», – նշում է ԻԻՀ-ում ՀՀ առաջին դեսպան Վահան Բայբուրդյանը: Դեսպանությունն աշխատում էր Թեհրանի ազերիական համայնքի կողմից պարբերաբար կրկնվող ապառնալիքների պայմաններում: Իսկ 1993 թ. նույնիսկ տեղի ունեցավ հարձակում դեսպանության շենքի վրա: Ազերիներից բաղկացած ամբոխը քարկոծեց և հրավառ նյութեր շարտեց դեսպանատան շենքի վրա և սպառնում էր հաշվեհարդար տեսնել դիվանագետների հետ: Իրանի քաղաքացիներ հանդիսացող էթնիկ ազերիների նման գրգռվածության պայմաններում բնականաբար և՛ մենք, և՛ իրանական կողմը հարկադրված էին երկկողմանի հարաբերություններն իրագործել առանց ավելորդ աղմուկի ու ցուցադրումների»¹⁰⁷:

Իրանի պետական կառույցները բնականաբար անմիջապես պաշտպանական ուժեր ուղարկեցին՝ դեսպանատան անձնակազմի անվտանգությունն ապահովելու համար, սակայն սա մի ժեստ էր նաև ցույց տալու, որ հայերի առաջխաղացումներն Արցախյան պատերազմում միանշանակ չէին ընդունվում Իրանի հասարակության, ինչու չէ նաև ղեկավարության որոշ շերտերի կողմից:

ՀՀ ԱԳՆ-ն հրավիրեց ԻԻՀ դեսպանին, որպեսզի վերջինս բացատրություն տա ստեղծված իրավիճակի մասին և ՀՀ ԱԳՆ-ն արտահայտեց իր դժգոհությունը:

Քաղաքական հաջորդ և թերևս առավել վտանգավոր խնդիրը ծագեց 1994 թ. մարտի 17-ին: ԻԻՀ-ի դիվանագետները, որոնց պաշտոնական թիվը 32-ն էր, Մոսկվայից իրենց ընտանիքներով C-130 ռազմական բեռնատար օդանավով շտապում էին հայրենիք՝ Նովրուզի տոնակատարությանը մասնակցելու համար: Վրացական կողմի երթակարգավարները օդանավը հանձնեցին Գյանջայի օդանավակայան, վեր-

¹⁰⁷ Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-98թթ.) Վահան Բայբուրդյանի հետ, ապրիլի 13, 2012, Երևան:

ջիններս իրանական ինքնաթիռը պետք է ուղարկեին Հայաստան, սակայն կանխամտածված ուղարկեցին Ղարաբաղի կողմը՝ շատ լավ հասկանալով, թե ինչ վտանգ է սպառնում ռազմական ինքնաթիռին: Ղարաբաղի երկնքում գնդակոծվեց իրանական ինքնաթիռը, և զոհվեցին դիվանագետներ: Իրանական կողմը բնականաբար արձագանքեց և այն էլ բավական կոշտ: Անգամ հայտարարվում էր պետական մակարդակով, որ կխզեն հարաբերությունները Հայաստանի հետ, եթե Հայաստանն անհրաժեշտ բացատրություններ չտա այս խնդրի կապակցությամբ: Հայ-իրանական հարաբերությունների վրա իրավամբ կախվեց դամոկլյան սուրը: ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն անմիջապես հրավիրեց Անվտանգության խորհրդի նիստ՝ քննարկելու ստեղծված իրավիճակը. որոշվեց Իրան ուղարկել հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նախագահ, փոխնախագահ Գագիկ Հարությունյանին, ով բավական մեծ կապեր ուներ Իրանի քաղաքական վերնախավի հետ, և նա պետք է փորձեր տեղում քննարկել ստեղծված իրավիճակը: «Ես հրավիրեցի մասնագետների, գրեթե երկու օր ու գիշեր աշխատեցինք «դոսյե» պատրաստելու վրա, և այն մոտավորապես 250-էջանոց մի թղթածրար էր, որտեղ հավաքվել էին տարբեր փաստաթղթեր: Այս ամենով հանդերձ՝ ինձ մոտ առաջացել էր մոտ 15 հարց, որոնց պատասխանները ես չունեի: Եվ ես փորձեցի հարցին մոտենալ ոչ թե մեղանչողի դիրքերից, այլ առաջին հերթին պարզել, թե ինչ է իրականում տեղի ունեցել»¹⁰⁸:

Հայկական պատվիրակությունը ժամանեց Թեհրան, և ստեղծված խնդրի կապակցությամբ քննարկում ծավալվեց ԻԻՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, ով

¹⁰⁸ Հարցազրույց ՀՀ փոխնախագահ, հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (1992-96 թթ.) Գագիկ Հարությունյանի հետ, հուլիսի 12, 2013, Երևան:

այսօր ԻԻՀ նախագահն է, Հասան Ռոուհանիի հետ: Գագիկ Հարությունյանը «իր հետ ուներ դիսպետչերական ծառայությունների ծայնագրությունների վերծանությունը, որտեղ պարզորոշ կերպով երևում էր, թե Ադրբեջանի սադրանքներով է իրանական ինքնաթիռը կործանվել, - պատմում է Գ. Առաքելյանը»¹⁰⁹: Իրանական կողմն էլ շատ լավ հասկացավ, որ դա եղել է ազերիների սադրանքը:

Եվ որ այս կնճռոտ խնդիրն իսկապես հարթվեց, փաստում է այն հանգամանքը, որ 1994 թ. նոյեմբերին երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների մակարդակը հավատարմատարից բարձրացվեց՝ հասցվելով արտակարգ և լիազոր դեսպանի, որը խոսում է հարաբերությունների կայուն և դինամիկ զարգացման մասին: Դեռևս 1992 թ. դեկտեմբերի 22-ին Թեհրանում բացվել էր Հայաստանի Հանրապետության դեսպանատունը, սակայն այն գործում էր հավատարմատարի մակարդակով՝ ի դեմս Վահան Բայբուրդյանի: 1994 թ. նոյեմբերի 9-ին Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնն առաջինը ստանձնեց իրանագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Բայբուրդյանը, իսկ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնն առաջինը ստանձնեց Համիդ Ռեզա Նիքբար Էսֆահանին:

Երկու երկրների միջև իսկապես փորձ էր արվում հարաբերությունների մակարդակը դնելու նոր հարթության վրա: 1994 թ. նոյեմբերի 27-ին Թեհրան այցելեց ՀՀ տրանսպորտի և հեռահաղորդակցության նախարար Հենրիկ Քոչինյանը: Այցի ընթացքում ստորագրվեց է մի պայմանագիր Արաքս գետի վրայով ընդհանուր սահմանային կամրջի կառուցման

¹⁰⁹ Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար (2009-) Գրիգոր Առաքելյանի հետ, նոյեմբերի 2, 2012, Թեհրան, ԻԻՀ:

մասին: «Արդեն պանտոնները շարքից դուրս էին եկել, - նշում է Գ. Հարությունյանը, - և ամեն վերանորոգման համար նվազագույնը պետք էր լինում հինգ ժամ, իսկ նավակամրջի փակվելու դեպքում Երևանում մոտավորապես 5%-ով գների ցատկ էր գրանցվում»¹¹⁰:

Այս նույն ընթացքում իրականացվում էին ակտիվ աշխատանքներ, որպեսզի գտնեին համապատասխան կամրջի մետաղակառուցվածք և ֆինանսներ՝ այդ կամուրջը կառուցելու համար: Դեռևս 1992 թ. մայիսին կամրջաշինության հայ մասնագետները Վորոնեժի կամրջային մետաղակառուցվածքների գործարանում գտան 63,6 մ թռիչքով պատրաստի մետաղակոնստրուկցիաներ: Այդ ժամանակ Աբխազիայի տարածքով առանձին գնացքներ դեռևս գալիս էին դեպի Վրաստան և Հայաստան: Օգտվելով այդ հնարավորությունից փոքր եզրաչափերի մետաղակառուցվածքները (10 մ երկարությամբ) առանց դժվարության Սև ծովի ափեզրով հասան Հայաստան: Սակայն մեծ եզրաչափերի կառուցվածքների բարձրություններն այնպիսին էին (երկարությունը 21,3 մ, բարձրությունը՝ 4 մ, կշիռը՝ 21 տոննա, այդպիսիք 18 հատ էին), որ սևծովյան երկաթուղագծի Տուապսեի տեղամասի թունելներով տեղափոխելն անհնար էր: Միակ ճանապարհը Ադրբեջանն էր: Հայ կամրջաշինարարները խնդիրը փորձեցին լուծել անսովոր եղանակով: Նրանք որոշեցին օգտագործել նախկինում իրենց կապերը Վրաստանի շինարարների հետ և վերահասցեագրել առաքվող 370 տոննա կշիռ ունեցող մետաղյա հեծանները վրացական «Մոստ» ֆիրմային, որը

¹¹⁰ Հարցազրույց ՀՀ փոխնախագահ, հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (1992-96 թթ.) Գագիկ Հարությունյանի հետ, հուլիսի 12, 2013, Երևան:

գտնվում էր Թբիլիսիում: Խնդիրն էր հասցնել Վրաստան ու այնտեղից տեղափոխել Հայաստան¹¹¹:

Փաստորեն 1992 թ. մայիսին, մինչ Արցախյան ճակատում տեղի էր ունենում հայկական հողերի ազատագրման գործընթացը, հայ մասնագետները կարողանում են Հայաստանի համար կենսական և ռազմավարական նշանակություն ունեցող Հայաստան-Իրան կամրջի մետաղակառուցվածքն անցկացնել հենց Ադրբեջանի տարածքով:

Բացի նրանից, որ կամրջի կառուցման համար առկա էին ֆինանսական լուրջ դժվարություններ, անհրաժեշտ էր հաղթահարել նաև մետաղակառուցվածքների տեղափոխման ծրագիրը, կար նաև մեկ այլ և կրկին բավական լուրջ խնդիր: «Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը նամակ էր հղել Հ. Ռաֆսանջանիին, որը դարձավ ԻԻՀ Ազգային անվտանգության խորհրդի քննարկման հարց, - նշում է Գ. Հարությունյանը: - Այդ նամակը ես տեսել եմ, որտեղ բառացիորեն նշված էր. «Ավելի լավ է դուք զենք մատակարարեք Հայաստանին, բայց հրաժարվեք կամրջի կառուցման գաղափարից: Եթե դուք այդ կամուրջը կառուցեք, մեր հարաբերությունները առնվազն 100 տարի այլևս չեն վերականգնվի»: Այսպիսի խիստ պահանջներ էին դրվել իրանական կողմի առջև, և մեզ տեղեկացրին առկա փակուղային վիճակի մասին»¹¹²:

Այնուամենայնիվ, հաղթահարելով քաղաքական, նյութական, աշխարհագրական բոլոր խոչընդոտները, 1996 թ. հունվարի 9-ին տիտանական աշխատանքի արդյունքում բացվեց Մեղրու կամուրջը:

Հայաստան-Իրան հիմնական կամրջի շահագործումից

¹¹¹ Միրզաբեկյան Ժ., Ինչպես կառուցվեց Արաքս գետի վրայի կամուրջը Հայաստանի և Իրանի սահմանում, Երևան, 1996, էջ 77-80:

¹¹² Հարցազրույց ՀՀ փոխնախագահ, հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (1992-96 թթ.) Գագիկ Հարությունյանի հետ, հուլիսի 12, 2013, Երևան:

հետո Իրանը Հայաստանի համար հանդիսացավ Պարսից ծոցի, Հեռավոր Արևելքի, Հարավարևելյան Ասիայի երկրների բեռնափոխադրումների տարանցիկ ճանապարհ: Բեռնափոխադրումներն ավելացան մոտ 3-4 անգամ: Հայաստանում ակտիվորեն սկսեցին գործել հայ-իրանական 200-ից ավելի ձեռնարկություններ¹¹³: Շուտով ԻԻՀ-ն Հայաստանի արտաքին առևտրի մեջ գրավեց առաջին տեղը:

ԻԻՀ-ն կենսականորեն շահագրգռված էր Հայաստանին ավելի եռանդուն կերպով ընդգրկելու տարածաշրջանային իր քաղաքականության մեջ, ընդ որում՝ ոչ միայն երկկողմ, այլև բազմակողմ հարաբերությունների հիմքի վրա: Դրա վառ ապացույցը 1995 թ. ապրիլի 8-ին ստորագրված եռակողմ համագործակցության վերաբերյալ համատեղ հայտարարությունն է ԻԻՀ-ի, ՀՀ-ի և Թուրքմենստանի միջև:

Թե՛ Հայաստանի, թե՛ Իրանի քաղաքական գործիչները գիտակցում էին, որ ինչքան էլ երկուստեք սերտ լինեն հարաբերությունները, այնուամենայնիվ, Հայաստանի շուկան բավական փոքր է Իրանի համար: Երկարատև բանակցությունների արդյունքում նրանք եկան այն եզրակացության, որ անհրաժեշտ է նաև Վրաստանի միացումը Հայաստան-Իրան համագործակցությանը:

Իրան-Հայաստան-Վրաստան-Հունաստան առանցքի կարևորությունը շատ լավ գիտակցեց նաև Ադրբեջանը, որը սկսեց գործել՝ խոչընդոտելով այդ ծրագրի իրականացումը: Նրան այդ գործում մեծապես աջակցում էր Թուրքիան: 1997 թ. փետրվարին դրա մասին ՀՀ ԱԳՆ-ին տեղեկացնում է ԻԻՀ-ում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Վ. Բայբուրդյանը. «Երեկ ես հանդիպում ունեցա Թեհրանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Տրետյակովի հետ: Խոսակ-

¹¹³ Համառոտ տեղեկանք Իրանի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակի վերաբերյալ, 20.08.1998, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 5, գործ N 239:

ցության ժամանակ նա հայտնեց, որ Հեյդար Ալիևը ուժեղ ճնշում է գործադրել է. Շևարդնաձեի վրա, որպեսզի վերջինս հրաժարվի Վրաստանի մասնակցությունից Իրան-Հայաստան-Հունաստան-Վրաստան քառակողմ համագործակցությունից: Դեսպանի ասելով Վրաստանի նախագահին ընկրկել է այդ դեմարշի դիմաց՝ խոստանալով կատարել Ադրբեջանի կամքը, որը այդ համագործակցությունը մեկնաբանում էր որպես Ադրբեջանի և Թուրքիայի դեմ ուղղված քայլ»¹¹⁴:

Ի վերջո, ադրբեջանա-թուրքական քաղաքական գործիչներին հաջողվեց խաղից դուրս հանել նախատեսվող առանցքի սկզբունքային ֆիգուրներից մեկին՝ Վրաստանին, ինչի արդյունքում էլ չիրականացան մի շարք ծրագրեր:

Հատկանշական է, որ Հ. Ռաֆսանջանիի կառավարման տարիներին զգացվում էր երկուստեք ճանաչողական բնույթի գործելակերպ, ինչպես նաև խիստ արդիական էր Ղարաբաղյան խնդիրը, որի ժամանակ Իրանը փորձում էր վարել զգուշավոր քաղաքականություն: Նույնը նկատվում էր նաև հայկական կողմում: Հանրապետության առաջին տարիներին՝ Լ. Տեր-Պետրոսյանի օրոք, ակնհայտորեն բացակայում էին դիվանագիտական էլիտան և այն փորձառությունը, որ անհրաժեշտ էր շփվել իրանական կողմի հետ:

Այսպիսով, հայ-իրանական քաղաքական հարաբերությունները կարևոր են ինչպես Հայաստանի, այնպես էլ Իրանի համար:

• Երբ արևմուտքը մեղադրում է Իրանին մարդու իրավունքների, ազգային փոքրամասնությունների շահերի ոտնահարման մեջ, Իրանն արհեստավարժ ցուցադրում է այն բոլոր աշխատանքները, որոնք իրականացվել են հայ համայնքի համար:

• Համեմատաբար հզոր Հայաստանն Իրանին ձեռնտու

¹¹⁴ ՀՀ ԱԳՆ, ցուցակ 2, գործ N 167, համար 02.05, 5.02.1997:

է, որպէսզի վերջինս Կովկասում կարողանա դիմագրավել թուրք-ադրբեջանական մերձեցմանը և որպէս այլընտրանք՝ միշտ ձգտի Իրանի ներգրավվածությանը տվյալ տարածաշրջանում:

- Հիշատակության արժանի է այն, որ Իրանը մեծապէս ցանկանում է համագործակցել Ռուսաստանի Դաշնության հետ, ինչը Հարավային Կովկասում ակնհայտորեն հնարավոր է միմիայն Հայաստանի միջոցով և հայկական հողում:

- Իրանին ձեռնտու է նաև Հայաստանի առկա լարվածությունը և՛ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի հետ, քանզի Հայաստանի համար նախատեսվող բեռները Վրաստանից զատ փոխադրում է Իրանի տարածքով:

- Իրանական կողմն արդեն անթաքույց խոսում է նաև աշխարհի տարբեր վայրերում բնակվող իրանահայ լոբբիի մասին, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտակար լինել Իրանի համար:

ON THE ESTABLISHMENT OF POLITICAL RELATIONS BETWEEN ARMENIA AND IRAN

Iskandaryan Gohar

(Institute of Oriental Studies of NAS RA)

The Islamic Republic of Iran was among the first countries to recognize the independence of the Republic of Armenia in December 1991. Since the very beginning, Armenian-Iranian relations have had priority and strategic importance for Armenia. Upon the establishment of relations between Armenia and Iran, the two countries began to cultivate relations in the different development areas. In order to facilitate the trade relations, the countries decided to build a pontoon bridge on the

river Arax. In the meantime, Iran expressed its intention to play a mediation role in the Karabakh issue, but with no real effect.

Throughout the years the tensest period was probably 1994 when as a result of an Azerbaijani provocation an Iranian aircraft was shot down in Artshakh airspace. It seemed that the relations were going to be suspended, but the Armenian diplomats managed to present the real situation to Iranian authorities. The crisis was solved and moreover the relations between two neighboring countries were raised to a higher level, i.e. the countries started to be represented by Extraordinary and Plenipotentiary Ambassadors.

Амбарян Гагик
(Гюмрийский государственный
педагогический институт)

СИСТАН И БЕЛУДЖИСТАН- КОНФЛИКТОГЕННЫЙ РЕГИОН ИРАНА

Белуджистан - историческая область на северном побережье Индийского океана, расположенная на стыке регионов Ближний Восток и Индостан. Административно разделён на провинции, входящие состав сопредельных государств: Афганистана (Гильменд, Кандагар), Ирана (Систан и Белуджистан) и Пакистана (Белуджистан - Пакистан)¹¹⁵. Являющаяся автохтонным народом региона белуджи - иранский народ с традиционной кочевой культурой и развитым племенным делением, говорящий на языке северо-западной подгруппы иранской группы языков. Общая численность белуджей достигает до 10 миллионов, из которых от 1,5-2 миллионов проживают в Иране¹¹⁶. Как и многие разделённые народы, белуджи так - же борются за создание единого Белуджистана. Однако борьба белуджей многими акторами международной политики и заинтересованными странами региона используется в собственных целях.

Вдаваясь в краткий исторический экскурс, напомним, что в 17 веке совместными усилиями брагуйских и белуджских племён, в результате борьбы против Великих Моголов было создано Келатское ханство. Этот исторический период мало изучен и сейчас трудно сказать белуджи или брагуи играли главную роль в создании этого ханства. Тем не менее, период

¹¹⁵ Ванюков Д.А., Веселовский С.П., Передел мира. Непризнанные государства, Москва, 2011, стр. 198.

¹¹⁶ Белуджи-ru.wikipedia.org/wiki/

Келатского ханства рассматривается как часть истории Белуджистана. Правители Келата в течение многих лет боролись то с калхурами Синда, то с гильзаями Афганистана. Сами главы всегда находились под влиянием то правителей Ирана (Надир-шаха, например), то афганцев Кандагара вплоть до периода правления Мир Насир Хана - самого авторитетного главы Келата. Мир Насир Хан смог собрать вместе всех локальных сардаров под свою юрисдикцию и расширить территории ханства примерно до границ современной пакистанской провинции Белуджистан. С появлением голландцев, а потом и англичан в Персидском заливе значение Келатского ханства и белуджских территорий стало постепенно возрастать. Англичане рассматривали Белуджистан как плацдарм для экспансии в направлении Индии, Ирана, а также Афганистана. В 1839 году было заключено соглашение между британской миссией и Келатом. Оно обязывало белуджей гарантировать безопасность британских сил и транспортировок к афганской границе в обмен на сохранение суверенитета и границ белуджских территорий. С этого времени Белуджистан стал постепенно терять своё влияние в регионе. Когда влияние Великобритании распространилось ещё дальше на запад, о своих жизненных интересах вспомнила и Персия. С целью защиты своих интересов персы начали интенсивную работу в Белуджистане. Во время правления Насереддин-шаха и Реза-шаха велась активная борьба за подчинение белуджских племён центральному правительству Ирана. Большая часть Белуджистана до 1947 года считалась территорией Британской империи. Следует отметить, что разделение белуджских территорий произошло в конце XIX века, когда между Ираном, Афганистаном и Великобританией была достигнута договорённость об этом. В результате появились

Иранский, или Западный, Белуджистан и Британский (индо-пакистанский), или Восточный Белуджистан¹¹⁷.

После 1928 года, когда белуджские племена были подчинены иранским правительством, белуджи подняли несколько восстаний, которые из-за неорганизованности и предательств некоторых племён были жестоко подавлены. Яркими фигурами антишахских восстаний были сардары племён баракзаев и сардарзаев¹¹⁸. Есть один нюанс, который несколько осложняет интеграцию белуджей в жизнь Исламской Республики. Дело в том, что в отличие от 90% населения Ирана, исповедующего шиизм, белуджи – сунниты, как и большинство мусульман мира, в том числе, большинство жителей сопредельных Пакистана и Афганистана, где, к тому же, живёт множество их соплеменников¹¹⁹.

Расположенный на юго-востоке Ирана остан Систан-Белуджистан – самая бедная, неразвитая, малонаселённая, пустынная, но в то же время крупнейшая провинция Ирана расположенная на максимальном удалении сразу от всех экономических, промышленных и культурных центров Ирана, таких как Тегеран, Кум, Мешхед, Тебриз и другие. Плохо охраняется и 1100-километровая граница с Пакистаном и с Афганистаном, где белуджи вообще неуправляемы. Все это способствует разгулу политического экстремизма среди местного населения, искусно подогреваемого извне (достаточно вспомнить находящийся сегодня на слуху проект «объединенного Белуджистана»)¹²⁰. Мастера геополитической интриги, разыг-

¹¹⁷ Ванюков Д.А., Веселовский С.П., Передел мира. Непризнанные государства, стр. 199-201.

¹¹⁸ Белуджистан- ru.wikipedia.org/wiki/

¹¹⁹ Сергей Дерин, Белуджский сепаратизм в Иране. www.iran.ru/news/analytics/79737/Beludzhsy-separatizm-v-Irane.

¹²⁰ Там же.

рывая «белуджскую карту», мастерски используют политические амбиции верхушки племен. Более того, когда это необходимо, идет подогрев этих амбиций, активно вбрасываются «напоминания» о действительных и мнимых обидах, нанесенных белуджам официальным Тегераном. Ограничительные меры в культурной сфере, направленные на запрет пропаганды национализма и сепаратизма, подаются как попытки удушения самобытной культуры белуджей. Репрессивные меры против идеологов этого же национализма и сепаратизма подаются как преследования по конфессиональному признаку или же, как репрессии против «интеллигенции» белуджей.

Различные политические движения, выступавшие за отделение Систана и Белуджистана от Ирана, стали появляться еще в середине 20 столетия. Первый из них, был основан в 1964 году в Сирии неким Джума Хан Балочем «Белуджский освободительный фронт». Он с самого начала получал деньги из-за рубежа (в частности, Ирака и Египта), а в 1968 году поднял восстание, несколько лет бушевавшее, как в Иране, так и в белуджских районах Пакистана¹²¹. После Исламской революции 1979 года, в 80-е годы в Иране существовало так называемое Белуджское автономистское движение, представлявшее из себя повстанческую организацию под руководством Абдул Азиза Моллазаде и пользовавшуюся поддержкой иракского режима Саддама Хусейна, который в то время воевал с Исламской Республикой. По некоторым данным, иракское правительство потратило несколько десятков миллионов долларов на провоцирование белуджского движения в Иране. После окончания ирано-иракской войны участники движения

¹²¹ Антон Евстрапов, Главный источник ирано-пакистанской напряженности. www.iran.ru/news/analytics/92691/Glavnyy-istochnik-irano-pakistanskoj-napryazhennosti

эмигрировали в страны Персидского залива, что привело к распаду движения и его затуханию¹²². Однако в 2003 году на осколках «автономистов» под предводительством Абдолмалека Риги была образована антишиитская группировка «Джундалла» (с переводе с арабского - «солдаты Бога»), иначе именуемая Движением народного сопротивления Ирана, известная своими нападениями на иранских военных, полицейских и мирных граждан под предлогом борьбы с религиозной дискриминацией. База «Джундалла» расположена на пакистанской территории и ее численность оценивается по разным данным в 500-2000 бойцов¹²³. Уже спустя два года после своего основания «Джундалла» атаковала кортеж президента Ирана Махмуда Ахмадинежада, убив одного из его телохранителей. 16 марта 2006 года боевики перекрыли трассу в районе селения Тасуки и расстреляли 21 мирного жителя. 14 февраля 2007 года начинённая взрывчаткой машина была взорвана перед автобусом с военнослужащими Корпуса стражей исламской революции (КСИР), в результате чего погибло 18 и получили ранения 31 человек. Иранские службы безопасности в течение нескольких ближайших месяцев арестовали подозреваемых в совершении теракта, среди которых оказался 17-летний белудж Саид Канбарзехи. Несмотря на недопустимость в соответствии с международным правом вынесения и приведения в исполнение смертных приговоров в отношении несовершеннолетних преступников, иранские власти казнили Канбарзехи и его подельников. 17 февраля того же года, т.е. спустя всего 3 дня после первого теракта боевики «Джундаллы» устроили взрыв в школе для девочек.

¹²² Сергей Дерин, Белуджский сепаратизм в Иране. www.iran.ru/news/analytics/79737/Beludzhsky-separatizm-v-Irane

¹²³ Рустам Искандари, Иран: Новый этап перестройки современной системы международных отношений. ostkraft.ru/ru/analytics/275

На этот раз никто не погиб. Лидер «Джундаллы» взял на себя ответственность и за этот теракт.

13 июня 2008 года «Джундалла» похитила 16 иранских полицейских и вывезла их в Пакистан. В декабре выяснилось, что все они были убиты. Ещё 12 полицейских были убиты 25 января 2009 года. Одним из крупнейших терактов, организованных «Джундаллой» является серия взрывов в городе Пишине, недалеко от ирано-пакистанской границы 18 октября 2009 года. Первый взрыв произошёл недалеко от ворот конференц-зала, где должна была состояться конференция лидеров суннитской и шиитской общин Ирана. Второй взрыв был направлен против офицеров КСИР, который организовывал встречу религиозных лидеров, глав племён и старейшин. В результате теракта погибло около 50 человек, в том числе несколько высокопоставленных офицеров КСИР, в частности, заместитель командующего наземными частями КСИР генерал Нур-Али Шуштари и командующий КСИР в остане Систан-Белуджистан Раджаб Али Мохаммадзаде. Теракт в Пишине, в результате которого был нанесён столь болезненный удар по безопасности Исламской Республики, вынудил спецслужбы Ирана активизировать поиски лидера «Джундаллы» Абдольмалека Риги и 23 февраля 2010 года он был высажен с самолёта, следовавшего рейсом из Дубая в Бишкек. Есть версия, что Риги был передан Ирану Пакистаном. 24 мая 2010 года в Захедане был казнён старший брат Абдольмалека Риги Абдольхамид Риги, также участник «Джундаллы», который однако, оказавшись в заключении, осуждал младшего брата. 20 июня 2010 года был казнён и сам лидер «Джундаллы». Однако это не остановило деятельность группировки. 16 июля с интервалом в 20 минут произошло два взрыва в соборной мечети Захедана, повлекших гибель 27 человек. Джундалла называлась и в числе

возможных организаторов атак на иранских физиков-ядерщиков 28 ноября 2008 года. 14 декабря 2010 года два террориста-смертника взорвались в толпе шиитских верующих в портовом городе Чахбехар во время религиозной церемонии в день Ашура. Погибли 39 человек, в том числе, женщины и дети¹²⁴. Уничтожение братьев Риги и спецоперации против других членов «Джундаллы» уже в 2011 году ослабили её и она прекратила свою деятельность.

Официальный Тегеран всегда обвинял Запад в спонсировании этой террористической организации. Абдулмалик Рига и его брат выдали один из основных «секретов» своей структуры - связи со спецслужбами Соединенных Штатов. Несмотря на то, что официальный Вашингтон не комментирует данную информацию, американские СМИ начали своё собственное расследование. Так, американский телеканал ABC News в 2007 году показал репортаж о том, что Вашингтон финансировал иранских террористов «Джундаллы» из фондов, не контролируемых Конгрессом и президентом¹²⁵. А в 2008 году в экспертной среде прошла информация о вполне официальном выделении этой и некоторым другим группировкам, действующим против официального Тегерана, 400 миллионов долларов. Соответственно санкции Джорджу Бушу и его администрации удалось добиться от конгрессменов. Американские деньги «Джундалла» получала по большей части через иранских мигрантов в странах Персидского залива и в Европе. Поддержку террористов осуществляли не только США, но и Великобритания. Так, газета «Индепен-

¹²⁴ Антон Евстапов, Главный источник ирано-пакистанской напряженности. www.iran.ru/news/analytics/92691/Glavnyy-istochnik-irano-pakistan-skoj-napryazhennosti

¹²⁵ ABC news Exclusive: The secret war Against Iran. abcnews.go.com/blogs/headlines/2007/04/abc_news_exclus/

дент» сообщала о том, что в 2007 году британский спецназ осуществил ряд операций на территории иранской провинции Систан и Белуджистан. А в январе 2012 года в вашингтонском издании «Foreign Policy» вышла статья, в которой сообщалось о вербовке террористов «Джундаллы» агентами израильского Моссада¹²⁶. С осени 2013 года в Иранском Белуджистане активизировалась группировка «Джейш аль-Адль» («Партия справедливости»), которая устроила настоящую кровавую бойню на иранской погранзаставе, убив 14 пограничников и троих бойцов КСИР, а 6 февраля 2014 года боевики перейдя ирано-пакистанскую границу, похитили пятерых местных пограничников¹²⁷. 25 февраля стало известно о гибели одного из пограничников на территории Пакистана. Официальный Тегеран устами пресс-секретаря МИД страны Марзие Афхам обвинил Исламабад в неэффективной защите её западных границ, что приводит к таким последствиям¹²⁸. В последнее время активизировалась ещё одна террористическая организация - «Харакат Ансар Иран». Иранские власти в спонсировании этих организаций обвиняют американские, британские и израильские спецслужбы.

По мнению иранских властей белуджский сепаратизм в стране в основном обусловлен социально-экономическими причинами. С середины 1990-х Иран начал реализацию экономических проектов в провинции Систан и Белуджистан, в том числе и организацию свободной торгово-промышленной

¹²⁶ Антон Евстапов, Главный источник ирано-пакистанской напряженности. www.iran.ru/news/analytics/92691/Glavnyy-istochnik-irano-pakistanskoj-napryazhennosti

¹²⁷ Антон Евстапов, Год шиитской крови или конец Пакистана? www.politcom.ru/print.php?id=17196.

¹²⁸ Иран возложил на Пакистан ответственность за гибель своего пограничника. www.iran.ru/news/politics/9303/Iran-vozlozhil-na-Pakistan-otvetstvennost-za-gibel-svoego-pogranichnika

зоны Чахбехар, однако они пока не принесли значительных результатов. Также пока не реализован проект газопровода Иран-Пакистан (пакистанская ветка), построенный участок которого проходит через территорию этой провинции. Не был реализован и проект ирано-индийского газопровода по дну Аравийского моря «Чахбехар-Гуджарат», против которого выступили США¹²⁹. Планируется строительство железной дороги Керман-Захедан-Чахбехар, которая должна стать звеном в железнодорожной сети, соединяющей Переднюю Азию с Китаем и Индией. Согласованы планы по строительству железной дороги, соединяющей афганскую провинцию Бамиан и порт Чахбехар в остане Систан-Белуджистан. Иранское правительство надеется, что Белуджистан может стать зоной транзита между государствами Персидского залива и Центральной Азии, однако ухудшение экономической ситуации внутри страны и общемировые экономические проблемы несколько притормозили процесс осуществления этих планов. Предпринимаются усилия и в сфере безопасности. Иран развернул дополнительные воинские подразделения в Белуджистане, поручив координировать их действия КСИР, провёл учения в провинции и принял меры для примирения и устранения разногласий между шиитской и суннитской общинами Систана-Белуджистана. Кроме того, для поощрения желаний белуджей служить в рядах иранских вооружённых сил, был открыт новый учебный центр для сержантского состава в населённом белуджами и пуштунами городе Заболе на севере Систана-Белуджистана, на границе с Афганистаном. Было заявлено, что преимущество при по-

¹²⁹ Рустам Искандари, Иран: Новый этап перестройки современной системы международных отношений. III ostkraft.ru/ru/analitics/275

ступлении будет отдаваться выходцам из этой провинции¹³⁰. По мнению известного востоковеда Евгения Сатановского радикализм курдских и белуджских сепаратистов - залог их поражения. В условиях «большой игры», где инвестиции исчисляются десятками миллиардов, только организации и лидеры, способные создать устойчивый режим и контролировать захваченную территорию, имеют шанс на долгую жизнь. Курдские феодалы из кланов Барзани и Талабани смогли примирить собственные интересы с интересами «великих держав» и соседей. Белуджский феодал Акбар-хан Бугти, исламистская «Джундалла» и марксистская РПК - нет. Вывод: на территории, где проходят магистральные трубопроводы, шансы радикалов невелики. Слишком высоки ставки¹³¹.

SISTAN AND BALUCHESTAN-CONFLICTOGEN REGION IN IRAN

Hambaryan Gagik
(Gyumri State Pedagogical Institute)

Sistan and Baluchestan province in Iran is one of economically and politically unstable regions. Since the 60s of the 20th century there have existed separatist and terrorist organizations that are fighting with the Iranian authorities. In recent years an active terrorist organization “Jundullah” has been cooperating

¹³⁰ Сергей Дерин, Белуджский сепаратизм в Иране. www.iran.ru/news/analytics/79737/Beludzhsy-separatizm-v-Irane

¹³¹ Евгений Сатановский, Война на территории трубопроводов. Сепаратизм курдов и белуджей как проблема транзита энергоносителей, www.wprg.ru/archives/1615

with Al-Qaeda. It organized some high-profile terrorist attacks against the Iranian government including the one against former president M. Ahmadinejad. In economic terms Sistan and Baluchestan is one of the most backward provinces in Iran. In recent years Tehran has been implementing major economic projects trying to alleviate social tension in the region. Sistan and Baluchestan borders on Pakistan, which has its own interests in this Iranian province, which used to be divided Iran, Pakistan and Afghanistan.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՊԵՏԸ -----7

ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ -----20

ՀՀ-ՈՒՄ ԻԻՀ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳԾՈՎ
ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԽՈՍՔԸ -----23

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՈՒ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ -----25

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԻ ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ -----29

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XIII ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՎԱՐ-
ՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԴԱՐԵՀ II-Ի ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ -----44

ԿՈՍՏԻԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԱՐՅԱԽԻ ԱՌԱՋԱԶՈՐ ԳՅՈՒՂԻ XVII-XVIII ԴԱՐԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ -----50

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱԶԵԼԻ

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ. ՌՈՒՍ-ԻՐԱՆԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ (XIX ԴԱՐ) -----65

ՓԱՇԱՅԱՆ ԱՐԱՔՍ

ԻՐԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ
1001 թ. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԻՑ ՀԵՏՈՒ -----81

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԳՈՂԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ՇՈՒՐՁ -----91

ՀԱՄԲԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ
ՍԻՍՏԱՆ ԵՎ ԲԵԼՈՒՋԻՍՏԱՆ. ԻՐԱՆԻ ԿՈՆՖԼԻԿՏԱԾԻՆ
ՇՐՋԱՆ -----106

CONTENTS

THE PATRIARCH OF THE IRANIAN STUDIES IN ARMENIA -----7

THE INTELLECTUAL, SCIENTIST AND DIPLOMAT -----20

THE STATEMENT OF THE CULTURAL CONSULER
OF THE EMBASSY OF THE IRI -----23

THE MAIN CHRONOLOGY OF THE LIFE, SCIENTIFIC AND
WORKING ACTIVITIES OF VAHAN BAYBURTYAN -----25

THE BIBLIOGRAPHY OF THE PUBLISHED SCIENTIFIC WORKS
OF VAHAN BAYBURDYAN -----29

ARTICLES

KHORIKYAN HOVHANNES

THE ADMINISTRATIVE DIVISION OF XIII SATRAPY OF
ACHAEMENID PERSIA IN THE PERIOD OF DARIUS II -----44

KOSTIKYAN KRISTINE

HISTORY OF ARACHADZOR VILLAGE OF ARTSAKH IN XVII-XVIII
CENTURIES ACCORDING TO THE PERSIAN DOCUMENTS OF
THE MATENADARAN -----50

NAVASARDYAN NAZELI

THE GEOPOLITICAL PRIORITIES OF RUSSIAN EMPIRE IN IRAN:
FORMATION OF THE RUSSIAN-IRANIAN BORDER (XIX CENTURY) 65

PASHAYAN ARAKS

IRAN'S RELIGIOUS INFLUENCE ON AZERBAIJAN SINCE
INDEPENDENCE 1991 -----81

ISKANDARYAN GOHAR

ON THE ESTABLISHMENT OF POLITICAL RELATIONS BETWEEN
ARMENIA AND IRAN -----91

HAMBARYAN GAGIK

SISTAN AND BALUCHESTAN-CONFLICTOGEN REGION IN IRAN ---106

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՏՈՐ I

ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

(Ժողովածուն նվիրվում է պ.գ.դ., պրոֆ.
Վահան Բայբուրդյանի ծննդյան 80-ամյակին)

Խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 671
Ստորագրված է տպագրության՝ 28.12.2015 թ.:
Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, 7.5 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Handwritten text in the top right corner, possibly a signature or date.

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0465611

T 1028.33